

ԲԺ. Լ. ԱԼԼԱԶՎԵՐԴՅԱՆ  
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԱՄԱՌԱՅԻՆ** ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ  
ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ  
ՄԵԶ

613  
Վ-31

ՊԵՏՏՐԱՏ  
1 9 3 4

20 JUL 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Բժ. Լ. ԱԼԼԱԶԱՐԿՅԱՆ  
Վ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

613 պ.  
Ա-31

**ԱՄԱՌԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ  
ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ  
ՄԵԶ**

3436

180x  
30364

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ի՝  
ԱՌԺՈՂԿՈՄՍՏԻ, ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏԻ,  
ՖԻԶԿՈՒԼՏ ԳԵՐ. ԽՈՐՀՐԴԻ ՑԵՎ,  
ՊԱՋԸ-ԱՎԻԱ-ԲԻՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ



ԶՈՒԹԹՈՒՆ • ԾԵՐԵՎԱՆ • 1934

01. 2013

Պատ. խմբագիր՝ Ա. Սարգսյան  
Տեխ. խմբագիր՝ Գ. Զեյնյան  
Լեզվ. խմբագիր՝ Գ. Հակոբյան  
Սրբագրեցին՝ Մ. Մարգարյան յեկ Թ. Լալայան

1921

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Այս գիրքը պետք է ծառայի վորպես ձեռնարկ՝  
կողմարների, բժիշկների, ֆիզիկուլտ հրահանգիչների և  
լազերի մյուս աշխատողների համար:

Գիրքը շտապ հրատարակելու հանգամանքը  
(1934 թ. լազերային սեզոնին հասցնելու համար) հնարավորություն չտվեց ավելի մանրամասն կանգ առնել  
բոլոր հարցերի վրա:

Գրքի գլխավոր նպատակն է՝ տալ լազերային կյանքին  
վերաբերող վերջին նորությունները և հնարավոր  
յեղածին չափ ոգնել կողմարին, բժիշկին և լազերի  
մյուս աշխատողներին՝ լուծելու լազերային աշխատանքների  
կազմակերպչական և այլ հարցերը:

Գիրքը կազմելիս առաջնորդվել ենք Համ ԼԿՅԵՄ  
Կենտկոմի և Անդրյերկոմի 1933-34 թվի հրահանգներով,  
ձեռնարկներով ու բյուլետեններով:

Ա.Լ.Ա.Հ.Վ.ԵՐԴՅԱՆ

Վ.ԱՐԴԱՆՅԱՆ

Փլավիտ № 8638 (բ), հրատ. № 3071, պատվեր № 1165, տիրոժ 3000,  
Հանձնված է արտոդրության 2 VII 1934 թ.  
Մտորագրված է տպելու 9 VIII 1934 թ.

Պետհրատի ապարան, Յերևան

ԲԺ. Լ. ԱԼԼԱՅՎԵՐԴՅԱՆ

I

1. ԼԱԳԵՐՈՒՄ ՅԵՐԵՒԱՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՀԱՆԳՍՏԱՆԱՆ ՅԵՎ ԱՌՂՋԱՆԱՆ

Դեռ մարտի 17-ի վորոշման մեջ Համ ԼԿՅԵՄ Կենտկոմն ընդգծել է, վոր «Պիոներական լագերների աշխատանքի բովանդակության հիմնական խնդիրը պետք է լինի պիոներների առողջության և զվարճության մաքսիմալ կազմակերպումը, անհատական առողջապահական ունակությունների զարգացումը յօրն-խաների մեջ, վորակապես բարձր կուլտուր-մասսայական և գեղարվեստական սպասարկումը, արգելելով լագերներում վորեմի տեսական աշխատանք, ինչպիսին էլ այն լինի»:

Մինչդեռ անցյալ տարիները լագերը չէր ապահովում հարցի այդ հիմնական կողմերը: Մենք յերեխաներին հաճախ ծանրաբեռնում էյինք զանազան հասարակական և ֆիզիկական աշխատանքներով, ամեն տեսակի պարտադիր պարապմունքներով՝ իհաչիվ նրանց հանգստի:

Անցյալներում լագերի ղեկավարներից վոմանք հանգիստը հասկանում էյին իբրև անգործություն և յերեխաներին թողնում էյին ինքնահոսի: Արդյունքը լինում էր այն, վոր յերեխաների մի մասը չազերից փախչում էր, իսկ մյուսն իր համար այնպիսի զբաղմունք էր գտնում, վորը խանգարում էր նրա հանգիստը:

Յերեխաների առողջացումը պետք է լինի լագերի

հիմնական խնդիրը: Այս հիմնական խնդրին պետք է  
յենթարկվեն լազերային կյանքի մնացած ելեմենտնե-  
րը և, առաջին հերթին, որվա ուժիմը, վոր պետք է  
լինի կայուն և հաստատուն կերպով անցկացվի լազե-  
րում:

Լազեր դուրս գալը յերեխաների կյանքում շատ  
խոշոր դեպք է, վորի մասին նրանք յերազում են դեռևս  
ձմեռվանից և պատրաստվում դարնան առաջին իսկ  
որերից: Պիոներական լազերը յերեխաների դաստիա-  
րակչական աշխատանքների ամենալավ ձևն է:

Նախքան լազեր դուրս գալը, ամեն մի ղեկավար  
պետք է հետաքրքրվի թե ի՞նչ են ավելի շատ սիրում  
իրենց հետ մեկնող յերեխաները: Լազերում յերեխա-  
յին լայն հնարավորություն պետք է տալ զբաղվելու  
այն բանով, վորը նրան ավելի յե հետաքրքրում, որի-  
նակ՝ ձկնորսությամբ, բնությունն ուսումնասիրելով,  
մողեսներ պատրաստելով և այլն: Այս պատճառով,  
մինչև լազեր դուրս գալը կոլեկտիվը պետք է ապա-  
հովվի անհրաժեշտ նյութերով ու գործիքներով:

## 2. ՊԱՏՐԱՍ ԴՈՒՍ ԳԱԼ ԼԱԳԵՐ

Յուրաքանչյուր պիոներ ղեկավարի համար պետք է  
պարզ լինի, վոր լազերի աշխատանքների հաջողու-  
թյունը վորոշվում է միմիայն մտածված նախապատ-  
րաստական աշխատանքներով:

Մեզ մոտ այդ ուղղությամբ մեծ մասամբ զբաղ-  
վում է միայն կոլվարը, վորն այնքան է ծանրաբեռն-  
ված լինում տնտեսական ու դրամական հաշիվներով,  
վոր մյուս բոլոր խնդիրները մի կողմ են մնում:

Ծնողական հասարակայնությունը, իրենք՝ պիո-  
ներները մեծ մասամբ չեն մասնակցում լազերի նա-  
խապատրաստական աշխատանքներին: Մինչդեռ նը-  
րանք կարող են շատ բան անել պատրաստվածորեն  
լազեր դուրս գալու համար:

Լազերի նախապատրաստական աշխատանքների հա-  
ջողությունը պայմանավորվում է՝

1. Լազերային վայրի մանրամասն ուսումնասիրու-  
թյամբ:

2. Վորակավոր կազմերով (կոլվար, բժիշկ, կուլ-  
տուրնիկ, Փ.կ. հրահանգիչ, խոհարար, տնտեսվար և  
այլնի) ապահովելով:

3. Նախապես հոգալ, վոր անդամթերքները ժա-  
մանակից առաջ փոխադրված լինեն:

4. Ապահովել լազերային ամբողջ սեզոնի ընթաց-  
քում անհրաժեշտ ինվենտարով (խոհանոցի, բժշկական,  
ուսումնական, Ֆիզկուլտ և այլն):

5. Ձեռք բերել համապատասխան քանակությամբ  
յերեխաներին թույլատրելի քաղաքական գեղարվես-  
տական և այլն գրականություն:

Յեվ վերջապես, հաստատուն ուժիմի մշակումով,  
վորը պետք է կիրառվի լազերային կյանքի առաջին  
որից:

Լազեր դուրս գալու աշխատանքներն այնպես պետք  
է դասավորել, վոր յերեխաները հենց ձանապարհին  
վորաչ կարգապահություն սովորեն, իսկ մյուս կողմից՝  
յերեխաները ծնողներից ուրախ տրամադրությամբ  
բաժանվեն, և ծնողների մեջ էլ անհանգստության հետ-  
քեր չմնան: Այս բոլորը նախորդ պետք է հոգա կոլ-  
վարը:

Այս պատճառով էլ, դեռ մեկնելու նախորդակին  
կոլեկտիվի խորհրդում պետք է վորոշվի, յերեխանե-  
րից վորոնք են դնալու լազեր, ի՞նչ կարգով, հասնելիս  
ո՞վ է դիմավորելու նրանց, վորտե՞ղ են իջնելու և  
այլն:

Մեծահասակներից մի քանի հոգի նախորդ պետք է  
ուղարկել լազեր, վորպեսզի տնտեսվարին ոգնեն յերե-  
խաներին ընդունելու, ամեն ինչ պատրաստելու: Հա-  
ճախ առաջին որը ճաշն ու ընթրիքը կազմակերպված  
չեն լինում, և յերեխաները քաղցած են քնում: Այս էլ,  
իրևե բաց, պետք է վերացնել:

Հարկավոր է զգուշ լինել և նախորդ կանխել ամեն  
մի պատահականություն (զնայքից չուշանալ, ժամա-  
նակին տոմսեր ձեռք բերել և այլն):


Պարզ է, վոր այս լուրջ ու բազմազան հարցերը չեն կարող լուծվել առանց ծնողների ու պիոներ ակտիվի ոգնության: Անհրաժեշտ է կոնկրետ պարտականություններ դնել յուրաքանչյուր պիոների վրա և պատասխանատու դարձնել նրան:

### 3 ԱՍԳԵՐԸ ՊԵՏՔ Ե ՊԱՏՐԱՍԵ ԼԻՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ

#### Ա. ԱՍԳԵՐԻ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Լազերի հիմնական խնդիրներից մեկը լազերի տեղըն ընտրելն է, վորով հնարավորություն է ստեղծվում:

1. Սուսափել վարակիչ հիվանդություններից:
2. Անչեղ կերպով կատարել առողջապահական կանոնները:



Մեռյալ ժամ

3. Ստեղծել պարերի, ֆիզիկական վարժությունների, շարժական խաղերի, սպորտի և ռազմական հրապարակներ:

4. Զբոսանքների երթուղիների և տուրիստական գործը ապահովել:

5. Կազմակերպել յերեխաների մեջ հասարակական ողտավետ աշխատանքներ, վորոնք նպաստեն ուսումնաարտագրական աշխատանքների բարձրացմանը:

### Բ. ԱՍԳԵՐԸ ՊԱՇՊԱՆՆԵԼ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Լազերում հայտնաբերված վարակիչ հիվանդության նույնիսկ մի դեպքը (քուժեչ, տիֆ, դիֆտերիա և այլն) արդեն խանգարում է լազերային կոլեկտիվի կյանքն ու կենսուրախությունը: Լազերի համար ընտրված տեղը վարակիչ հիվանդությունների տարածման տեսակետից մանրամասնորեն պետք է քննել: Այս նպատակով, տեղի առբաժնի հետ պետք է կազմակերպել վայրի ուսումնասիրության գործը. սանիտարական բժշկից պետք է ստանալ ընտրված վայրի սանիտարական բնութագիրն ու շրջապատի վերաբերյալ տվյալներ: Առհասարակ պետք է խոստովել լազերն ամառանոց յեկողներից մոտիկ, կամ գյուղի կենտրոնում կազմակերպելուց: Մյուս կողմից՝ չպետք է մոռանալ, վոր ընտրված վայրը պետք է լինի չոր, ճահիճներից ազատ (մալարիայից խուսափելու համար): Ցածր, ճահճոտ, կամ խոնավ տեղերում, լազեր կազմակերպելուց պետք է խուսափել:

### Գ. ԱՍԳԵՐԸ ՊԵՏՔ Ե ԱՊԱՀՈՎՎԱԾ ԼԻՆԻ ԱՐԵՎՈՎ, ՈՂՈՎ ՈՒ ԶՐՈՎ

Բարձր, արևոտ տեղերը ցանկալի յեն լազերի համար: Այս բանը վոչ միայն առողջապահական ֆակտոր է հանդիսանում այլև հոգեբանական լուրջ մոմենտ, վոր ուրախալի լույս ու վոգեվորություն է մտցնում շենքի բոլոր անկյունները:

Արևի առատությունն արևային վաննաներ կազմակերպելու հնարավորություն է տալիս:

Զուրը պետք է լինի ջազերի սահմաններում: Բացի լողանալու ջրից, լազերը պետք է ունենա նաև խմելու ջուր: Զուրը նախորդ պետք է յենթարկել քիմիական ու բակտերիոլոգիական քննության:

Լազերի համար անհրաժեշտ են՝ անտառ, այգի, ու դաշտ, վոր մաքուր և լիառատ ոգ ապահովվի լազերականներին:

Մյուս կողմից՝ լազերը հեռու պետք է լինի գործարանի ծխից ու փոշոտ ճանապարհներից:

#### Դ. ԼԱԳԵՐԻ ԱՊԱՀՈՎԵԼ ՁԻՉԿՈՒԼՏ ՅԵՎ ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐՈՎ

Լազերի համար ընտրված տեղը պետք է ապահովել հրապարակներով, վորոնք անհրաժեշտ են ընդհանուր խաղերի, Ֆիզ-վարժությունների, սպորտի ու սազմական խաղերի համար:

#### Ե. ԼԱԳԵՐԸ ՊԵՏՔ Ե ԱՊԱՀՈՎՎԱԾ ԼԻՆԻ ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ՏԵՂԵՐՈՎ ՈՒ ԶԲՈՍԱՎԱՅՐԵՐՈՎ

Լազերի գնահատելի կողմերից մեկն էլ այն է, վոր ղազերը չըջապատված լինի գեղեցիկ, բնական պատմական վայրերով, ուր յերեխաները կարողանան եքսկուրսիա գնալ: Լավ է, յեթե չըջապատը հարուստ է սարերով, ձորերով ու գետակներով: Լազերային կյանքի բովանդակությունն ավելի յե բարձրանում, յեթե մոտերքում մեքենայացված խոշոր կոլտնտեսություններ, խորհանտեսություններ ու մեքանատրակտորային կայաններ, այգեգործություն, կամ պատմական հուշարձաններ կան:

#### 4. ԼԱԳԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Լազերի համար շենքեր ընտրելիս կամ կառուցելիս աչքի առաջ պետք է ունենալ հետևյալ պահանջները:

1. Յերեխաների համար առանձին ննջարաններ:
2. Ճաշարանի շենք:
3. Սենյակներ՝ յերեխաների զբոսայգիների (ընթերցանության, նկարչության, հանգիստ խաղերի, աշխատանքի ժամերի և այլն), համար:
4. Զուգարան, լվացարան, բաղնիք, լվացքատուն:

5. Խոհանոց, պահեստ:
6. Շենք՝ մանկավարժների ու դեկավար աշխատողների համար:
7. Շենք՝ բուժօգնության և մեկուսարանի համար:

#### Ա. ՆՆՋԱՐԱՆ

Ննջարանները, վորոնց մեջ պիտներն անց է կացնում իր լազերային կյանքի համարյա  $\frac{1}{3}$  մասը, պետք է համապատասխանեն բոլոր պահանջներին: Մահճակալների միջև յեղած տարածությունը պետք է լինի  $\frac{1}{2}$  մետրից վոչ պակաս: Յուրաքանչյուր յերեխային հասնելու յե 2,5 քառ. մետր տարածություն:

Մահճակալների խտացումը ննջարանում վատ է ազդում յերեխաների հոգեբանության և առողջության վրա: Մի ննջարանում 20 յերեխայից ավելի տեղավորելն աննպատակահարմար է— դժվար է հսկել այդպիսի կոլեկտիվը, և այդ հոգի վրա հաճախ թյուրիմացություններ են առաջանում:

Մի մահճակալի վրա 2 յերեխա քնացնելն անթույլատրելի յե և հակաառողջապահական:

Պարզ է, վոր ննջարանները պետք է լինեն չոր, լուսավոր և բացվող լուսամուկներ, կամ ողանցքներ ունենան: Մահճակալների արանքում լավ կլինի ունենալ մեկական աթոռ, իսկ մահճակալի դլիտվերը՝ փոքր դարակներ, ավելի լավ է անհատական, վորոնց վրա ամեն մի յերեխա կարողանա դասավորել իր ոճառը, խոզանակը, ատամի փոշին ու բաժակը:

Լազերում անհրաժեշտ է ունենալ առանձին պահեստ տնից յերեխաների բերած հազուստի, կոշիկների, վերարկվի և այլ իրերի համար, վորոնք ննջարանում պահել չի թույլատրվում:

#### Բ. ՃԱՇԱՐԱՆ

Ճաշարանի համար ավելի լավ է ունենալ բաց պտղաբույս (տերրասա), ծածկված միայն վերեվից և այն կողմից, վորտեղից հաճախակի քամիներ են փչում:

Սեղանների շարքերի միջև մի մետրից վոչ պակաս անցք թողնել, վոր սնունդ մատուցելիս չզժվարանան դեպի սեղաններն անցնել:

Ճաշարանը խոհանոցին մոտ պետք է լինի: Ճաշարանը պետք է զարգարվի ծաղիկներով, համապատասխան պլակատներով ու լոգուններով:

#### Գ. ԱԿՈՒՄԲ

Ակումբը ծառայում է զանազան խաղերի և դրազմունքների համար, մանավանդ անձրևոտ, վատ յեղանակներին, յերբ յերեխաներին հնարավոր չէ դուրսը զբաղեցնել: Բոլորս ել գիտենք, վոր այդպիսի յեղանակին յերեխաները թափվում են ննջարանները և իրենց ժամանակն անց կացնում մահճակալների վրա:

Ավելի նպատակահարմար է ունենալ յերկու տեսակ ակումբ—մեկը՝ հանգիստ աշխատանքի (ընթերցանության, զբույցի, շախմատի, շաշկու և այլ խաղերի), իսկ մյուսը՝ աղմկոտ խաղերի (յերգեցիկ, թատերական խմբերի, նվագախմբի և այլ կարիքների) համար: Ակումբները պետք է կահավորել սեղաններով, նստարաններով, պահարաններով, վորոնցում պահվեն խաղալիքները, գրքերը և այլ իրերը:

#### Դ. ՁՈՒԳԱՐԱՆ, ԼՎԱՑԱՐԱՆ, ԴՈՒՇ

Չուզարանը տղաների ու աղջիկների համար պետք է լինի առանձին՝ ամեն մի բաժանմունքում 15-20 յերեխայի համար: Չուզարանն այնպես պետք է դասավորել, վոր ննջարանից այնքան ել հեռու չլինի, մանավանդ գիշերվա համար: Նրանց տարածությունը բնակելի շենքից ու խոհանոցից 75-100 մետր պետք է լինի: Գիշերները Չուզարանը պետք է լուսավորել:

Չուզարանից քիչ հեռու պետք է ստեղծել, լվացվելու հարմարություն, այն հաշվով, վոր մի ծորակից 5-10 յերեխա ոգտվի:

Դուշերը դրվում են այն հաշվով, վոր 20 յերեխային մի ցնցուղ հասնի:

Դուշի համար կառուցված ջրի բակը պետք է բաց

լինի արեվի ճառագայթների համար: Ավելի լավ է բակերը լայն շինել, բայց 50 սանտիմետրից վոչ խոր՝ լավ և հեշտ տաքանալու համար: Դուշերի մոտ պետք է ունենալ կախարաններ ու նստարաններ:

Հատուկ դուշերի փոխարեն կարելի յե ոգտադործել ցնցուղներ: Դուշերն ավելի անհրաժեշտ են այն դեպքում, յերբ լազերը զուրկ է գետից և առատ ջրից:

Անկախ դուշից ու սառը ջրում լողանալուց, ամեն մի լազեր բաղնիքի հարմարություն պետք է ստեղծի և առնվազն 10 բրբ մի անգամ յերեխաներին տաք ջրով և ոճառով լողացնի: Յեթե բաղնիքի հարմարություն չկա, հատուկ մեծ կաթսաներ կամ կուրեր պետք է ունենալ ջուր յեռացնելու համար, և տակառներ՝ սառը ջրի համար: Կեղտոտ ջրերի համար առուներ պետք է պատրաստել:

#### Ե. ԽՈՀԱՆՈՑ

Խոհանոցը պետք է կառուցեյ ճաշարանի մոտ, իսկ ընդհանուր շենքերից և ննջարաններից՝ 75 մետրից վոչ հեռու: Խոհանոցը պետք է ունենա պլիտա, ամանները լվանալու հարմարություններ ունեցող, անկյուն, պահեստ, սառցարան, դարակներ, և այլն: Խոհանոցը ճանձերից պաշտպանելու համար, լուսամուտները պետք է ցանցապատել:

Դուշերն ու տակառները, վորոնց մեջ մնացորդներն են հավաքվում, պետք է ամուր փակվեն: Խոհանոցի ներսը, կամ դրսում, պետք է ունենալ յեռացրած ջրով լիքը կուրեր: Լազերն անպայման պետք է ապահովել հրդեհաշեջ միջոցներով:

#### 5. ԼԱԳԵՐԻ ԱԱՆԻՏԱՐԱՍԵԽՆԻԿԱԿԱՆ ԱԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

#### ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Լազերի համար ընտրված վայրը պետք է ապահովված լինի լավորակ ու բավականաչափ ջրով: Վոր-

պեսզի ամբողջ լազերը կարողանա իր բարձրութեան վրա պահել սանիտարական բոլոր պահանջները, այն է՝ շենքերի, ամանեղենի, աշխատակիցների ու յերեխաների մաքրութիւնը, լազերը մի պիտների համար որական միջին թիվով 120-150 լիտր ջուր պետք է ստանա: Նպատակահարմար է ունենալ սարքավորված աղբջուրներ: Աննպատակահարմար է ոգտվել գետի, լճի ջրերից: Նախքան լազեր բացվելը, 10-15 օր առաջ աղբջուրները պետք է կարգի բերվեն: Չպետք է թույլ տալ, վոր անասուններն աղբջուրներից ոգտվեն: Նույնպես արգելել աղբջուրի մոտ վազք և կեղտոտ ամաններ լվանալ: Աղբջուրի շուրջը լճացումներ չպետք է թույլ տալ: Աղբջուրի ակունքը պետք է փակվի, յեթե ջուրը տակառներում է պահվում, վերջիններն յեռացրած ջրով հաճախ պետք է լվանալ, փակ պահել, կեղտոտ դույլեր չթաթախել մեջը: Յեթե ջրի մաքրութիւնը կասկածելի յե, պետք է գործածել յեռացրած վիճակում:

### ԿԵՂՏԱԶՐԵՐԸ ԼԱԳԵՐԻՅ ԴՈՒՐՄ ՏԱՆԵԼԸ

Կեղտաջրերը վաղարաններից, բաղնիքից, խոհանոցից, վաղքատնից խողովակների միջոցով մի վորոշ տեղ պետք է հավաքվեն՝ լազերից 150-200 մետր տարածութեան վրա: Պետք է հետեւել, վոր ջուրը ճանապարհին վորևէ տեղ չլճանա:

### ԱՂԲԸ ԼԱԳԵՐԻՅ ՀԵՌԱՅՆԵԼԸ

Աղբի հեռացնելը սանիտարական պահանջներից ամենա եյականն ու ամենա անհրաժեշտն է: Պետք է հսկել, վոր բոլոր յերեխաները միմիայն գուգարաններից ոգտվեն և չըջապատը չկեղտոտեն:

Լազերում կուտակված աղբն ավելի լավ է հավաքել փակ տակառների կամ արկղների մեջ և լցվելուն պես դուրս տանել: Դատարկելուց հետո արկղները պետք է ախտահանել:

Խոհանոցի կեղտոտ ու ջրալի մնացորդները պետք

է հավաքել հորերի մեջ, բերանն ամուր փակել և ժամանակ առ ժամանակ վրան կրաջուր լցնել, կամ քլորակիր ցանել: Լազերի մյուս շենքերի աղբը պետք է հավաքել առանձին աղբամանների մեջ և յերեկոյան լցնել ընդհանուր արկղը, իսկ միջի յեղած թղթերը հավաքել և այրել:

### 6. ԼԱԳԵՐԻ ԿԱՆԱԶԱԶԱՐԴՈՒՄԸ

Լազերն անպայման չըջապատված պետք է լինի կանաչով՝ անտառով, այգիներով, դաշտերով: Այս ամենը պետք է խնամել և թույլ չտալ տրորելու, կոտրատելու ու փչացնելու:

Յերեխաների հետ սիստեմատիկ գրույցներ ունենալ, թե ինչպե՛ս պետք է ոգտագործել ընտելութիւնը, վոր նրանից ավելի մեծ բարիք ստացվի:

Ծառերի, խոտերի ու թփերի առողջապահական նշանակութիւնն այն է, վոր նրանք լազերը պաշտպանում են արեվի այրող ճառագայթներից ու փոշուց, ողը մաքրում, թթվածնով թարմացնում են և այլն:

Բույսերի տնտեսական նշանակութիւնը նույնպես պարզ է, սեփական միջոցներով, այգիների, բանջարանոցների մշակումից ստացված մրգեղենը լազերի վրա եժան կնստեն և ավելի թարմ ու ոգտակար կլինեն:


### 7. ԼԱԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ ԿԱՍ ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԸ

Ամեն մի լազեր նկատի ունենալով իր առանձնահատկութիւնները (շենքի վորակ, տեսակ, հարմարութիւններ, մեծութիւն և այլն) իր սանիտարական միմումը պետք է մշակի: Լազերի սանմինիմումի պատասխանատուութիւնն ու կիրառումն ամենից առաջ գրվում է լազերի ղեկավարի վրա:

Այս իսկ պատճառով թե բժիշկը և թե լազերի ղեկավարները լազերը նախապատրաստելու ընթացքում պետք է ունենան այնպիսի մի անձնակազմ վորը կարո-

դանա ուժիմը կյանքում կիրառել: Ղեկավարից սկսած մինչև պիոները ծանոթ պետք է լինեն սանիտարական ուժիմին: Բացի այդ, առանձին ճյուղերի սանմիներումը կիրառելու համար հատուկ մարզ պետք է պատասխանատու դարձնել:

Այս աշխատանքներից չի ազատվում նաև բժիշկը, վրբի հետ կապ պետք է պահպանի սանուժիմը կիրառող անձնակազմը: Բժիշկը նրանց տեղյակ պետք է պահի առողջապահական ու Ֆիզկուլտ ձեռնարկումների զծով ստացված թարմ գրականության մասին:



Լվացվում և մաքրում են ատամները

Լազերի պիոներական մասսան նույնպես կապված պետք է լինի այն անձնակազմի հետ, վրբի վրա յե դըր-

ված ուժիմի կիրառման պատասխանատվությունը:

Լազերի մանկական կուլեկտիվից սանիտարական բրիգադ է ընտրվում: Լազերի բժիշկն ու ղեկավարն այդ բրիգադի հետ միասին ընտրում են սանիտարական պոստեր՝ ննջարանների, ակումբի, ճաշարանի, խոհանոցի, հրպարակի, աղբյուրների և այլ կեանքի սանիտարական դրությունը հսկելու համար:

Սանպոստի վրա յե դրվում որվա գանազան սանիտարական հարցերի անշեղ կիրառման վրա հսկելը: Հերթապահն իր պոստից դիտում է խնդիրների ժամանակին ու վորակով կատարելը:

Յեթե վրբե հակասանիտարական յերեվույթ կամ թերություն է նկատվում, սանպոստն այդ մասին ժամանակին պետք է հայտնի թե՛ կուլվարին և թե՛ բժշկին:

Լազերային սանիտարական բրիգադը և թե սանպոստը նախորք պետք է մշակեն աշխատանքի պլան և ըստ այնմ ել գործեն:

Սանպոստի ամեն մի անգամ վրբե նշան պետք է ունենա, վորպեսզի մյուսներից տարբերվի: Նրան պետք է իրավունքներ տրվեն, և նա հարգանք ու հեղինակություն պետք է վայելի:

Սանպոստի հերթապահի կարգադրությունները պիտներեն իսկույն պետք է կատարեն: Յեթե սանիտարի կարգադրությունը կասկած է առաջ բերում, կուլվարի կամ բժշկի միջոցով իսկույն և յետ պետք է պարզել այն:

Միաժամանակ աշխատանքի կատարման հաշվառման հատուկ ձև պետք է մշակել: Հաշվառման ժամանակ պետք է շեշտել կատարված աշխատանքի չափը, վորակը և ժամանակին կատարած լինելը:

Հաշվառման ձևը պարզ պետք է լինի, վոր հաշվի առնողը կարողանա գանազան թերթերով ստացված տեղեկություններն ամփոփել, հասկանալ և հարցերին ճիշտ պատասխան տալ:

Լազերի սանիտարական ուժիմի մեջ պետք է մըտնեն՝ լազերային կուլեկտիվի, ճամուղի, դուգարանի, ճա-

3436  
100x  
70364



շարանի, խոհանոցի, վերջիններս մաքրելու ողափոխելու, ինվենտարի մաքրության հարցերի ու կոլեկտիվի և առանձին անդամների կողմից անհատական առողջապահական հարցերի իրազործումը:

### ԼԱԳԵՐԱՅԻՆ ՎԱՅՐԻ ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Բարձրությունները պետք է հարթվեն, կամ ցանկապատվեն, իսկ փոսերը՝ լցվեն:
2. Լազերի սահմաններում թքելը, ծխելը, աղբ թափելը պետք է արգելվի:
3. Սմբողջ տարածությունն ամեն օր պետք է ջրվի ու սրբվի:
4. Զանազան անկյուններում աղբարկղներ ու թքամաններ պետք է դրվեն:

### ԽԱՂՀՐԱՊԱՐԱԿԻ ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Խաղհրապարակը պետք է պատրաստվի համաձայն գոյություն ունեցող նորմաների՝ բժշկի և Փիզկուլտ հրահանգչի հսկողությամբ:
2. Հրապարակը զառիվայրին մոտ չպետք է լինի:
3. Հրապարակը պետք է ունենա մի քոֆի նստարան՝ հանգստանալու համար:
4. Հրապարակն ամեն օր պետք է մաքրվի:
5. Խաղերի ու մրցումների ժամանակ հրապարակում խմելու ջուր պետք է լինի:
6. Յեթե հրապարակը կանաչից զուրկ է, խաղերից առաջ պետք է ջրել:
7. Լազերի հրապարակը գիշերները պետք է ապահովվի լույսով:

### ՆՆՋԱՐԱՆԻ ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Ննջարանի մուտքի առաջ թաց շոր պետք է դրցվի՝ վոտքերը սրբելու համար:
2. Ննջարանի հատակը սրբելուց առաջ պետք է ջուր ցանվի, կամ թաց ավելով սրբվի:
3. Ննջարանի լուսամուտները, յեթե հնարավոր է, ամբողջ ժամանակ բաց պետք է պահվեն:
4. Անկողնու վրա թույլ տրված ժամերից դուրս չպետք է պառկել:

5. Ննջարաններում ավելորդ իրեր (զամբուլ, արկղ վերնազգեստ և այլն) պահելը պետք է արգելվի:

6. Առավոտյան արթնանալուն պես անկողնից վեր կենալ, վերմակը մի կողմ քաշել, 15-20 րոպե այդպես թողնել, վոր թե՛ անկողինը և թե՛ ննջարանը ողափոխվեն: Այդ ժամանակամիջոցում պետք է լիցք կատարել, իսկ հետո՝ անկողինը հավաքել:

7. Առնվազն վեցօրյակը մի անգամ — արեվ որբերին — անկողինը դուրս պետք է տարվի:

8. Ննջարաններում լույս յերեվալու դեպքում հատակը նավթով պետք է մաքրվի:

9. Ննջարաններում պետք է արգելվի խաղալն ու փոշի բարձրացնելը:

10. Քնի ժամերին պետք է պահպանվի խորին լուսթյուն:

### ՃԱՇԱՐԱՆԻ ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԸ

1. 2-3 հերթի ճաշը պետք է վերացվի, վորովհետև որվա ռեժիմը խանգարվում է, իսկ խոհանոցն ու աշխատակիցները ծանրաբեռնվում են:

2. Հատակին կերակրի մնացորդներ, վոսկորներ և այլ բաներ թափելը պետք է արգելվի ու վերջիններիս համար յուրաքանչյուր սեղանին մի քանի դատարկ ափսե դրվի:

3. Ուտելիս լուսթյուն, կարգ ու կանոն պետք է պահպանվի, անկախ այն բանից, վոր այդ անհրաժեշտ է սննդի կանոնավոր ընդունման համար:

4. Յուրաքանչյուր ողակին ճաշարանում մշտական տեղ պետք է հատկացվի:

5. Ճաշարանը շարունակ պետք է ողափոխվի, յեթե փակ շենքի մեջ է:

6. Սեղանի կլոնկաներն (սփռոց) ամեն ճաշից հետո տաք ջրով պետք է մաքրվեն:

7. Ուտելուց անմիջապես հետո պետք է հատակը ջրվի ու սրբվի: Ճաշարանում վոչ մի մնացորդ չպետք է թողնել:

8. Աղբը պետք է հավաքվի աղբարկղի մեջ:

9. Ճաշարանում գլխարկով, վերարկով նստելը պետք է արգելվի:

10. Ճաշի կարգապահութեան համար պատասխանատու յե հերթապահ կողմարը: Նրան ոգնում են ողակալին հերթապահները:

**ԽՈՂԱՆՈՅԻ ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԸ**

1. Խոհանոցի հատակն ամեն որ պետք է լվացվի, յեթե փայտից է, և հաճախակի ջրվի ու սրբվի, յեթե հողից է:

2. Խոհանոցում ավելորդ իրեր և հագուստ չպետք է լինեն:

3. Խոհանոցում քնելը պետք է արգելվի:

4. Իրերի փոշին ամեն որ թաց շորով պետք է սրբվի:

5. Խոհանոցում ծխելը, թքելը, լվացք անելը պետք է արգելվի:

6. Անլվա ամանեղենը վաղվան թողնելը պետք է արգելվի:

7. Լվացած ամանները պետք է պահվեն փակ պահարանում, կամ փակ դարագների վրա:

8. Ճանճերի տարածման դեմ խոհանոցում շարունակ պետք է պայքար մղվի՝ թունավոր թղթեր փռելու, լուսամուտները ցանցապատելու և այլ միջոցներով:

9. Ամանեղենը յերկու ջուր պետք է լվացվի՝ յեռման և տաք ջրով:

10. Աշխատակիցները մաքուր խալաթներ պետք է ունենան, իսկ գլուխներ կամ մաքուր շոր պետք է կապեն, կամ սպիտակ շորից գլխարկ դնեն. ձեռքերը պետք է մաքուր լինեն:

11. Սեղաններն ու դարագները տաք ջրով և ոճառով պետք է լվացվեն:

12. Խոհանոցում լվացարան պետք է պահվի:

**ՉՈՒԳԱՐԱՆԻ ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԸ**

1. Արտաքնոցը պետք է մաքրվի որը մի անգամից վոչ պակաս:

2. Հատակը միշտ չոր պետք է պահվի:  
3. Արտաքնոցն ողհան մեքենա (վինտիլյատոր) պետք է ունենա:

4. Դուռը միշտ պետք է ամուր փակվի:  
5. Գիշերներն արտաքնոցը լուսավորված պետք է լինի:

6. Արտաքնոցում ամեն որ կիր պետք է ցանվի:

**8. ՄԱՍՍԱՅԻ ԿԱՆ ԼԱԳԵՐԻ ԱՇԽԱՏՆՔԻ ՈՒ ՀԱՆԳՍՏԻ ՌԵԺԻՄԸ**

Աշխատանքի ու հանգստի ռեժիմը լագերի կյանքի կառուցվածքի հիմքն է և ապահովվում է լագերի աշխատանքների դրվածքը: Ճիշտ ռեժիմ կազմելու համար անհրաժեշտ է նախորդ իմանալ լագերի աշխատանքի ծրագիրը, լագեր մեկնող կոլեկտիվի դեմքը, լագերի հարմարութունները, շրջապատը և այլն: Պետք է իմանալ լագերի տնտեսական վիճակը, դեկավար ու տեխնիկական աշխատավորների կազմը:

Յելակետ ունենալով ընդհանուր ռեժիմը՝ լագերում առանձին կոլեկտիվների համար նույնպես համապատասխան ռեժիմ պետք է կազմել:

**ՌԵԺԻՄԸ ԺԱՄԵՐՈՎ  
Լագերի որվա ռեժիմը**

Պատվոս. ժամը	7-ին	արթնացում.
»	» 7-ից-7:30	լիցք, անկողինը հավաքել, լվացվել:
»	» 7 <sup>1</sup> / <sub>2</sub> -8,0	թեյ.
»	» 8,0-9,0	Դրոշակ բարձրացում, աշխատանքի բաժանում
»	» 9,0-11 0	կոլեկ. հավաքույթներ և ֆիլ. պարսպժուռներ:
Գետոր	» 11,0-12,0	Արևի վաննա, դուռ շփում, լող:
»	» 12-12:30	Հանգիստ՝ ճաշից . առջ.
»	» 12:30-1,0	Ճաշ.
»	» 1,0-3,0	մեուս ժամ:
»	» 3,0-4,0	Ակումբային ժամ
»	» 4,0-4,30	Իրիկնաթեյ.
»	» 11,30-6,30	Հասարակ. ոգտավետ աշխատ, կամ խմբ. աշխ.
»	» 6,30-7,30	Շարժական և սպորտ խաղեր.
»	» 7,30-8,0	Ընթերթ
»	» 8 0-8,30	ազատ ժամ (խարույկ).
»	» 8,30-9,30	գրողակի իջնցում.
»	» 9,30-10,0	Պակիլ քնելու.
Գիշեր	» 10,0-7,0	առափ. քուն:

Համարյա բոլոր լազերներում առավոտյան Արթնանալու ժամը սահմանված է 7-ին: Այդ հարմար ժամ է: Արթնացումը կատարվում է շեփորի ազդանշանով, և բոլորը վազում են լիցքի հրապարակը (թողնելով անկողինը բաց):

Առավոտյան լիցքը սովորական Ֆիզիկուլտ վարժություն չէ, այլ ամբողջ որդանիզմի արթնացում, նախապատրաստում՝ ցերեկային աշխատանքների համար:

Հաճախ տեսնում ենք, վոր ամբողջ շաբաթի 500-700 պիտոների առավոտյան լիցքը Ֆիզիկուլտ հրահանգիչն է դեկավարում:

Ճիշտ է արդյոք այս ձևը: Բոլորս ել դիտենք, վոր անողջ, ամբակազմ յերեխայի հետ միասին լազեր է ընկնում նաև թուլակազմ, հիվանդոտ յերեխան, վորից չի կարելի նույնը պահանջել:

Բացի այդ, պիտոներական հասակը 9-ից մինչև 16 տարեկանն է (ներառյալ և հոկտեմբերիկներին): Հաշվի առնելով այս բոլորը՝ պիտոներներին պետք է բաժանել խմբերի՝ ըստ տարիքի և առողջության (տես Ֆիզ. վարժ. մասը):

Մի մասն ել բժշկի թուլյութությամբ բոլորովին ազատվում են լիցքից: Խմբերը խոշոր չպետք է լինեն, լիցքը պետք է կատարվի Ֆիզիկուլտ հրահանգչի, կուլվարի ու բժշկի հսկողությամբ: Լիցքային այդ 10 բուպեն կարող են արդյունավետ լինել այն դեպքում միայն, յերբ լիցքը մտածված կերպով է կատարվում և յերեխաների համար հետաքրքիր է:

Լիցքից անմիջապես հետո յերեխաները պետք է չփվեն, ատամները մաքրեն, լվացվեն, սանրվեն, հազնվեն, անկողինը հավաքեն և դուրս գան թեյեյու: Թեյը տեվում է ժամը 7,30-8:

Առավոտյան թեյը պետք է պարունակի որվա սննդի համարյա 30 տոկոսը: Թեյի ժամին յերեխաներն առողջապահական վորոշ ունակություններ պետք է յուրացնեն: Այս պատճառով ել այդ ժամի կազմակերպումը, բաժակների մաքրությունը, սրանց անհրաժեշտ թիվը, ճաշարանի կուլտուրական տեսքը—այս բոլորն այնպես պետք է լինի, վոր յերեխաներին մաքրապահության ձգտում, լրջություն, կարգապահություն ներչընչի:


Թեյը վերջացնելուց հետո բոլորն անմիջապես դիմում են դրոշ բարձրացնելու տեղը: Դրոշը բարձրացնելուց հետո, լազերի հերթապահն աշխատանքները բաժանում է, հայտարարվում են որվա ռեժիմի նոր կետերը, և կուլեկտիվներն իսկույն կազմակերպված ձեվով անցնում են աշխատանքի:

Ինչպես յերեվում է, շատ տեղերում այդ պրոցեսը ձգձգում են, և յերեխաները հոգնում—դառնում են անուշադիր: Ավելորդ են այդտեղ հաճախակի արվող նկատողությունները, յերկար սպասեցնելը: Ժամը ճիշտ 9-ին սկսվում են կուլեկտիվի և ողակի հավաքությունը, վորոնք տեվում են մինչև ժամը 11-ը: Լազերի ռեժիմի մեջ անպայման պետք է մտնեն ինքնասպասարկման՝ մտավոր և արտադրական աշխատանքի մոմենտներ: Աշխատանքը բաժանելիս պետք է հաշվի առնել թե պիտոների հետագա աշխատանքը և թե այն աշխատանքը, վորով նա զբաղված է յեղել մինչև նորին անցնելը:

Աշխատանքի ու հանգստի ժամերի ճիշտ դասավորումը միայն, վոր պետք է բոլորի յերեխայի ուժերից ու տարիքից, կարող է լազերային կյանքին դրական արդյունք տալ:

Մասնաշխատանքային լազերների տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր առավոտյան ժամերին, յերբ գիշերը յերեխան բավականին հանգստացել է, ավելի նպատակահարմար է մտավոր աշխատանք տալ: Առավոտյան ժամերին պետք է անցկացնել այն խմբակային պարապմունքները, վորոնք գիրք, թերթ, գանաղան քարտեզներ կարգալու աշխատանքները կապում են գործնականի հետ:

Նկատի ունենալով, վոր առաջնության ժամերին բոլոր յերեխաները չեն մասնակցում խմբակային պարապմունքներին, նրանցից ազատ մասն ինքնասպասարկման այլ աշխատանքներ կարող ե կատարել: Ինքնասպա-



Արևային վանկա

սարկմանն ե վերաբերում մանր կտորների լվացքը (թաշկինակ, գուլպա, սրբիչ), շենքի հարդարումը, արեվի վաննայի նախապատրաստվելը ե այլն:

Առաջնության ժամերին կարելի յե նաե առանձին ուղակներով հասարակական ոգտավետ աշխատանք կատարել կոյտնասական յերեխաների հետ, կոյտնտեսութան ակումբում: Չպետք ե մոռանալ, վոր աշխատանքի այս ձեովին  $1\frac{1}{2}$  ժամից ավելի չպետք ե հատկացնել:

### ԱՐԵՎԻ ՎԱՆՆԱՆԵՐ

1. Արեվի վաննայի համար ամենահարմար ժամերն են՝ առաջնության 10-12-ը:

2. Արեվի վաննան պետք ե տեղի սկզբում 5-10 րոպե, աստիճանաբար բարձրացնելով մինչև 30-40 րոպե:

3. Բժիշկը, մանավանդ առաջին օրերը, արեվի վաննային ներկա պետք ե լինի:

4. Արեվի վաննայի հրապարակն արեվի ճառագայթների համար բաց ե քամիներից պաշտպանված պետք ե լինի:

5. Վաննայի համար հարմար տեղ ե՝ ծովափի ափազը, գետափը, դաշտը:

6. Արևի վաննան չի թույլատրվում սոված ժամանակ կամ ուտելուց անմիջապես հետո:

7. Վաննայի ժամանակ պետք ե պառկել մերկ, գլուխը ծածկել սպիտակ շորով կամ գլխարկով:

8. Արևի վաննայի ժամանակ անընդհատ պետք ե փոխել դիրքն այնպես, վոր մարմնի բոլոր մասերը հավասար չափով յենթարկվեն արեվի ճառագայթների ազդեցութան:

9. Արեվի տակ ջուր խմել կարելի յե, իսկ քնել կամ կարդալ՝ վոչ:

10. Արեվի վաննայից հետո ցանկալի յե կարճատեղ հանգիստ՝ սովերի տակ, ե հետո՝ սառը ջրի շփում, դուշ, կամ գետում լողանալ:

11. Յեթե յերեխան գանգատվում ե գլխացավից, շատ ե քրտնում, վատ ե դգում, ջղախնանում ե, դադարեցնել ե ցույց տալ բժշկին:

12. Յեթե առաջին օրից մաշկը բորբոքվել, այրվել ե, պետք ե դադարեցնել մինչև առողջանալը:

13. Արևի վաննաներն արգելվում են՝ արյան խիստ պակասութան դեպքում, տաքություն ունենալու դեպքում, սրտի արատի ե մալարիայի ժամանակ:

### ՇՓՈՒՄ, ԴՈՒՇ

1. Շփվել սկզբում 28° ջրով, աստիճանաբար իջեցնելով ջրի ջերմությունը:

2. Դուշի ջրի աստիճանը պետք ե լինի 28-30 Ցելսիուսով. ավելի լավ ե ջուրը տաքացնել արեվի տակ:

3. Դուչի փոխարեն կարելի յե ոգտագործել ցնցուղ, կամ հարմարեցրած դուչեր:

4. Շփումից և դուչից հետո արագ ու չոր սրբվել, իսկույն հազնվել և թեթեվ շարժումներ կատարել:

### ԼՈՂԱՆԱԼԸ

1. Լողանալ սառը ջրում կարելի յե որը մեկ անգամ:

2. Լողանալու հարմար ժամն և առավոտյան 10-12-ը, կամ յերեկոյան 4-6-ը:

3. Լողանալու տեղը պետք և նախորոք ուսումնասիրվի, յերեխաների հետ պետք և լինի ղեկավարը:

4. Ջրում պետք և մնալ 3-10 րոպե:

5. Յեթե յերեխան սառում, և շրթունքները կապտում են, իսկույն պետք և ջրից դուրս դա, սրբվի, հազնվի ու վազվզի:

6. Լողանալ կարելի յե ուտելուց 2 ժամ հետո:

7. Ջրի ջերմությունն սկզբում պետք և լինի մինչև Ռեոմյուրի 18°:

8. Հոգնած, քրտնած վիճակում, ծանր աշխատանքից հետո, ջուրը չպետք և մտնել:

9. Լող տալ չիմանալու դեպքում, ջրում արագ շարժումներ կատարել, կամ զբոսնել:

10. Ջրից դուրս դալուց հետո վոչ թե ավազի վրա պետք և պառկել, այլ պետք և չոր սրբվել, արագ շարժումներ կատարել, կամ զբոսնել:

11. Յեթե լողանալուց հետո յերեխան սկսում և զանգատվել, անքնությունից ախորժակը վատանում և, և այլն, լողանալուց պետք և ազատել նրան:

### ՈՂԱՅԻՆ ՎԱՆՆԱ


1. Ողային վաննան ընդունվում և սավերի տակ, մերկ մարմնով:

2. Ողի ջերմությունը Յելսիուսի 20°-ից իջեցնել մինչև 12 աստիճան:

3. Ողային վաննան կարելի յե ընդունել որվա բոլոր ժամերին:

4. Յերբ ցուրտ և զգացվում, կարելի յե թեթեվ շարժումներ կատարել:

5. Ողային վաննայից հետո դուչ ընդունել կամ չփում կատարել:



Շփում են

12-12-30 րոպե-հանգիստ՝ քաշից առաջ—ազատ ժամ.— Այդ ժամին յերեխաները կարող են կազմակերպված ձեվով մտնել անտառ, վորևե կտրեկտիվ և հանգիստ խող կատարել:

Կովարն այդ բոլորը կազմակերպում և, բայց պարտադիր չի դարձնում: Նույն ժամին ակումբն ու գրադարանը բաց են, և յերեխաները ցանկացած տեղը կարող են գնալ:

Չպետք է խանդարել, յեթե յերեխաների մի մասն ինքն է կազմակերպել վորևէ ինքնուրույն խաղ կամ դրազմունք:

12,30-1,30 բուպե-նաշ, վոր պետք է պարունակի սննդի 40 տոկոսը:

Ճաշի տեսակները նախատեսելիս ուշադրութիւն պետք է դարձնել սպիտակուց մասնիկների վրա, ճարպի վիտամինների, ալյումինըն ալյումինի մասերի վրա, վորոնք անհրաժեշտ են մարմնի աճման և ճիշտ դարգացման համար:

Միսը, ձուն, միրգը, բանջարեղենը, յուղն անհրաժեշտ են յերեխայի սննդի մեջ:

Այն որերին, յերբ ավելի բարդ աշխատանք է նախատեսվում (եկսկուրսիաներ, յերթ, Ֆիզ. աշխատանք և այլն), ցանկալի յե սննդի կալորիան բարձրացնել:

1,0-3,0 ժամը-հանգիստ՝ քաշից հետո.— Հաճախ լազերի ղեկավարները հարց են բարձրացնում, թե կարիք կա՞ արդյոք լազերում «մեռյալ ժամ» ունենալ: Հարցը տեղին է և բարձրացվում է այն պատճառով, վոր մեռյալ ժամը հաճախ անկազմակերպ է անցնում, և դժվար է այն կիրառել:

Վորպեսզի հետճաշյա հանգիստն անցնի այնպես, ինչպես հարկն է, այդ ժամին լազերում կատարյալ լուսթյուն պետք է տիրի: Յերեխաները վոտքերը մաքրելուց հետո հանգիստ պառկում են, և զրույցները դադարեցվում են: Յերեխաներին խորհուրդ պետք է տալ հարմար դիրք ընդունելու: Քունը մեռյալ ժամին անհրաժեշտ չէ: Կոլվարը նույնպես պետք է անցկացնի մեռյալ ժամը:

3,0-4,0-ակումբային ժամ.— Ակումբն այնպես պետք է սարքավորված լինի, վոր յերեխաների համար հեաաքքիք լինի: Ակումբում մոտավորապես պետք է կազմակերպել ինքնագործ խմբակների աշխատանքներ— ուղիտ, Ֆոտո, թատերական, բնությունն ուսումնասիրող և այլն: Պետք է լավ հիմքերի վրա դրված լինեն գրադարանի աշխատանքները, ակտիվի համար կազմակերպված կոնսուլտացիաները,

զանազան խաղերը՝ շախմատ, շաշի, վիկտորինաներ, ընթերցանություն և այլն:

4,0-4,30-յերեկոյան քեյ.— Թեյից հետո յերեխաներին տալ հանգիստ և հնարավորութիւն՝ ազատ խաղալու: Խաղերը կարող են ընտրել իրենք՝ յերեխաները, անհրաժեշտ է միայն հետեւել, վոր շատ հոգնեցուցիչ չլինեն, և յերեխաներն իրենց ուժը պահեն հետագա աշխատանքների համար:

4,30-6,30 հասարակական ոգտավետ աշխատանք.— Պիտների հասարակական ոգտավետ աշխատանքը պետք է յենթարկվի լազերի ուսումնադաստիարակչական խնդիրներին, պետք է հարմարվի յերեխայի առողջութիւնը և տարիքին: Հասարակական-ոգտավետ աշխատանքների մասին մանրամասն կիտավի ներքև՝ կապված առողջապահական հարցերի հետ:

6,30-7,30—Շարժական ֆիզկուլտ և ուզմական խաղեր (տես Ֆիզկուլտ բաժին):

7,30-8,0-ընթրիք.— Աւելի լավ է կաթնեղեն կամ բանջարեղեն:

8,0-8,30 Ազատ ժամ:

8,30-9,30-Որվա աշխատանքների ամփոփում.— Զրույց, խորհրդակցութիւն, խարույկ, դրոշի իջնցում:

Սարույկը նախորդ պետք է պատրաստված լինի: Այն կոլեկտիվը, վորին հանձնարարված է խարույկի կազմակերպումը, նախորդ վառելափայտի մասին պետք է հոգա, յերեխաների համար նստելու տեղ և այլն պատրաստի:

Սովորարար խարույկի շուրջը խոսում է կոլվարը, ամփոփելով որվա աշխատանքները, հաղորդելով ընթացիկ դեպքերի մասին: Այդպիսի զրույցը պետք է տեղի 15-20 բուպեյից վոչ ավելի, վորովհետեւ յերեխաները հոգնում և սկսում են աղմկել: Յանկալի յե կենդանի կերպով թերթի միջոցով յերեխաներից լսել որվա հաջիտութիւնը: Զեկուցումն ու հայտարարութիւններն աշխուժացնել յերգերով, լողունգներով:

Այսպիսով հնարավոր կդառնա յերեխաների մեջ ախտի-  
վուլթյուն, ուշադրություն առաջ բերել:

Ընդհանրապես խարույկը 30 բույսերից ավելի չպետք  
է տեղի: Իրոջի իջեցումը պետք է գրավի ամբողջ լազե-  
րը, մի բան, վոր կազմակերպչական մեծ նշանակու-  
թյուն ունի—այստեղ հայտարարում են որվա բացերը, և  
պիտոներները պետք է լսեն այդ բոլորը: Որը յեզրափակ-  
վում է յերգով, շոգունդներով:

Խարույկի վայրը պետք է ապահովել հրդեհաշեջ  
միջոցներով:

9,30-10,0-Քուն.— Քնելուց առաջ կատարվում է  
սովորական առողջապահական կանոններ: Պիտոների  
քնի հարցը լուրջ ու պատասխանատու գործ է ուժիմի  
մեջ: Խոսքն աճող, զարգացող մարմնի մասին է, վոր  
կարիք է զգում լրիվ ու հանդիսա քնի, վորպեսզի վերա-  
կանգնի որվա ընթացքում կորցրած ուժը: Քունը պետք  
է ապահովված լինի ժամանակի ու պայմանների տեսա-  
կետից: Լազերում քնի միջին տեվողությունը 9 ժամից  
պակաս չպետք է չինի: Ժամը 10-ից վոչ ուշ յերեխա-  
ները պետք է անպայման անկողնում լինեն:

Անհրաժեշտ է կազմակերպել գիշերային պահակու-  
թյուն: Պիտոներներից պահակ ունենալն աննպատակա-  
հարմար է և յերեխաների գիշերային հերթապահու-  
թյունն անթույլատրելի:

Պառկելու ընդհանուր ժամը չպետք է խախտվի վոչ  
մի դեպքում: Իհատողությունները ցույց են տալիս, վոր  
յեթե պիտոներները քաղաքում վորևէ պատճառով (կինո,  
թատրոն և այլն) ուշանում և ժամանակին չեն պառ-  
կում, մյուս որվա ուժիմը խախտում են, վորովհետև  
նրանք հոգնած են լինում, գունատ, անտարբեր, աղմ-  
կում են և չեն յենթարկվում ուժիմին:

## 9. ԼԱԳԵՐԻ ԴԵՐԹԱՊԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՈՐՎԱ ՌԵԺԻՄԸ

Հերթապահ կոլեկտիվը պետք է հսկի լազերի ընդ-  
հանուր մաքրությանը և ճաշարանի ուժիմին: Առաջին-  
ների վերաբերյալ աշխատանքն այն է լինելու, վոր

հրապարակն ու ննջարանները մաքրել տա:

Այս աշխատանքը կատարվում է այն ժամերին,  
յերբ ննջարաններն ազատ են՝ 8,30-10, և 4,30-7 ժա-



Չարանի կատակները քրի մեջ

մերին: Առհասարակ յերեխաները չեն դանդատվում հոգ  
նածությունից: Բայց այս չի նշանակում թե նրանց կա-  
րելի յե վորքան հնարավոր է շատ ծանրաբեռնել:

Փոքրերին ոգնում են մեծահասակները, բայց հա-  
ճախ ընդհանուր ղեկավար չլինելու պատճառով, հեր-  
դապահ կոլեկտիվի մի մասն ախտիվորեն աշխատում է և  
ծանրաբեռնվում ամբողջ որով, իսկ մյուս մասը մնում  
է պասսիվ: Հաճախ ել լազերի վորոշ պակասություն-  
ները՝ ափսեների, թեյնիկների, դուլլերի, գոգնոց-  
ների և այլն նպաստում են յերեխաների ծանրաբեռնը-  
մանը, բարդացնելով նրանց աշխատանքը:

## 10. ԾՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Յանկալի յե, վոր ծնողները մի ամսով հրաժարվին իրենց յերեխաներին տեսութեան գալուց: Քանի վոր ծնողների համար ընդհանուր հանգստի ուր չկա, լազերում, անընդհատ նկատվում են ծնողների առանձին խմբեր: Նրանք խանդարում են ընդհանուր ռեժիմը, անվերջ ղեմելով կողմարներին, վոր յերեխաներին բաց թողնեն իրենց հետ զրոսներու, քնից, ճաշից ազատեն և այլն: Լազերի ռեժիմը ծնողները հաշիի չեն առնում, իրենց ցանկութեանն են թելադրում, իրենց զգացմունքներով են առաջնորդվում: Բացի այդ, ծնողների լազեր դալը մի կողմից վատ է անդրադառնում հենց իրենց՝ յերեխաների վրա, նրանց ռեժիմը խանդարում են ծնողների անզգուշ զրույցից յերեխաները ջղայնանում են, լաց են լինում և այլն: Մյուս կողմից ել վատ է անդրադառնում այն յերեխաների վրա, վորոնց ծնողներն այս կամ այն պատճառով չեն կարող գալ տեսութեան:

Միևնույն ժամանակ ծնողների այցելութեանը հնարավոր չի մերժել հետևյալ պատճառներով. հաճախ յերեխան առաջին անգամն է բացակայում տնից, և ծնողները հետաքրքրվում են, թե ի՞նչպես է կազմակերպված իրենց յերեխաների կյանքը լազերում և այլն:

Այդ դրութեանից դուրս գալու համար անհրաժեշտ է նախ և առաջ լազեր դուրս գալու նախորդակին ծնողների հետ զրույց կազմակերպել: Այս նպատակով բազան այդ նիստին հրավիրում է լազերի աշխատակիցների կազմը՝ բժշկին, քրոջը, կողմարներին, մանկավարժներին, Փիզկուլտ հրահանգիչներին և նույնիսկ ակտիվին: Այդտեղ ընտրվում է ծնողներից մի բրիգադ՝ ամբողջ լազերային սեզոնի համար: Այս բրիգադի միջոցով ծնողները ծանոթանում են լազերում յեղած յերեխաների զրութեան, և, մյուս կողմից՝ բրիգադն ուզնում է շարաթորյակներ կազմակերպելուն, յերեխա-

ներին լողացնելուն, նրանց հագուստը կարկատելուն— կարգի բերելուն, լվացքի գործը կազմակերպելուն և այլն:

Լազեր գնալուց առաջ այդ ծնողական բրիգադի հետ հատուկ որեր ու ժամեր պետք է վորոշվեն, վորպեսզի նրանք վորոշված ժամանակին լազեր գան: Ավելի նպատակահարմար է այցելութեանները հետճաշյա ժամերին կատարել:

## 11. ԿՈՒԼՏՈՒՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԱԳԵՐՈՒՄ

Այս ասպարիզում լազերի բժիշկը պետք է կատարի հետևյալ աշխատանքը՝

1. Աշխատանք պիտներների հետ:
2. » կողմարների հետ:
3. » տեխաշխատակիցների հետ:
4. » ծնողների հետ:

1. Աշխատանք պիտներների հետ. — Պիտներների հետ լազերում կատարվող աշխատանքը բաղկացած է հետևյալ հիմնական մոմենտից՝


1. Պիտներների ինքնազործունեութեանը՝ առողջապահութեան դժով:

### ՊԻՏՆԵՐՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՈՂ-ՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ.

Դեռ գարնանից, յերբ պիտներներն սկսում են լազերի նախապատրաստական աշխատանքները, ամառային առողջապահական կամպանիայի հարցերը պետք է քննվեն, մշակվեն պիտներական ողակային հավաքույթներում: Նախ և առաջ պետք է կազմակերպել ուղղմասա նիտարական գիտելիքների խմբակներ՝ պիտներների մեջ սանիտարական գրագիտութեանը բարձրացնելու նպատակով:

Ամեն մի սանիտար գեռ դպրոցից պետք է ծանոթ լինի սանպոստի աշխատանքներին և լազերում կատարի

այդ աշխատանքները: Լազերի նախապատրաստական շրջանում բժիշկը բացատրում է մեկնող յերեխաներին վարակիչ հիվանդութիւնների տարածման և պատճառների մասին: Մի քանի ժամ պետք է հատկացնել յերեխաներին բացատրելու, թե ինչ բան են՝ որվա ռեժի-



Զրույց խարույկի շուրջը

մը, նրա անհրաժեշտութիւնը, լիցքային վարժութիւնները, արեւի վաննաները, լողը, աշխատանքի պրոցեսները, խաղերը, մեռյալ ժամը, սնունդի ու առողջապահական մի շարք այլ հարցեր:

Լազերային նախնական արշավախմբին, եքսպեդիցիային մասնակից պետք է դարձնել նախապատրաստված սանիտարներին: Տեղում այդ սանիտարները բացերը կհայտնարեն և ժամանակին միջոցների կգիմեն: Լազերի սանմիսիոմը կազմելիս այդ սանիտարները նույնպես պետք է մասնակից արվեն:

Լազեր զալուց հետո ամեն մի կոլեկտիվից մի ողակ պետք է նշանակվի վորպես առողջապահութեան գործի

կազմակերպիչ: Դրանց պարտականութիւնների մեջ է մտնում պիոներական ինքնագործ աշխատանքի ղեկավարութիւնը՝ առողջապահութեան գծով, իսկ ընթացիկ աշխատանքներին մասնակից պետք է լինեն բոլոր պիոներները: Դրանով կանխվում են պիոներների մեջ չափազանց ծանրաբեռնվելու և պասսիվ մնալու տարրերը:

«Առողջապահութեան գործի կազմակերպիչ» ողակի յուրաքանչյուր անգամ ողակում աշխատանք է ստանում և պատասխանատու յե իր ստանձնած աշխատանքի համար: «Առողջապահութեան գործի կազմակերպիչ» ողակի ամեն մի անգամ իր կողմից պետք է հայտնի, թե ինչպես են կատարվում որվա հանձնարարութիւնները: Մյուս կողմից՝ կողմից ու լազերի հերթապահն իրենց ձեռքին պետք է ունենան առողջապահութեան աշխատանքի պլանը և պահանջեն կատարման արդյունքները:

## 12. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Ա. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

#### 1. Անհատական մաքրութիւն.

	Կատարող	Ժամկետ
1. Ամեն օր քննել բոլոր պիոներների ձեռքերը, վիզը, ախանջները, փոքերը.	Կոլեկտիվի հերթապահ բոլոր	
2. Բոլոր շենքերում լվացարանները ջրով ապահովել.	Շենքի հերթապահ տերնիկակ.	
3. Հետեւել, վոր 10 օրը մի անգամ բաղնիք կազմակերպվի.	Քույր, տեխ. աշխ.	
4. Յերեխաների դուշը 5 օրը մի անգամ լվանալ.	Քույր, հերթապ.	
5. 10 օրը մի անգամ անկողինը դուրս բերել մաքուր ող.	Բոլոր պիոներն.	
6. Ինքնագործունեութեան միջոցով դուշ կազմակերպել:	Կողմից պիոներն.	

#### 2. Ռեժիմի գծով

1. Լիցքի, արևի վաննայի, լողի և այլ աշխատանքների ժամերին հի-

վանդներին, թուլերին բաժանել առողջներին:

2. Հսկել, վոր յերեխաներն արևի տակ բաց գլխով չաչխատեն:

3. Աշխատանքի ժամերին ունենալ ընդմիջում, Ֆիզիկուլա բոլորները:

4. Հսկել մեռյալ ժամին:

5. Հսկել Ֆիզիկուլա աշխատանքներին:

Կովար, քույր բժիշկ

Կովար, քույր բժիշկ

Կովար, քույր բժիշկ

Կովար, քույր, Ֆի:

դեկ. բժիշկ

Պայքար հիվանդութանների դեմ

1. Հերթապահ՝ լազերի բուժարանում:

2. Բարձր տաքություն ունեցող յերեխաներին անմիջապես ուղարկել բժշկի մոտ:

3. Յանկացողներին և բոլոր դոակներին ներկայացուցիչներին կազմակերպել առաջին ոգնության խմբակ:

Պիոներներին

Կովար ողակավ:

«Առողջության կազմակերպիչ»

Բ. ԼՍԳԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ, ՇՐՋԱՊԱՍԻ ԳԾՈՎ

1. Լագերի սամիմումում:

1. Սմենորյա մաքրություն կազմակերպել լազերի շուրջը:

2. Աղբարկղներ պատրաստել շենքերի համար:

2. Լագերի շենքերում:

1. Շենքերը մաքրելիս փոշի չըպետք և բարձրացնել:

2. Հսկել ննջարանների մաքրությանն ու կարգին:

3. Հսկել քնելիս լուսամուտները բաց պահելուն:

4. Կառուցել դարակներ, արկղներ (անհատական)՝ առողջապահական իրերի համար:

5. Հայտարարել սոցմրցում ամենալավ ննջարանի համար:

Շենքի հերթապահ:

Պիոներներ

Քույր, շենքի հերթապահ:

» » »

Կովար, քույր

Պիոներներ

Պիոն. և ղեկավարներ

3. Զուգարանում

1. Զուգարանն ամեն որ արտահանել կրաջրով:

Տեխ. աշխ.

Գ. ՍՆՈՒՆԳ.

1. Սանիտարական ուսումնասիրություն կատարել խոհանոցում, ճաշարանում, կազմել թերությունների ցուցակ, հսկել նրանց վերացմանը:

2. Հսկել, վոր ամանեղենը լվացվի (2 ջրով) սեղանները մաքուր լինեն:

3. Հետևել, վոր վոսկոդների ու մնացորդների համար ճաշարանների սեղաններին լինեն ափսեներ, ճաշարանը դարձարել դաշտային ծաղիկներով:

4. Հսկել լվացարանները ժամանակին լցնելուն, սրբիչների մաքրությանը:

5. Կազմակերպել ձեռքերի լվացումն ամեն ուտելուց առաջ:

6. Հսկել հերթապահի ձեռքերի մաքրության վրա:

7. Հսկել սննդի մաքուր պատրաստելուն և խոհանոցի աշխատանքների մաքրության վրա:

8. Վորոշել ամենուրյա սննդի կալորիան:

9. Սիտեմատիկ պայքար մղել ճանձների դեմ:

10. Հսկել ջրի բակերի մաքրությանը, ջրի թարմության, խոհանոցի սրբիչների ու խալաթների վրա:

Բժիշկ, քույր կովար, տեսեսավար, լազերի ղեկավար

Քույր, բժիշկ սանիտար

Ճաշար. նի հերթապահ, կովար

Կովար

«Առ. կազմակերպիչ»

Ճաշարանի հերթապահ, Բժիշկ, կովար հերթապահ

Ճաշարանի հերթապահ

Ճաշ. ու ձեռքի հերթապահ

Գ. ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ավազ պիոներների միջոցով կազմակերպել սան. զրույցներ:

2. Կազմակերպել յերույթներ, արտասանություններ, գլխարձալիքի յերեկոներ՝ խարույկի շուրջը՝ առողջապահական բովանդակությամբ:

3. Յուցադրական սանիտարական պլակատներ, դիպրամաններ:

Մեծահասակ պիոներներ

Պիոներներ

«Առ. կազմակերպիչ»

1. Մանկավարժական, քաղաքական խնդիրների հետ կապված առողջապահական հարցերը՝ յերթերի և եքսկուրսիաների ժամանակ.

Բժ. քույր, կուլար, պիոներներ

2. Առողջապահական մատերիալի հասվքելը, մշակելը և բժշկին ներկայացնելը:

Կուլարներ

## 2. ՌԱԶՄԱԿԱՆ ԽՍՂ, ԱՐՇԱՎ, ԵՔՍԿՈՒՐՍԻԱ


Ռազմական խաղերի ժամանակ «առողջապահական գործի կազմակերպիչ»-ները սանիտարական ուժերով սպասարկում են «պատերազմող կողմերին», կազմակերպում են առաջին ոգնության պոստեր, հիվանդների փոխադրումը, պաշար թունավոր նյութերի դեմ, ընտելանում են հակազազ գործածելուն և այլն:

Ռազմական խաղը կարող է ոգտագործվել հետևյալ ձևով, տրվում է տազնապ՝ ողից վարակիչ մանրէներով չիքը ուսմբեր պայթեցնելու մասին: Այդ նշանով բոլորը հավաքվում են վտանգի վայրը՝ վտանգի առաջն առնելու նպատակով: Տեղն ու տեղը քննվում են բոլոր յերեխաները՝ սանիտարական տեսակետից և խկույն ցրվում (ռազմական խաղերի մասին կարգալ Ֆիզկուլս մասը):

Արչավ.— Նախքան արչավի դուրս գալը, պիոներների հետ կազմակերպվում է համառոտ գրույց՝ արչավի առողջապահական նշանակության մասին (հագուտ, քայլվածք, հանգիստ, պաշար, սնունդ և այլն): Բժշկի ոգնությամբ այսպիսի գրույց կարող է կազմակերպել և «առողջապահության գործի կազմակերպիչը»: Կարելի յե արչավի գնացողներին տալ նախորոք պատրաստված հարցաթերթիկ, վորը նա պետք

և յրացնի իր մեկնած տեղում: Արչավի արգյունքները հավաքում են, մշակում ու հայտարարում:

Եֆսկուրսիան.— Ամրապնդում է յերեխաների առողջությունը: Եքսկուրսիան պետք է նախորոք մտածված լինի: Կուլարը նախորոք ծանոթանում է եքսկուր-



Առաջին ոգնություն

սիայի վայրին, կապվելով տեղի կազմակերպությունների հետ, ձեռք բերելով յերեխաների համար քնելու հարմարություն, ուտելու պաշար, շենք և այլն: Տեղ հասնելուն պես յերեխաներին հնարավորություն պետք է տալ հանգստանալու և ապա անցնել ռեժիմի: Ռեժիմի մեջ պետք է մտցնել գետաինյա լող, հանգիստ, և վոչ մի գեսպքում թույլ չտալ որերով գրազվելու ցերեկույթներով ու ներկայացումներով: Եքսկուրսիա գնալիս չպետք է մոռանալ.

1. Սոված դուրս չգնալ:
2. Բորիկ եքսկուրսիա չգնալ:
3. Հազնվել թեթեվ, չկապկպվել գանազան գոտիներով:

4. Ծանրություն վերցնել մեկ- յերկու կիլոյից 'վոչ ավելի:

5. Յերթի ժամանակ սառը ջուր չխմել:

6. Խոնավ տեղեր չնստել, չպառկել:

7. Արեւի որերին գլուխը ծածկել սպիտակ շորով կամ գլխարկով:

1. Աշխատանք կոլվարների հետ

Պիոներական լագերի կուլտ-սանիտարական աշխատանքների հաջողութունն ու իրականացումը խոչոր չափով կախված է ուժեղ ղեկավարութունից: Այդ ղեկավարութունն առաջին հերթին պետք է լինի կոլվարների կողմից: Առանց կոլվարի բավարար ուշադրության, դեպի սանիտարական հարցերը, այդ աշխատանքը հաջողութուն ունենալ չի կարող: Բժիշկը կոլվարին պետք է ծանոթացնի լագերի սան-կուլտ մանրամասնութուններին, հրավիրի կոլվարների խորհրդակցութուն, բացատրի կոլվարի դերն այդ հարցում, բացատրի աշխատանք կատարելու ձեւերը և այլն: Կոլվարները պետք է ստանան մեթոդական գրականութուն, ծանոթ լինեն մանկավարժական ու առողջապահական գիտելիքներին, իմանան յերեխայի հասակային առանձնահատկութունները: Գործնական ղեկավարության հետ միասին, կոլվարից պահանջվում է՝ լինել յերեխաների միջավայրում որինակելի, կարճ մազերով ու յեղունգներով, մաքուր ձեռքերով, մաքուր հագուստով: Կոլվարն ամեն տեղ պետք է լինի կուրտուրական և կարգապահ, հանգիստ ու գիտակից:

Յերեխաների ներկայությամբ չպետք է ծխել:

Բժիշկը կոլվարների հետ հետեվյալ հարցերի շուրջը գրույց պետք է ունենա

1. Պիոներ լագերի ուժի մը:

2. Արեւի, ջուր, ոդ:

3. Առողջապահական աշխատանք մանկական-պատանեկական հասակում:

4. Ֆիզկուլտուրա:

5. Մոտեղ մանկական հասակում:

6. Վարակիչ հիվանդութունները:

2. Աշխատանք տեխ. աշխատակիցների հետ.

Բժիշկն ու քույրը հավաքարարների ու խոհանոցի աշխատակիցների հետ գրույց պետք է ունենան շենքը մաքրելու և հավաքելու մասին, սննդի և առողջապահության մասին:

3. Աշխատանք ծնողների հետ.

Լագեր գնալուց առաջ ծնողների հետ բացատրական աշխատանք պետք է կատարվի՝ լագերի նշանակության, ճիշտ ուժի մասին, արեւի, ոդի, ջրի նշանակության և նրանցից ոգտվելու ձեւերի մասին:

Ծնողներին հայտարարվում է այն իրերի ցուցակը, վոր լագեր գնալուց պետք է վերցնի իր հետ ամեն մի պիոներ:

1. Իրերի պայուսակ.

1. Դանակ, պատառաքաղ

2. Հացի ու թեյի գդալ

3. Բաժակ

4. Ջրաման

5. Ատամի խոզանակ

6. Ատամի փոշի

7. Մանր

8. Աղտահանող (մաշալիս-ձելու)

9. Գրպանի տետր

10. Մատիտ

11. Ձեռքի ոճառ

12. Ներքնակի յերես մեկ հատ

13. Բարձի յերես 2 հատ

14. Մազան-2 հատ

15. Սրբիչ-2 հատ

16. Թաշկինակներ

2. Հագուստեղեն.

1. Տրուսիկ 1 գույգ

2. Մայկա 1 »


3. Սպիտակեղեն 1 գույգ
4. Գուլպա 2-3 գույգ
5. Վերմակ 1 հատ
6. Գլխարկ 1 հատ
7. Կոշիկ 1 գույգ
8. Վերնահագուստ (ցանկալի յե պիտներական, ֆորմա)
9. Վերարկու
10. Զմուռնալ աստեղ, թեյ, մի քանի կոճակ՝ հագուստը կարելու համար:

Ծնողներին պետք է բացատրել իրենց ոգնության սահմանները լազերում: Նրանք կարող են մասնակցել առողջապահական մի շարք իրեր ձեռք բերելու հարցին, որինակ՝ լվացարան, դուշ և այլն: Մասնագետ ծնողները կարող են իրենց գիտությունն ի սպաս դնել պիտներներին, այն է՝ ոգնել իրերի վերանորոգման, յերեխաների համար, սեղան-աթոռ շինելու, դարագներ, անհատական կախարաններ պատրաստելու գործին: Կարելի յե հասարակական կազմակերպությունների, որինակ՝ Կարմիր խաչի, յերեխաների բարեկամների ընկերության, գործարկումների, միությունների և այլն ուշադրությունը հրավիրել դեպի լազերի բացերը:

### 13. ՍՆՈՒՆԴԸ ԼԱԳԵՐՈՒՄ

Յերեխաների առողջացման գործում խոշոր նշանակություն ունի սննդի ճիշտ դրվածքը: Կյանքն ու աշխատանքը թարմ ոգում, լավ ախորժակ և առաջ բերում: Իսպախան չի միայն հոգալ յերեխաների կուշտ լինելու մասին: Նրանք այնպիսի սնունդ պետք է ստանան, վոր համապատասխանի աճող մարմնի պահանջներին ու պարունակի այն բոլոր մասերը, վորոնք անհրաժեշտ են մանկական մարմնի զարգացման համար: Հետեվարար յերեխաների սնունդը պետք է լինի վոչ միայն բավարար չափով, այլև լիարժեք իր հատկություններով:

Իրա համար նրա մեջ պետք է անպայման լինեն.  
1. Սպիտակուցային մասեր, վորոնք անհրաժեշտ են մարմնի բջիջների աճման համար: Սպիտակուցը շատ է կաթի, ձվի, դեղնախճորի, մսի մեջ:



Դեպի լազեր

2. Ճարպեր, վորոնք անհրաժեշտ են մարմնի, մկանների և ուղեղի զարգացման համար: Ճարպը շատ է պանրի, կաթի, ուղեղի, ձվի դեղնուցի, լոբու և այլ բաների մեջ:

3. Ածխաջրերը, վոր մկանային ուժի գլխավոր աղբյուրն են հանդիսանում պարունակվում են հացի, ձափարեղենի, դեղնախճորի, բուսեղենի ու մրգեղենի մեջ:

4. Զանազան լրացուցիչ մասեր կամ վիտամիններ: Վիտամիններն անհրաժեշտ են զարգացող մարմնի համար: Նրա գլխավոր աղբյուրն է կարագը, յուղը, կաթը, ձունը, հում բանջարեղենն ու մրգեղենը:

5. Հանքային աղեր, վորոնք անհրաժեշտ են աճող մարմնի համար: Հանքային աղերով հարուստ են՝ սալթը, վարունգը, սոխը, զագարը, սպանաղը: Այս պատճառով էլ ամառը պետք է ոգտվել և մեծ քանակով բուսեղեն գործածել սննդի մեջ, թույլ չտալ, վոր կանաչին փոխարինեն մակարոնով, մսով կամ այլ մթերքներով:

Ընդհանուր առմամբ լագերի որվա սննդի բաժինը պետք է պարունակի 90 գրամ սպիտակուց, 60 գրամ ճարպ, 500 գրամ ածխածրեր: Կալորաժը պետք է լինի 3000-ից վոչ պակաս, մի յերեխայի համար:

Այն որերը, յերբ նախատեսվում է եքսկուրսիա, յերթ և այլն, ցանկացի յե 10 տոկոսով ուժեղացնել սնունդը: Այդ ուժեղացումը պետք է կատարվի ի հաշիվ ճարպերի ու ածխածրերի, վորովհետև աշխատանքի ընթացքում դրանք ավելի չատ են վատնվում:

Որվա սննդի մեջ պետք է լինեն հետևյալ մթերքները

1. Կաթ	400 գրամ
2. Բանջարեղեն	300 գրամ
3. Գետնախնձոր	200 գրամ
4. Միրգ	200 գրամ
5. Կարագ	35 գրամ
6. Հալած յուղ	20 գրամ
7. Պանիր	40 գրամ
8. Զու	2 հատ
9. Մեղր	20 գրամ
10. Միս-ձուկ	200 գրամ
11. Զավարեղեն (կրուպա)	30 գրամ
12. Բրինձ	25 գրամ
13. Ալյուր	10 գրամ
14. Կարտոֆ. ալ.	5 գրամ
15. Սպիտակ հաց	600 գրամ

16. Մակարոն	30 գրամ
17. Շաքար	50 գրամ
18. Թեյ	5 գրամ
19. Սուրճ	5 գրամ
20. Աղ	8 գրամ
21. Տոմատ	5 գրամ

Մանդացուցակի մեջ դիտավորյալ կերպով առաջին տեղը տրվում է բանջարեղենին, մրգեղենին և յուղին, իսկ հետո արդեն՝ մսին, հացին և այլն:



Պիտներ տարիսներ

Այսպիսով ընդգծվում է, վոր սպորտի սնունդը, մանավանդ ամառը պետք է բաղկացած լինի նախ և առաջ կաթնեղենից, բանջարեղենից, մրգեղենից և սպա՝ ձվից, մսից, ձավարից և այլն:

Վորեվե մթերքի պակասութեան դեպքում այն կարելի չէ փոխարինել մի այլ մթերքով, միայն պետք է աշխատել, վոր փոխարինւող մթերքն իր կալորիայով և բովանդակութեամբ հավասարարժեք լինի:

Պետք է աշխատել, վոր միևնույն սնունդն ամեն օր չկրկնվի, վորովհետև միապազազութեանը յերեխայի ախորժակը փչացնում է, նրան ճանճարացնում է: Նպատակահարմար է, որինակ, այսպիսի դասավորութեամբ. հնգօրյակի առաջին օրը կաթնեղեն, յերկրորդ օրը՝ միս, յերրորդ օրը՝ բանջարեղեն, չորրորդ օրը՝ ձկնեղեն, հինգերորդ օրը՝ միս և այլն:

Ամառը վորքան հնարավոր է միս քիչ գործածել:

Վորպեսզի սննդի մեջ վիտամինները պահպանվեն, բանջարեղենի մի մասը՝ վարունգ, դադար, սոխ և այլն, պետք է գործածել հում վիճակում, վորովհետև յեփելուց վիտամինները փչանում են:

Հում բանջարեղենը կարելի չէ գործածել միայն լավ լվանալուց հետո, վորովհետև չլվացած բանջարեղենի վրա վորդի ձվիկները աղիքային մի շարք հիվանդութեաններ առաջ բերող միկրոբներ կան:

Սննդի պատրաստման ձևը նույնպես խոշոր նշանակութեան ունի, որինակ՝ բանջարեղեն յեփելիս այնքան ջուր պետք է ամել, վոր բանջարեղենը ծածկվի, և յեփելուց ջուրը ծծվի բանջարեղենի մեջ, հակառակ դեպքում ամբողջ սննդարար մասնիկներն անցնում են ջրի մեջ, իսկ ջուրը մեղ մոտ սովորաբար գործ չեն անում:

Կաթը պետք է յեռացնել փակ ամանում և յեռալուն պես կրակից վերցնել ու փակ պահել: Չուն թերխաշ գործածել, և այլն:

Առհասարակ չպետք է մոռանալ, վոր յեփելուց ամեն մի մթերք կիսով չափ փչանում, սննդարարութեանը կորցնում է, իսկ սխալ ձևով պատրաստելիս ավելի չէ անպետք դառնում:

Ոմիչքներից կարելի չէ թուլատրել սուրճը, թեյը, կաթով թեյը: Պետք է գործածել բաց թեյ—մուգը ներվային համակարգութեանը գրգռում և վնասակար է համարվում:

Պետք է խուսափել յերեխաների սննդի մեջ մանանիս, պղպեղ, քացախ գործածելուց: Սրանք գրգռում են ստամոքսը, լյարդը, աղիքները, յերեխամուկները և այլն: Սնունդը լազերում պետք է տրվի որական 4 անգամից վոչ պակաս և միշտ միևնույն ժամերին: Առավոտյան ժամերին թեյը պետք է լինի ավելի ուժեղ և պարունակի որպէս սննդի 30 տոկոսը, ճաշը՝ 40 տոկոսը, յերեկոյան թեյը՝ 10 տոկոսը և ընթրիքը՝ 20 տոկոսը:

Սնունդը լավ մարսելու և յերեխաներին վորոչ առողջապահական ունակութեաններ սովորեցնելու համար, սեղանը պետք է սփրոցով ծածկել, ամեն մեկը պետք է ունենա իր անձեռոցիկը, ամանների թիվը բավարար պետք է լինի, ձեռքերը լվալու համար բավարար չափով ջուր լինի և այլն:

Անհրաժեշտ է հսկել ամանեղենի մաքրութեանը: Նրանց պետք է լվալ յեռացած ջրով, ժամանակ առ ժամանակ ել սողայով և ոճառով:

### 14. ԼԱԳԵՐԱԿԱՆԻ ԼԱԳՈՒՍՏԸ

Լազերում հազնվել թեթեւ, տղաների հազուստը պետք է լինի միայն կարճ վարտիկ, իսկ աղջիկներինը՝ վարտիկ և անթե ու անոճիք դերյա: Կտորը պետք է լինի բաց գույնի ու թեթեւ: Բաց գույնն արեւի ճառագայթները չի կլանում այդպիսի հազուստի մեջ չող չի լինում: Չոր յեղանակին կարելի չէ ման դալ բորիկ, կամ կտորից կարած թեթեւ չստերով: Գլուխը կարմիր չոր կապելը լավ չէ—արեւի ճառագայթները հեշտութեամբ են կլանվում:

Ամեն մի պիտներ վատ յեղանակի համար հետը պետք է ունենա տաք հազուստ, գուլպա, կոշիկ և գլխարկ:

### 15. ԼԱԳԵՐԻ ԲԺՇԿԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Լազերի բժշկի պարտականութեանն է.

1. Կազմակերպել լազերի բժշկա-սանիտարական սպասարկումը:
2. Ղեկավարել լազերի բուժ. կազմի աշխատանքները:

3. Յերեխաների լազեր գալու առաջին օրից բոլորին յենթարկել բժշկական քննության, կազմել անհասական քարտեր:

4. Յերեխաներին դասավորել ըստ խմբերի—առողջ, միջակ, թույլ—համաձայն բժշկական տվյալների:

5. Նշանակել թե ո՞վ ինչպիսի աշխատանք կաջող ե կատարել և ո՞վ ինչից ե ազատվում:

6. Բուժ ողնություն՝ բուժարանում, մեկուսարանում: Հիվանդին ժամանակին բաժանել առողջից, ուղարկել հիվանդանոց, շենքը հականեխել և այլն:

7. Կազմակերպել ողի, արևի վաննաներ, ջրղ և հսկել նրանց կիրառման վրա:

8. Հսկիչ հանդիսանալ Փիզկուլտ ժամերին:

9. Հսկել սննդամթերքի վորակին, պատրաստման ձևերին, կերակրացանկ, խորտկացուցակ (M E H IO) կազմելու յերեխաներին թողնելիք սննդի նորմաների վրա:

10. Ձեռնարկել լազերի սանսլրոֆիլակտիկ աշխատանքները:

11. Պահել ստացված ու գործածված դեղորայքի հաշիվը:

12. Հաշվառում և հաշվետվություն մտցնել լազերի բժ. սպասարկման գործում:

13. Լազերը փակելուց հետո առողջապահական գծով հաշվետվություն ներկայացնել:

Յերկրորդ բժիշկ լինելու դեպքում, յերկրորդին առաջինի ղեկավարությամբ, հանձնարարել բոլոր սանսլրոֆիլակտիկ աշխատանքներ՝ մանկական կոլեկտիվում, լազերի տերիտորիայում, բնակելի շենքերում բաղնիքի, հազուստի և այլ բաների վրա: Հսկել նաև օրվա ռեժիմի ու սան մինիմումի կիրառման, սանսլրոֆիլակտի աշխատանքների վրա և ուղղմասանիտարական դիտելիքների խմբակներ կազմակերպել: Ուղեկցել յերեխաներին եքսկուրսիայի, յերթերի և հասարակական ոգտավետ աշխատանքների ժամանակ:

Ողնել առաջին բժշկին՝ հիվանդներին սպասարկելու գործում: Մասնակցել լազերի խորհրդի նիստերին:

Հսկել, վոր պիտներներն անհատական առողջապահական պահանջները կատարեն:

Առամնարուժը.— Բոլոր հիվանդ ատամ ունեցող յերեխաներին հաշիվ պետք ե առնի, բուժի, ատամների խնամքի մասին նրանց հետ զրույցի: Նա հաշվետվություն պետք ե ներկայացնի լազերի բժշկին:

Լազերի բույրը.— Գլխավոր բժշկի ցուցմունքներով ողնում ե բժիշկներին: Բույրը պատասխանատու յե դեղորայքի պակասորդը ժամանակին հաշիվ առնելուն և այդ մասին հայտնելու յե բժշկին: Միաժամանակ պատասխանատու յե լազերի դեղապահետի համար:

Բուժ կազմի աշխատանքը չափավորված չի, բայց պետք ե հնարավորություն տալ, վոր ամեն մեկը հանգըստի օրերից ոգտվի:

### ԼԱԳԵՐՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԲԺՇԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Լազերի բժշկին սան-տեսչի կոչում ե տրվում:

Լազերի սանիտարական դրության պատասխանատվությունը լազերի ղեկավարի վրա յե ընկնում:

Բժիշկը պատասխանատու յե ժամանակին անհրաժեշտ միջոցառումները գործ դարձնելու համար: Միջոցառումները կարող են լինել՝ լազերի հողամասի, շենքերի, սննդի, ռեժիմի, յերեխաների ծանրաբեռնման, վարակիչ հիվանդությունների վերաբերյալ:

### ՍԱՆՏԵՍՈՒՉԸ ՀԵՏԵՎԹԱԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒՆԻ

1. Ղեկավարությունից պահանջել, վոր լազերի կյանքում կիրառվեն սանառողջապահիկ սովորություններն ու պահանջները:

2. Պահանջել, վոր գործածությունից հանվեն վնասակար իրերը կամ սննդամթերքները:

3. Համաձայն տեսչական հրահանգի՝ սանտեսուչների իրավունքների մասին՝ լազերի բժշկին իրավունք ե տրվում դատական պատասխանատվության յենթարկել և տուգանել այն անձանց, վորոնք սանիտարական պահանջները չեն կատարի:

**ՊԻՈՆՆԵՐ ԼԱԳԵՐԻ ԲԺՇԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ**

1. Յուրաքանչյուր պիոնների համար հատուկ քարտ պետք է լրացնել:

2. Այդ քարտի մեջ պետք է մտցնել այն ամենը, ինչ վերաբերում է տվյալ պիոններին, նրա բոլոր դեմումները թե բժշկին և թե քույրերին: Քարտերը պահել այբուբենական կարգով:

Մանկավարժական դիտողություններն ու մոմենտները մտցվում են քարտի մեջ՝ կոլվարի կամ մանկավարժի կողմից:

3. Բժիշկը բաժանում է յազերի յերեխաներին 3 խմբի՝ ուժեղ, միջակ, թույլ: Յուրաքանչյուր պատճեն պետք է լինի կոլվարի, քրոջ և ֆիզկուլթ հրահանգչի ձեռքին:

4. Ամբողջ որվա կատարած բոլոր աշխատանքները (բժ. քննություն, առաջին ոգնություն, զրույց, ժողով, դիտողություն ուժեղի վերաբերյալ, մասնակցություն եքսկուրսիային), պետք է մտցնել բժշկի մատյանը:

5. Մանկատարական հսկչի տվյալները՝ բակի, նրնջարանի, ճաշարանի, ախումբի, բուժարանի, մեկուսարանի, խոհանոցի, պահեստի և այլ բաների մաքրություն մասին՝ բժիշկը մտցնում է ընդհանուր տետրի մեջ:

6. Մեկուսարանը պետք է ունենա իր հուշատետրը, վորի մեջ գրվում են հիվանդին վերաբերող բոլոր դիտողությունները:

7. Ամբողջ աշխատանքը վերջում բժիշկն է ամփոփում:

**ԼԱԳԵՐԻ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

1. Յերեխայի ընդհանուր տեսքը, լորձաթաղանթի ու մաշկի գունափոխումը:
2. Յերեխայի քաչի ավելացումը:
3. Գլխացավի, վոտ ախորժուկի, վոտ քնի անհայտացումը:

4. Որչեկտիվ գանգատների չքացումը (ջերմության տատանումների վերացում, սրտի աշխատանքի կանոնավորում և այլն):

5. Ակտիվության և աշխատանքի ունակության բարձրացումը:

6. Առողջապահական ունակությունների յուրացումը:

7. Կոլեկտիվ ունակությունների զարգացումը տրվյալ յերեխայի մեջ:

**16. ԼԱԳԵՐ ՍԱՆԱՏՈՐԻԱ**

Ամառային առողջապահական միջոցները, որինակ՝ մասսայական լազերները, հրապարակներն ընդգրկում են մասսայական դպրոցների յերեխաներին:

Այն պայմաններն ու ուժեղացումը, վոր բավարար են համարվում մասսայական լազերների յերեխաների համար, հաճախ անբավարար են ֆիզիկապես թույլ յերեխայի առողջությունն ամրապնդելու համար:

Այսպիսի յերեխաների համար դոյություն ունեն լազեր-սանատորիաներ, ուր բոլոր առողջարար միջոցներն անց են կացվում բժշկի հսկողությամբ: Լազեր-սանատորիայում լայն կերպով պետք է ոգտագործվեն ֆիզկուլթուրայի բոլոր ձևերը՝ սկսած լիցքից մինչև ազատ ու շարժական խաղերը, եքսկուրսիա, զբոսանք և այլն:

Լազեր-սանատորիայի համար յերեխաներ ընտրելիս, բժիշկը պետք է առաջնորդվի վորոչ ցուցանիշներով:

**ԼԱԳԵՐ-ՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՈՐԻՆՍԱԿԵԼԻ ՌԵՃԻՄԸ**

1. Արթնանալ	7,10 ր
2. Լիցք	7,10-7,25
3. Առամիները մաքրել, լվացվել, անկողինը հավաքել	7,25-8,0
4. Աշխատանքի բաժանումը	8,0-8,20
5. Թեյել	8,0-9,0
6. Աշխատ. հոկամբ. համար պիոններների համար	9,0-10,0
	9,0-10,30

7. Աշխատանքից վերադառնալ, նախա- ճաշի պատրաստութիւն	10, 30-10, 45
8. Նախաճաշ	10, 45-11, 15
9. Ազատ ժամ	11, 15-12, 0
10. Արևի վաննա, դուշ, լող	12, 0-1, 0
11. Ճաշի պատրաստութիւն, ձեռքերը լվալ	1, 0-1, 30
12. Ճաշ	1, 30-2, 0
13. Մեռյալ ժամ	2, 0-4, 0
14. Թեյի պատրաստութիւն, թեյեի	4, 0-4, 30
15. Աշխատանքի պատրաստութիւն	4, 30-5, 0
16. Աշխատանք	5, 0-6, 30-հոկա. (5, 0-6, 0)
17. Գործիքները հանձնել, ընթրիքի պատրաստութիւն	6, 30-7, 0
18. Ընթրիք	7, 0-7, 15
19. Հանգիստ դրաղմունք, խաղեր, ընթեր- ցում, խարույկ	7, 15-8, 30
20. Պատրաստել քնելու հոկտեմբերիկ- ներին	8, 30-9, 0
21. Որվա աշխատանքների ամփոփում	8, 30-9, 0
22. Պատրաստել քնելու պիտոներներին	9, 0-9, 30
23. Քուն	9, 30-7, 0 առավոտյան:

**ՌԵԺԻՄԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ**

1. Արթագնելուց 10-15 րոպե առաջ չափել անկող-  
նում յերեսանների տաքութիւնը:
2. Լիցքը կատարել Ֆիզկուլտ հրահանգչի, բժշկի  
հսկողութիւնում:
3. Ամեն առավառ հերթապահ սանիտարի, կամ  
կողմարի հսկողութիւնում մինչև գոտկատեղը լվացվել և  
մաքրել ատամները: Յուրաքանչյուր յերեսա հատուկ  
արկղում կամ պահարանում պահած պետք է ունենա իր  
ոճառը, խոզանակն ու սրբիչը:
4. Ռեժիմը հայտարարել կողմարի ու բժշկի ներ-  
կայութիւնում:
5. Սնունդը պետք է համապատասխանի աճող որ-  
գանիզմի պահանջներին թե քանակի տեսակետից և թե

վորակի: Մնդի մեջ անհրաժեշտ է մտցնել մրգեղեն,  
բանջարեղեն, կերակրացուցակ կազմելիս մտցնել բազ-  
մազան կերակուրներ: Կերակրել հինգ անգամից վրջ  
պակաս կալորաժամը մինչև 3000:

Յերկրորդ նախաճաշը պետք է լինի թեթևամարս:  
Անհրաժեշտ է ստեղծել առողջապահական պայման-  
ներ՝ սեղաններին մաքուր սփռոց, բավարար չափով  
ամանեղեն և սնունդը բաժանելիս կարգ պահպանել:  
Կողմարները պետք է հերթապահեն սննդի ժամերին:

6. Ազատ ժամ: Այդ ժամին յերեսաններն ազատ են  
և զրաղվում են իրենց հետաքրքրող գործով՝ անհա-  
տական ընթերցանութիւնում, ազատ խաղերով, նկար-  
չութիւնում և այլն:

7. Արեւի վաննան, դուշը և լողը բժշկի կողմից  
խիստ չափավորված պետք է լինեն:

8. Հետճաշյա հանգիստն անց է կացվում բացո-  
թյա, վորի համար պետք է լինի հատուկ տեղ՝ սովերի  
տակ: Յեթե հանգիստը բացոթյա հնարավոր չէ, կարելի  
յէ ննջարանում անցկացնել, բացելով բոլոր լուսա-  
մուտքները:

Վեր կենարուց 15 րոպե առաջ բոլորի տաքութիւ-  
նը նորից ստուգել:

9. Հանգիստ խաղերն ու ընթերցանութիւնը կա-  
տարել այնպես, վոր քնելուց առաջ յերեսանները չը-  
գըրգռվեն: Ուարույկը պետք է լինի 10 րոպե մի անգա-  
մից վրջ ավելի:

10. Քնելու պատրաստութիւն: Քնելուց առաջ  
բոլորը վորքերը տաք ջրով լվանում են, ատամները  
մաքրում: Հոկտեմբերիկներն այդ գործողութիւններն  
առաջին հերթին են կատարում: Ժամը 9-ին հոկտեմ-  
բերիկների և 9, 30-ին պիտոներների ննջարանում տիրում  
է խորը լուութիւն:

Այս ռեժիմը տրվում է իրրև հիմք, վորով և կա-  
ռուցվում է սանատորիայի կյանքը, հաշվի առնելով  
տեղի պայմաններն ու հատկութիւնները:

**ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԼԱԳԵՐ-ՍԱՆԱՏՈՐԻԱՅՈՒՄ**  
Բացի Ֆիզկուլտուրայի այնպիսի ձևերից, ինչպիսի-

սին են լիցքը, լողը, արևի վաննան, եքսկուրսիան, կան մի շարք սպորտ և ազատ խաղեր:

Շարժական խաղերի համար անհրաժեշտ է ունենալ լայն ու ազատ հրապարակ: Վաղըի հետ կապված խաղերը թույլ են տրվում միայն բժշկի կարծիքն ստանալուց հետո: Սաղերը կատարում է Փիզիկուլտ հրահանգիչը, կամ կոլվարը: Սաղերի անվողութունը 40-45 րոպե պետք է լինի:

Սպորտ խաղերից կարելի չէ առաջարկել, վալեյբոլ, պիոներբոլ, գորդկի, իտալական լուպտա, անհյունի գնդակ և այլն:

### ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Լազեր- սանատորիա հասնելուն պես մեքենայով պետք է խուզել նրանց մաղերը, լողացնել, հազուստը փոխել և ապա մաքուր անկողին ու մահճակալ հասկացնել:

Հետագայում 10 օրը մի անգամ տաք ջրով և ոճառով պետք է լողացնել:

Հինգ օրը մեկ գլուխը պետք է լվանալ և սպիտակեղենը փոխել: Լազեր սանատորիայի աշխատակիցները բժշկական քննության պետք է յենթարկվեն:

Մասնավոր մարզկանց սանատորիա չպետք է թողնել:

Այն յերեխաները, վորոնք անցյալում մալարիա յեն ունեցել, պետք է յենթարկվեն խինինով պարբերաբար բժշկվելու:

Լազեր սանատորիան պետք է ունենա մեկուսաբան՝ առանձին մուտքով: Ամեն մի հիվանդացող, մինչև հիվանդության պարզվելը, առանձնացվում է մեկուսարանում:

Վարակիչ հիվանդության դեպքում հիվանդն անմիջապես փոխադրվում է հիվանդանոց:



### Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

### ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԾՔԸ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԼԱԳԵՐՆԵՐՈՒՄ

Համկոմիտեի կենտրոնի 32 թ. Ապրիլի 21-ի պատմական վորոշումը՝ պիոներ կազմակերպության աշխատանքների մասին՝ հանդիսանում է առողջ փոխարինողներ պատրաստելու և Փիզիկական կուլտուրայի դրվածքը յերեխաների շրջանում ե՛լ ավելի ուժեղացնելու և մասսայականացնելու հիմնական գործոնը:

Յեթե մենք այս ուղղությամբ բավարար աշխատանք չենք ծավալել, ապա այդ մեր թուլության և անչորհքության հետեվանքն է: Այս ուղղությամբ թե Փիզիկուլտուրայի դասատուներն ու հրահանգիչները և թե պիոներական աշխատողները գործնականում չեն կարողացել գլխավորել այն բուռն յեռանդն ու համալրանքը, վորը յերեխաներն ունեն դեպի Փիզիկական դաստիարակության գործը: Դպրոցներում անբավարար են Փիզիկուլտուրայի հարմարությունները — Փիզիկուլտուրայի դահլիճները, հրապարակները, գույքը, ստադիոնը և այլն: Յերբեք չի կարելի հանդուրժել այն յերեվույթը, վոր այսօր մեզ մոտ 40 հազար մեծահասակ Փիզիկուլտուրիկների ամբակուռ բանակի կողքին մանկական Փիզիկուլտ ինքնագործ խմբակներում ընդգրկված են ընդամենը 6000 հոգի, այնինչ մեր աչքի առաջ բազմաթիվ յերեխաներ դպրոցական աշխատանքներից հետո անկազմակերպ թափառում են փողոցներում, վատնելով իրենց մանկական վոսկե ժամերը:

Յերեխաների Փիզիկական կուլտուրայի ուղղությամբ ստեղծված յուրաքանչյուր հարմարություն, մեծագույն չափով կնպաստի նրանց ժամանցը խեղ-

ցիորեն կազմակերպելու և փողոցից կտրելու նույնքան կարևոր գործին:

Վերոհիշյալ բացերը վերացնելու համար խոշոր գործոններ են հանդիսանում ամառային առողջապահական հրապարակներն ու պիոներական լազերները:

Այնպիսի մի ամփոփ միջավայր, ինչպիսին են լազերներն ու հրապարակները, վորոնք հատուկ ուժիմ և կոչեկտիվ կյանքի լայն հարմարություններ ունեն, լայն կերպով պետք է ոգտադործվեն յերեխաների առողջացման գործը կազմակերպելու համար:

Ինական Փակտորների (արև, ոդ, ջուր) բարերար ազդեցության տակ, ամառային ամիսներին մեր հիմնական աշխատանքը լինելու յե այն, վոր յերեխաների առողջացման գործը կազմակերպելու տեսակետից մասսայականացնենք ու խորացնենք Փիզիկական դաստիարակության գործը՝ տոկուն և ամրակազմ յերեխաներ պատրաստելով անդասակարգ սոցիալիստական հասարակայնության համար:

Պիոներական յազերների և ամառային հրապարակների Փիզիկական դաստիարակության հիմնական տեսակներն ու ձևերն են.

ա) Առավոտյան լիցքային վարժություններ կառարելը:

բ) Ֆիզկուլտ դասերը:

գ) Շարժական և սպորտ խաղերը:

դ) Սպորտի զարգացումը:

ե) Մասսայական միջոցառումների և եքսկուրսիաների ժամանակ Փիզկուլտ ելեմենտներ մտցնելը:


## 18. ԱՌԱՎՈՏՅԱՆ ԼԻՑՔԱՅԻՆ ՎԱՐՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍԱՐԵԼԸ

Առավոտյան լիցքային վարժությունները պետք է կատարվեն լազերում կամ հրապարակում ամեն որ արթնանալուց մինչև թեյելը (տես ուժիմը):

Լիցքային վարժությունների նպատակն է՝ ապահովել յերեխաների առողջությունը, զարգացնել և ամ-

րացնել մարմինը, աշխուժացնել որգանիզմը՝ քնից ու հանգստից հետո և այն նախապատրաստել որվա հետագա աշխատանքներին ավելի թարմ, ավելի կենսունակ վիճակում դիմավորելու համար:

Լիցքային վարժությունները, բացի վերոհիշյալից, խոշոր նշանակություն ունեն նաև պիոներական հասակի յերեխաներին հեռու պահելու հատուկ, հակաառողջապահական, անբնական յերեվույթներից (վողնաչարի ծոռւմ, ախորժակի կորուստ, հոգնածություն, դժվար ըմբռնում և այլն), վորոնք առաջ են դալիս տնային, դպրոցական և հասարակական աշխատանքներով ծանրաբեռնված լինելուց, վատ ողից, նստակյաց աշխատանքից, անկանոն շնչառությունից և այլն:



Առավոտյան լիցք

Այս վարժությունների մեծագույն արժեքն այն է, վոր լիցքի սահմանափակ ժամանակամիջոցում (10-15 րոպե) տրված վարժությունների ճիշտ կատարումը յերեխային լայն հնարավորություն կտա Փիզիկապես համաչափ զարգանալու և բուժելու մարմնի այն պակասությունները, վոր նշեցինք վերը: Լիցքային վարժություններ կատարելու համար սահմանված ժամանակը պետք է լինի 9-12 տարեկանների համար 8-10 րոպե, իսկ 13-15 տարեկանների համար 10-15 ր.:

Յեթե լիցքով պարապողների մեջ Փիզիկապես թույլ յերեխաներ կան, նրանց պետք է առանձնացնել և շարժումների մեջ տարբերություն դնել, այսինքն՝ յե-

Թե տվյալ շարժումն առողջները կրկնելու յեն 8-10 անգամ, ապա Ֆիզիկապես թուլերը պետք է կրկնեն 5-6 անգամ: Վորպես խորհրդային Ֆիզիկուլտուրայի հիմնական սկզբունք, լիցքային վարժություններին մասնակցողները յենթարկվելու յեն բժշկական հսկողության և սխտեմատիկ հետազոտման:

### 19. ՖԻԶԿՈՒԼՏ ԴԱՍԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ֆիզիկուլտուրայի դասերի կազմակերպման աշխատանքները լազերում այն ժամանակ միայն կարելի յե կատարել, յերբ լազերն ապահովված է Ֆիզիկուլտ դասատուներով, կամ այդ ուղղությամբ պատրաստված կոլլեարներով:

Դասերի հիմնական նյութը հանդիսանալու յե Ֆիզիկուլտ ձեւերի (քայլք, վաղք, նետում, թռիչք և այլն) առանձնացումն այն իմաստով, վոր լազերային տաժի միջավայրում պիտոներները կարողանան վերոհիշյալ ձևերն ել ավելի խորացնել, ձեռք բերելով Ֆիզիկուլտուրայից ընդհանուր պատրաստականություն: Այս բանին դուրընթաց, դասը պետք է ընդգրկի նաև այն հիմնական մոմենտները, վորոնք կապված են նորմատիվ ցուցանիշների պատրաստման և հանձնման խնդիրների հետ:

Ֆիզիկուլտ դասերի տեղությունը, լինելու յե մինչև մի ժամ, իսկ պարապմունքները՝ տասնորյակում 2-3 անգամ:

### 20. ՇԱՐժԱԿԱՆ ՅԵՎ ՍՊՈՐՏ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Շարժական խաղերի դերն ու նշանակությունը յերեսների Ֆիզիկական դաստիարակության գործում, չափազանց խոշոր է. այստեղ հանգամանորեն կանգ առնել այդ նյութի վրա հնարավոր չե և մեր նյութից դուրս է: Միայն անհրաժեշտ է հիշեցնել Ֆիզիկուլտ

դասատուներին և կոլլեարներին, վոր Ֆիզիկուլտուրայի այդ ձևերի զարգացումը պետք է լազերային և առողջապահական հրապարակների Ֆիզիկուլտ ծրագրի հիմնական մասը հանդիսանա:

Շարժական խաղեր պետք է կատարել գրեթե ամեն օր, բացառությամբ այն օրերի, յերբ տվյալ կոլեկտիվը Ֆիզիկուլտուրայի դաս կամ սպորտ պարապմունք ունի: Այդ օրերին հատուկ շարժական խաղեր կազմակերպելն արգելվում է, վորովհետև դասերի մեջ արգեն խաղեր տրվում են:

Վորովհետև շարժական խաղերն իրենց կազմությամբ խոշոր չափով կապված են վաղքերի, թռիչքների և դանազան ճարպիկ շարժումների հետ, վորոնք խոշոր չափով ենեղբիա յեն խլում յերեսներին, ուստի խաղերի տեղությունը ժամանակամիջոցի վորոշ սահման պետք է ունենա: 9-12 տարեկան յերեսաների համար 30-40 րոպեյի խաղը բավարար է համարվում, իսկ 13-15 տարեկանների համար՝ 40 րոպեյից մինչև մեկ ժամ: 16-17 տարեկանների համար, յերեսները տվյալ շարժական խաղը հետաքրքրում է յերեսներին և իր ընույթով հոգնեցնող չե, կարելի յե դրանով ու մի հանդստացնող խաղով դասը վերջացնել, իսկ հակառակ դեպքում, կարելի յե խաղի տեսակները փոխել. միայն 3 խաղից վոչ ավելի:

Շարժական խաղերից հետո, յերեսների չնչառությունը կանոնավորելու համար հանդիստ խաղեր կամ վարժություններ պետք է կազմակերպել, վոր և շարժական խաղերի հիմնական պայմանն է հանդիսանում:

Սպորտ մրցակցական բնույթ կրող խաղերի ուղղությամբ 9-12 տարեկանների համար ոգտակար և ուսանելի յեն՝ «ռուսական լապտա», «բուլավաների տեղափոխություն», «անկյունի գնդակ», «հետքերով» և այլն խաղերը: Մեծահասակների համար (14-15 տ.) հանձնարարելի յեն նույն խաղերը, ինչպես նաև «վալկյ-բոլ», «բասկետ-բոլ», «ֆուտ-բոլ»: (14-16 տար.

յերեխաների համար հրատարակված կանոնագրքով) «գորողի», «պիոններ-բոլ» և այլն սպորտ խաղեր:

Ամառային սեզոնին բոլոր տիպի խաղերը պետք է փոխադրված լինեն դուրս—բացօթյա կատարվեն:

Պաղատայրի սանիտարական մաքրությունը պետք է ապահովվի: Բացի այդ, այդ վայրերում մաքուր և առողջարար ջրի գոյությունն ուղղակի պահանջ և անհրաժեշտություն պետք է դառնա: Շարժական և սպորտ խաղերը նպատակահարմար է կատարել առավոտյան ժամը 9-11 և յերեկոյան՝ 6-8-ը:

## 21. ՄՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Յեթե այստեղ առանձնապես շեշտում ենք սպորտի զարգացման մասին, ապա այդ չի նշանակում, թե վերը հիշված բաժիններում այս ուղղությամբ աշխատանք չի կատարվում: Միայն կլինեն այսպես կարծե-  
լը:

Այն, ինչ վերը նշեցինք, Փիզկուլտուրայի այն անհրաժեշտ ձևերն ու տեսակներն են, վորոնք ընդհանուր Փիզպատրաստականություն են հանդիսանում յերեխայի համար և նախապատրաստական աշխատանք՝ սպորտի այս կամ այն ձևին ծանոթացնելու ուղղությամբ: Իսկ սպորտի այս կամ այն ձևի զարգացումն ու խորացումը մեր ուշադրության կենտրոնում պետք է լինի:

Անցյալում մեր լազերներում սպորտ ձևերի զարգացման գործին, դժբախտաբար, հարկ յեղած ուշադրություն չի դարձվել, մինչդեռ սպորտի զարգացման հասկացողությունը գրեթե ընդգրկում է Փիզկուլտուրայի բոլոր ձևերի մասսայական անցկացումը:

Առանձին սպորտ սեկցիաներ գոյություն չունենալու պատճառով, գրեթե հաշվի չեյին առնվում յերեխաների պահանջներն ու ցանկությունները՝ սպորտի այս կամ այն ձևին մասնակցելու համար:

Այժմ, յերբ մեր առաջ իր ամբողջ սրությամբ գրվել է յերեխաների մեջ սպորտի զարգացման գործի

կազմակերպումը, անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր յերեխայի պահանջն ու ցանկությունը՝ այս կամ այն սեկցիային մասնակցելու համար: Անկասկած, այս չի նշանակում, թե սեկցիաներում ընդգրկվածները պետք է սահմանափակվեն միայն սպորտի մի ձևի մեջ խորանալու խնդրով: Ընդհակառակը, նրանք պետք է մասնակցեն լազերի Փիզկուլտ մասսայական աշխատանքներին, ձեռք բերեն Փիզկուլտ պատրաստականություն, վորպեսզի կարողանան ելլ ավելի խորացնել տվյալ սպորտի ձևը, ձեռք բերելով լավագույն սպորտ-տեխնիկական ցուցանիշներ:

Մի յերեխա կարող է հետևել յերկու սպորտ-ձևի, կարող է անդամագրվել և պարապել 2 սեկցիայում, բայց վոչ ավելի, այն ել այնպիսի դեպքում, յեթե նրա առողջությունը ներում է:



Սուսա

Վորպեսզի մի ծայրահեղությունից մյուս ծայրահեղության մեջ չընկնենք, անհրաժեշտ է սեկցիաների թիվը լազերային պայմաններում, առանձնապես կոլեկտիվներում, հասցնել այն չափի, վորքան կազրերի խնդիրն է ներում: Յեթե տվյալ կոլեկտիվում Փուլբոլի սեկցիան դեկավարող, կամ այս ուղղությամբ պատ-

բոստոված ղեկավար չկա, պարզ է վոր այսպիսի պայմաններում հնարավոր չէ Փուտբոլի սեկցիա կազմակերպել:

Սպորտ աշխատանքների ծավալման և մասսայականացման միջոցներից մեկն էլ ցուցադրական միջկուլեկտիվային և լազերային մրցումներն են: Այս խնդրի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնեն լազերի Ֆիզկուլտ դասատուները:

Մրցումների տեսակի ու թվի մասին դժվար է ասանձին սահման վորոշել, քանի վոր այդ խնդիրը կապված է լազերային ռեժիմի, սովյալ լազերի Ֆ. Կ. դասատուի և յերեխաների պատրաստականության հետ: Սովորաբար դաստիարակչական տեսակետից չափազանց արժեքավոր ազդեցություն է թողնում լազերի յերեխաների վրա այն, յերբ սպորտ ձևերից մի քանիսը ցուցադրական կարգով խաղացվում են լազերի բացման և փակման հանդեսում, իսկ լազերային մրցումները սովորաբար կազմակերպվում են լազերը փակվելուց 5-7 որ առաջ, պարզելու այդ ուղղությամբ ձևեր բերված նվաճումները:

## 22. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՖԻԶԿՈՒԼՏ. ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Լազերային պայմաններում մասսայական միջոցառումների (գրական յերաժշտական յելույթներ, ժամանցներ, պտույտներ, խարույկ և այլն), ինչպես և բոլոր տեսակի եքսկուրսիաների և արշավների ժամանակ, անհրաժեշտ է վոր Ֆիզկուլտ ելեմենտները արտահայտվեն և իրենց ձևով ու բովանդակությամբ նպաստեն սովյալ աշխատանքի հաջող կազմակերպմանը:

Որինակ՝ խարույկի ժամանակ յերկար պտույտվածքներ կարողալիս մեջընդմեջ կարելի յէ մի բոպե յերեխաներին փոքրի կանգնեցնել, տալ թեթեւ լիցքային և ուղիղ շարժումներ, կամ գրական յերաժշտական յելույթներում ապահովել հետաքրքիր խաղերի ու շարժումների ցուցադրում և այլն:

Յերբ եքսկուրսիաները կազմակերպվում են լազերի մոտակա գյուղերում, կոլխոզ-սովխոզներում, կամ պատմական վայրերում, այն ժամանակ խոշոր չափով պետք է ուշադրություն դարձնել, վոր եքսկուրսիայի գնացողները կարողանան ճանապարհին, հանդստի ժամանակ, զանազան զվարճալի խաղեր կազմակերպել, իսկ գյուղերում՝ մրցումներ, մարզական յելույթներ, ռազմական խաղեր և այլ մասսայական Ֆիզկուլտ աշխատանքներ, վորոնք ուսանելի և դաստիարակիչ լինեն սովյալ միջավայրի յերեխաների և բնակչության համար:



Պարի խմբակը պարապմունքի ժամին

Յեթե ուսումնասիրելու և լող սովորելու նպատակով հատուկ եքսկուրսիա յէ կազմակերպված դեպի մոտակա գետերը կամ լճերը, անհրաժեշտ է վոր եքսկուրսիայի ղեկավարը լավ լողալ իմանա:

Այսպիսի դեպքերում յողանալը պետք է կապել լող սովորելու հետ, անկասկած, վոչ այն իմաստով, ինչ կատարվում է լողալու հատուկ պարապմունքի ընթացքում:

Վորպես միինմում, անհրաժեշտ է յերեխաներին ծանոթացնել և բարեկամացնել ջրի հետ: Յեթե լողալու տեղը խոր, քարքարոտ ու վտանգավոր չէ, ջրի մեջ կարելի յէ կազմակերպել զանազան հետաքրքիր գնդակխաղեր և լողալու պարզ շարժումներ, վորոնք յերեխայի մեջ դաստիարակեն ջրի յերեսին իրեն պա-

հելու, իր ուժերի վրա վատահուժյուն ունենալու և դեպի լողալու արվեստը ձգտում ունենալու ունակություններն ու հատկությունները:

Լազերային պայմաններում ջրի լայն չափով ոգտագործումը, մասնավորապես յերեխաներին լողալ սովորեցնելու տեսակետից, պետք է հանդիսանա ջազերային աշխատանքներից մեկը: Լող սովորեցնելու ժամանակ պետք է զգուշանալ յերեխաների դեկավարությունն այնպիսի մեկին հանձնելուց, վորը լողալ չի իմանում: Անկասկած՝ խոսքն այն բանին է վերաբերվում, յերբ լողալու տեղը բավական մեծ է և հատուկ լողվորի կարիք է զգացվում, իսկ յերբ լողալու տեղը առու յե, կամ փոքրիկ գետակ, այն դեպքում կոլվարը կամ Փ. Կ. դասատուն կարող են այդ աշխատանքները կատարել, առողջապահության տեսակետից բժշկի խորհուրդներին դիմելով (լողալու ռեժիմի և նրա տեղում թյան մասին տես այս գրքի առողջապահական մասում):

### 23. ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՀԱՍԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Լազերում Ֆիզկուլտուրայի դասերը, ինչպես նաև Ֆիզկուլտ այլ պարապմունքները հիմնականում պետք է բղխեն «նորմատիվ ցուցանիշների» բովանդակությունից:

Շատ հաճախ մեր լազերներում մի շարք Ֆիզկուլտ դասատուներ պիոներներից պահանջում են հանձնել նորմատիվ ցուցանիշները, այնինչ նույն դասատուներն այդ ուղղությամբ գրեթե վոչ մի աշխատանք չեն կազմակերպել: Մինչև այժմ վոչ միայն լազերներում, այլև դպրոցներում այդ գործի կազմակերպման ուղղությամբ գրեթե աշխատանք չի կատարվել, չնայած նորմատիվ ցուցանիշների ուղղությամբ Համամիութենական Ֆիզկուլտուրայի գերագույն խորհրդի 1932 թվի վորոշում և մանրամաս ծրագիր կա:


Այս գործի կազմակերպման համար ամենից առաջ անհրաժեշտ է լայն բացատրական աշխատանք կատարել մանուկների և պատանիների հոծ զանգվածներ համախմբել Ֆիզկուլտուրայի շուրջը, և յերեխաներին լայնորեն ծանոթացնել «յեղի՛ր պատրաստ աշխատանքի և յերկրի պաշտպանության» կրծքանշանի քաղաքական և դաստիարակչական արժեքին:



Զվարճալիքի ժամ

Նորմատիվ ցուցանիշների բովանդակությունը կազմում են՝ քայլեր, վազք, հավասարակշռություններ, նետումներ, ցատկումներ, դահուկներ, սպորտ խաղեր, առողջապահական մարմնամարզության կոմպլեքս, սողալ և ջրից անցնել, հակագագ և մագլցում: Ֆիզկուլտուրայի այս ձևերը յերեխաների մեջ մասսայականացնելը նպատակ ունի, մի կողմից՝ ամրացնել և խորացնել դպրոցներում դասավանդվող Ֆիզկուլտուրան և՛, մյուս կողմից պատրաստել Ֆիզիկապես առողջ մասսա, վորն իր Ֆիզիկական բազմակողմ մի ունակություններով սոցիալիստական հասարակության առողջ սերունդ հանդիսանա:

Այս ուղղությամբ պետք է ընթանա մեր լազերների Ֆիզիկական կուլտուրան: Ֆիզկուլտ դասատուներից և պիոներական կոլվարներից պահանջվում է հաշվի առնել անցյալ տարիների սխալը և այդ սխալը այս տարի չկրկնելու համար ստեղծել այնպիսի հար-



«ՊԱՊ» մանկական կրթական

24 ՖԻԶԿՈՒՆԸ ԴԱՍԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ  
Տարիք 9—12, համաձայն նորմատիվ ցուցանիշների

I ԴԱՍ

1. Քառյակներ կազմել (տեղում), քայլք վորոչ տարածության վրա (ուղղություն ճակատից և խորությամբ 3—5 րոպե:
2. Վազքի պոկման ուսուցում (ստարտ) 6—8 »
3. Նետում նպատակին (խոկեյնի կամ տենիսի գնդակ) 12—15 րոպե:

մարտի յուններ, վոր  
յերեխաները, ընդհա-  
նուր առողջապահու-  
թյան աշխատանքներին  
գուզընթաց, իրոք լավ  
սովորեն և խորանան  
ֆիզկուլտուրայի աշխա-  
տանքների մեջ:

Նորմատիվ ցուցանիշ-  
ների աշխատանքների  
կազմակերպման համար  
ընկ. Հ. Փարսադանյա-  
նի «Ֆիզկուլտուրա»  
գրքույկը միանգամայն  
սպառիչ կերպով պա-  
տասխանում և այս ուղ-  
ղությամբ ծագելիք  
հարցերին: Այն պարու-  
նակում և նորմատիվ  
ցուցանիշների պատ-  
րաստման և հանձնման  
բոլոր խնդիրները՝ ծրա-  
գրային և մեթոդական  
ցուցումներով:

Նպատակ—նշանացույցը Փաներայից պատրաստված  
քառակուսի մի տախտակ է՝ յուրաքանչյուր կողը  
70 ս. մ. բարձրությամբ: Նշանացույցի բարձրու-  
թյունը գետնից մի մետր է լինելու: Նետում նշա-  
նացույցին լինելու յե 6 անգամ (3-ը՝ աջ, 3-ը՝  
ձախ ձեռքով): Հեռավորությունը նշանացույցից՝  
աջ ձեռքի համար 6 մետր, ձախի՝ 5 մետր:

4. Ցատկում բարձրության (պարանի վրայով՝  
դու քաշած 10—12 րոպե:  
Ցատկումները լինելու յեն անհատական (մեկ-մեկ):  
Ցատկումներն աստիճանաբար ավելացվում են մին-  
չև 60 ս. մետր այն հաշվով, վոր յուրաքանչյուր  
մասնակցողն ունենա 6—8 թուիչք:
5. Դանդաղ վազք 1—1½ րոպե:
6. Վազքից անմիջապես հետո դանդաղ քայլք (½ ր.)  
և ավելի դանդաղ (1 րոպե) 1—½ րոպե:  

---

Ընդամենը 30—40 րոպե:

II ԴԱՍ

1. Կազմել մի շարքանի սյուն: քայլք (½ րոպե), դան-  
դաղ վազք (½ րոպե), քայլք (½ րոպե), միասյու-  
նի վերածում քառաշարի 3—5 րոպե:
2. Ընդհանուր նախապատրաստական վարժություն-  
ներ 10—12 րոպե:

Առավոտյան լիցքային վարժությունների II-րդ  
կոմպլեքսի (տես՝ Մ. Մամիկոնյանի «Լիցքային  
վարժություններ» գրքույկը) կատարումը, ավե-  
լացնելով շարժումների չափավոր բեռնվածությունը  
25—50 %-ի սահմաններում: Որինակ՝ յեթե շար-  
ժումների տվյալ ձևը նախորդ դասերին կրկնվել է  
6—8 անգամ, այժմ կրկնվելու յե 8—10 անգամ:

3. Հետքերով (կամ այլ մրցակցական խաղ) 20—25 ր.:  
Յեթե խաղը ծանոթ է յերեխաներին, պետք է  
անցնել լրիվ որենքներով, հակառակ դեպքում՝  
մաս-մաս:

4. Վազքեր (ղանազան տեմպի և տեսակի) 2-3 բույս:
5. Քայլք դանդաղեցրած ( $1/2$  բ.), ավելի դանդաղ ( $2\frac{1}{2}$  բույս)

Ընդամենը 40-50 բույս:

### III ԴԱՍ

1. Կազմել մի շարքանի սյուն: Քայլք շրջանակում: Ձեռքերը պարզած ծափ տալ, առաջ, դիտից վեր, դիտի հետեւ, դեպի հետ (հաշվի չափը քայլքի հետ) 3-5 բույս:
2. Հալասարակչութուն (հորիզոնական դերանբում), բարձրութուն՝ 50 ս. մետր 6-8 բ.: Քայլք սյունի վրա, դեմքի ուղղությամբ՝ յուրաքանչյուրի համար 3-4 անգամ:
3. Ցատկում յերկարությամբ (տեղից) 8-10 բույս:
4. Նետում ըստ հեռավորության (խօսեյնի գնդակ) 10-12 բույս:  
Նետում տեղից, յուրաքանչյուրի համար 4-6 բ.: Նետում (2-3-ը՝ ձախ, 2-3-ը՝ աջ ձեռքով):
5. Հանդիպողական եստաֆետ (դրոշակով) — 6-8 բ.: Ամենաչատր 3 անգամ (հաջորդն սկսում է վաղք, յերբ իր կողմի վազողը դրոշակը տալիս է իրեն): Դանդաղ քայլք 1-2 բույս:

Ընդամենը 35-40 բույս:

### IV ԴԱՍ

1. Քայլք ( $1/2$  բույս), վաղք դանդաղ ( $1/2$  բույս), քայլք ( $1/2$  բույս) միաշարից կազմել քառաշար 3-5 բույս:
2. Ընդհանուր նախապատրաստական վարժութուններ 10-12 բույս:  
Առավոտյան լիցքային վարժութունների 3 կոմպլեքսի կատարում՝ ավելացնելով շարժումների չա-

փափոր ծանրաբեռնվածութունը, 25-50%-ի սահմաններում:

3. Վալեյբոլ (կամ նման սպորտ մրցակցական խաղ) 20-25 բույս:  
Խաղի վոչ չրիվ որենքներով, նայած դասի նպատակադրման:
4. Վաղք զանազան տեմպի (նորմատիվ ցուցանիշների պատրաստման տեսանկյունով) 2-3 բույս:
5. Քայլք դանդաղ ( $1/2$  բույս), ավելի դանդաղ ( $2\frac{1}{2}$  բույս) 3 բույս:

Ընդամենը 40-50 բույս:

### V ԴԱՍ

1. Սովորական քայլք՝ շրջանակում ( $1/2$  բույս), վոտքի թաթերի վրա՝ ձեռքերը ծոծրակին ( $1/2$  բույս), սովորական քայլք ( $1/2$  բույս), դարձումներ ըստ անակնկալ հրահանգների 3-5 բույս:
2. Կենդանի ծանրության փոխադրումը 8-10 բույս:  
Մասնակցողներից մեկի փոխադրութուն՝ 4 հոգուց կազմած ներքնակով (փոխադրողները կանգնում են իրար դիմաց, ձեռքերը բռնած):  
Հեռավորութունը 10-15 մետր, այն հաշվով, վոր յուրաքանչյուրն ունենա փոխադրվելու հնարավորութուն:
3. Արդելքների հաղթահարում (թիեր) 10-12 բույս:  
Ցատկումներ թիերի վրայից, յուրաքանչյուրի համար 2-3 անգամ:  
Թիերը պատրաստում են գետնի վրա՝ խոտերի կույտից կամ 50 ս. մետր տրամագիծ ունեցող շրջանակից: Թիերը լինելու յեն 4-5 հատ և յուրաքանչյուրի հեռավորութունը մեկը մյուս-

սից լինելու յե մի մետր: Յատկումները լինելու յեն մեկ-մեկ (հերթականութեամբ), հետո՝ արագ հաջորդականութեամբ, յուրաքանչյուրը 4-5 անգամ:

4. Հանդիպողական եստաֆետ (արգելքով) 8-10 րոպե:

Հեռավորութիւնն իրարից (չարքեր) 20 մետր, արգելքը (30 ս. մետր բարձրութեամբ մի իր) դրվում է 10-րդ մետրի վրա: Կրկնողութիւն՝ մաքսիմում 2 անգամ:

5. Քայլք դանդաղեցրած 2-3 րոպե:  
Ընդամենը 30-40 րոպե:

### VI ԴԱՍ

1. Քայլք արագ (1/2 րոպե), քայլք դանդաղ (1 րոպե) 1 1/2 րոպե:  
2. Յատկում բարձրութեան (պարանի) վրայով՝ դու քաշած 15 րոպե:

Յատկումները կատարելու յեն հետեւողականորեն, ավելացնելով, բարձրութիւնը, բայց վոչ ավելի քան 60 ս. մետր: Յուրաքանչյուր մասնակցող շարունակաբար ավելացող բարձրութեան վրայից թռչելիս ունենալու յե 2 փորձ: Նրանք, ովքեր հաջողում են, կարող են մասնակցել հետագա բարձրութիւններին: 2 փորձից հետո տվյալ մասնակցողի ցատկումի չափանիշը համարվում է նախորդ բարձրութիւնը:

3. Նետում նպատակին (խօկեյնի կամ տենիսի գնդակ) 13-15 րոպե:  
Նպատակ՝ նշանացույցը - քառակուսի մի տախտակ է՝ պատրաստված

Փաներայից, բարձրութիւնն ու լայնութիւնը 70 ս. մետր: Նշանացույցը դրված է լինում դեռնի վրա, ամրացրած հենարանի: Հեռավորութիւնը նշանացույցից՝ աջ ձեռքի համար 6 մետր, իսկ ձախի՝ 5 մետր: Յուրաքանչյուր մասնակցող իրավունք ունի 6 նետում կատարել (3-ը՝ աջ՝ 3-ը՝ ձախ ձեռքով):

Հաշվառքը կատարվելու յե և՛ յերկու ձեռքի տված գումարի չափով (կպած գնդակների գումար), և՛ առանձին-առանձին:

4. Յատկում յերկարութեամբ (տեղից) 12-15 րոպե:  
Յուրաքանչյուրին տրվում է միանըվազ 3 ցատկում. հաշվի յե առնվելու 3-ից լավագույնի արդիւնքը:

5. Հանդիպողական եստաֆետ (փայտով) 10-12 րոպե:

Հեռավորութիւն 20-25 մետր (կատարել միայն մի անգամ): Հաշվառք կատարվում է յերկու թիմերի ժամանակի տարբերութեան համեմատ. կարճ ժամանակում նույն խնդիրը կատարողները շահում են:

6. Քայլք դանդաղ 1-2 րոպե:  
Ընդամենը 55-60 րոպե:

Ծանոթութիւն. — Դասերի արդիւնքները հաշվի յե առնում դասերը ղեկավարող Ֆ. Կ. դասատուն, յուրաքանչյուր դասի վերջում:

Յերեխաներին չհոգնեցնելու համար նրանց հանդրատանալու հնարավորութիւն պետք է տալ այն ժամանակ, յերբ հերթական շարժումները (թռիչք, ցատկում, նետում և այլն) կատարել են և սպասում է հաջորդ հերթականութեան:

I ԴԱՍ

1. Մի տողան կազմել. քայլք շրջանակի մեջ. միաշարը քառաշարի վերածել քայլքի ժամանակ 3—5 բուպե
2. Վազքի պոկման (ստարտ) նախնական ուսուցում 3—10 բուպե  
Բաց թողնել վազողներին 4-ական հոգով: 2 պոկում՝ կանգնած դրությամբ և 4-ը՝ պառկած դրությամբ (կրակելու դիրք), տարածություն՝ 10—15 մետր աղջիկների, 15—20 մետր տղաների համար:
3. Նետում նպատակին (խնկեյնի, տենիսի գնդակ և թեթևացրած նոնակ) 12—15 բուպե  
Նպատակ — նշանացույցը Փաներայից պատրաստված քառակուսի մի տախտակ ե՛ յուրքանչյուր կողմը 50 ս. մետր բարձրությամբ:  
Նշանատախտակի վրա 15 ս. մետր ամրացվում է գետնին՝ մեկ մետր բարձրությամբ:  
Յուրքանչյուրի համար նետում 6-8 անգամ (3-4-ը՝ աջ, 3-4-ը՝ ձախ ձեռքով): Տարածություն-աղջիկների համար 6 մետր աջ, 5 մետր՝ ձախ ձեռքով, տղաների համար՝ 7 մետր աջ, 5 մետր՝ ձախ ձեռքով.
4. Յատկում բարձրության (ձողի կամ պարանի) վրայով՝ դու քաշած 12-15 մետր  
Յատկումները լինելու յեն անհատական (մեկ առ մեկ) ցատկումների ոնթադրում աստիճանաբար ավելացվում է բարձրությունը մինչև մեկ մետր տղաների և 80 ս. մետր՝ աղջիկների համար:  
Յուրքանչյուրն ունենալու յե 8 ցատկում (ցանկացած ձև): Յատկում-

- ներ արագ հերթականությամբ (մեկը մյուսին հաջորդող), 30 ս. մետր բարձրության վրայից, յուրքանչյուրին 3—4 ցատկում:
5. Դանդաղ վազք 2—3 բուպե
  6. Վազքից հետո անմիջապես քայլք, նախապես միջակ տեմպով, ապա աստիճանաբար դանդաղեցնելով: Միջակ տեմպի քայլք (1/2 բուպե) դանդաղ քայլք (1 1/2 բուպե) 2 բուպե  
Ընդամենը՝ 40—50 բուպե

II ԴԱՍ

1. Քայլք միաշարամ, արագ տեմպով (1 բուպե), դանդաղ վազք (1 բուպե), սովորական քայլք (1 բուպե): Քայլքի ժամանակ միաշարից քառաշարի վերածում 5 բուպե
2. Ընդհանուր նախապատրաստական վարժություններ 12—15 բուպե  
Առավոտյան լիցքային վարժությունների 2-րդ կոմպլեքսի շարժումների կատարումն ավելացրած չափով—աղջիկների համար՝ 25, իսկ տղաների համար՝ 50 տոկոսի չափով, որինակ՝ յեթե տվյալ շարժումը լազերային ընդհանուր լիցքի ժամանակ կրկնված է 6—8 անգամ, այստեղ-դասի մեջ կրկնվելու յե 10—12 անգամ:
3. Վալեյ-բոլ 25—35 բուպե  
Խաղը խաղացվելու յե լրիվ որենքներով:
4. Դանդաղ վազք (տղաներին 5, աղջիկներին՝ 3 բուպե) 3—5 բուպե
5. Քայլք դանդաղ (1/2 բուպե), ավելի դանդաղ (1 1/2 բուպե) 2 բուպե  
Ընդամենը՝ 40—60 բուպե

III ԴԱՍ

1. Կազմել միաշար տողան. քայլք շրջանակում՝ ձեռքերի դանդաղ դիրքի

չարժումներով. (չարժումների տեմպը համապատասխանելու յե քայլքի տեմպին)

3—5 րոպե:

2. Հավասարակշռութուն (հորիզոնական գերան — բում). բարձրութուն մի մետր

8—10 րոպե:

Քայլք գերանի վրա, յերեսը դեպի առաջ յուրաքանչյուրին 3—4 անգամ: Քայլք, յերեսը դեպի առաջ, գերանի վրա դրված 3 առարկայից (գնդակ) բուլավա, մետիցին բոլ և այլն) անցնելով. յուրաքանչյուրը կատարելու յե լրիվ քայլք 3—4 անգամ:

3. Ցատկում յերկարությամբ 10—12 րոպե: Տարածութունը 10—15 մետր, աղջիկների համար՝ 5—6, իսկ տղաների համար՝ 6—8 անգամ: Ցատկումները լինելու յեն հերթականությամբ (մի առ մի) ժամանակամիջոցը յերկար լինելու դեպքում, կատարել իրար հաջորդող ցատկումներ՝  $1\frac{1}{2}$  մետր հեռավորության վրայից զուքաչելով, յուրաքանչյուրին 3—4 ցատկում:

4. Նետում բոտ տարածության (խոկեյնի, տենիսի գնդակ կամ թեթևացրած նրոնակ)

12—15 րոպե:

Նետումները կատարել զուքաչելով. նետման գիծը գծվում է գետնի վրա, սպիտակ գույնով: Նետված գընդակն ընկնելու յե  $4 \times 21$  մետր մակերես ունեցող դարպասի մեջ: Նետումների թիվը աղջիկների համար՝ 2—4, տղաների համար՝ 4—6 անգամ:

5. Եստաֆետի հանձնման ուսուցում 8—10 րոպե: Եստաֆետի հանձնումը (հանդիպական) (լինելու յե պարզ, առանց արդելքների մեր նպատակն է լինելու սովորեցնել յերեխաներին՝ եստաֆետան անցնել արագ, առանց իրար խանգարելու և ժամանակ կորցնելու: Ուշադրութուն դարձվելու յե հանձնման, ստացման և վազքի տեխնիկայի ձևերի վրա:

Տարածութունը 10—15 մետր—աղջիկների համար՝ 4—5, իսկ տղաների համար՝ 5—6 անգամ:

6. Քայլք դանդաղ տեմպով \_\_\_\_\_ 1—2 րոպե  
Ըղամենը՝ 40—55 րոպե

### IV ԴԱՍ

1. Քայլք (1 րոպե), դանդաղ վազք (1 րոպե), սովորական քայլք (1 րոպե), քայլքի ժամանակ միաշարքից քառաշար կազմելը 3—5 րոպե

2. Ընդհանուր նախապատրաստական վարժութուններ 12—15 րոպե

Առավոտյան լիցքային վարժութունների 3-րդ կոմպլեքսի կրկնութուն, շարժումների քանակական ավելացումով, աղջիկների համար՝ 25, տղաների համար՝ 50 տոկոսի չափով:

3. Բասկետ-բոլ 25—35 րոպե  
Յեթե մասնակցողները խաղի որենքներին ծանոթ են և խաղացել են, այն դեպքում խաղը կատարել լրիվ որենքներով, հակառակ դեպքում՝ վոչ լրիվ որենքներով:

4. Դանդաղ վազքեր (աղջիկներին 3, տղաներին՝ 5 րոպե) 3—5 րոպե

5. Քայլք դանդաղ ( $1\frac{1}{2}$  րոպե), ավելի դանդաղ ( $1\frac{1}{2}$  րոպե) 2 րոպե

Ընդամենը՝ 40—60 րոպե

### V ԴԱՍ

1. Սովորական քայլք շրջանակում ( $1\frac{1}{2}$  րոպե) անգլիական քայլք ( $1\frac{1}{2}$  րոպե), սովորական քայլք ( $1\frac{1}{2}$  րոպե), քայլքի ժամանակ միաշարքից քառաշար կազմելը 5—7 րոպե

2. Կենդանի ծանրության փոխադրման ուսուցումը 10—12 րոպե

Վիրավորին փոխադրել զույգերով, ձեռքերի միջոցով, ուսերի վրա առած և այլն. փոխադրման հեռավորութունը՝ 10—15 մետր. յուրաքանչյուրը մասնակցելու յե փոխադրման աշխատանքներին:

3. Ցատկում բարձրության վրայով՝ տեղից 12—15 րոպե

Յատկումը կատարվելու յե սահմանված դժի մոտից. անկումը լինելու յե փափուկ տարածության վրա. բարձրության չափերն ավելացվում են հերթականությամբ—տղաների համար՝ մինչև 40 ս. մետր, իսկ աղջիկների համար՝ 30 սանտիմետր բարձրությամբ:

Յուրաքանչյուրին, վորպես փորձ, նկատի ունենալ յերկու անգամ, չհաջողվելու դեպքում—դուրս ե գալիս:

4. Հանդիպողական ետաֆետա (դրոշակով) 12—15 բուպե

Հեռավորությունը՝ 10—15 մետր, յերկու արգելքով, յուրաքանչյուր արգելքի բարձրությունը 35—40 ս. մետր: Աղջիկների համար՝ 2 անգամ մեկ արգելքով, իսկ տղաների համար՝ 2 անգամ 2 արգելքով:

5. Դանդաղ քայլք 1—2 բուպե

Ընդամենը՝ 40—50 բուպե

VI ԴՍՍ

1. Սովորական քայլք (1/2 բուպե), դանդաղ վազք (1/2 բուպե) դանդաղ քայլք (1/2 բուպե), միաշարի վերածումը քառաշարի 3—4 բուպե

2. Յատկում բարձրության (ձողի կամ պարանի) վրայով՝ զու քաշած 10—15 բուպե  
Ծրագիրը նույնն է, ինչ նախորդ դասինը, միայն աղջիկների համար բարձրությունը կազմելու յե 80 ս. մետր, իսկ տղաների համար 1 մետր:

3. Վազք արագությամբ 7—8 բուպե  
Վազքի տարածությունը 40—60 մետր, տարածությունը լինելու յե ուղիղ և հարթ. հեռավորությունն աղջիկների համար 40 մետր, տղաների համար՝ 60 մետր: Վազքի ժամանակը հաշվվում է յերկվարկյանացույցով (սեկունդոմետր). յուրաքանչյուրը վազում է մի անգամ:

4. Նետում նպատակին (նոնակ թեթևացրած քաշով) 18 բուպե  
(Ծրագիրը նույնն է, ինչ նախորդ դասին):

5. Յատկու յերկարությամբ 13 բուպե

Յուրաքանչյուրը կատարելու յե 3 ցատկում. ցատկումները լինելու յեն հերթականությամբ (մեկը մյուսից հետո). հաշվառքը կատարվելու յե 3 ցատկումից յավագույնի արդյունքով:

6. Նետում ըստ տարածության (խոկեյնի գնդակ)՝ դարպասի մեջ 12 բուպե

Դարպասի մակերեսը 6×4 մետր, նետում յուրաքանչյուրին 6 անգամ (3 ձախ, 3 աջ ձեռքով). նետման տարածությունը աղջիկների համար՝ համեմտաբար փոքր է լինում. հաշվառքը կատարվելու յե, 2 ձեռքերի նետածների յավագույնի արդյունքով:

Ծանոթություն. — Դասերի արդյունքների հաշվառքը պահվելու յե սխտեմատիկարար: Յերեխաներին թույլատրվում է նստել (հանգստանալու մտքով), յերբ նրանց հերթը անցել է:

Դասի տեվողությունը յերկարաձգվելու դեպքում, դասի վորեք մասը պետք է կատարել հեշտ ձևը վերցնելով, որինակ՝ յեթե «գնդակի նետումը միջանցքի մեջ» ձևը պիտի տրվեր այդ դասին, այն կարելի յե փոխարինել «գնդակ ըստ տարածության» ձևի կիրառումով:



Սահումներ «Ամերիկյան բիրից»

## 25. ՇԱՐԺԱԿԱՆ ՅԵՎ ՍՊՈՐՏ ԽԱՂԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

9—12 տարեկանների համար

Այստեղ մանրամասնորեն տալ խաղերի նկարագրությունը. նրանց սոցիալական և մանկավարժական արժեքը մեր նպատակից դուրս է: Բացի այդ, խաղերի տեսութայան վերաբերյալ բավարար տեղեկություններ կարելի չէ ձեռք բերել Վ. Վարդանյանի և Հ. Փարսադանյանի «Դպրոցական խաղեր» և Մ. Միրզոյանի «Նախադպրոցական խաղեր» գրքերից:

Այս գրքում յես նկարագրում եմ մի քանի խաղերի նմուշներ, ըստ տարիքի, վերաբերյալ դասատուները, համաձայն դրան, գատեն և դասավանդեն համապատասխան խաղերը, վորոնք յերեխայի այս կամ այն ունակությունն են զարգացնում:

### Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն Խ Ա Ղ Ե Ր

Տարիքը՝ 9—12

#### ԳՆԴԱԿԸ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Խաղացողներ՝ 20—30 հոգի. Գույք-հրապարակ.

Սաղացողները շրջան են կազմում իրարից յերկու քայլ հեռավորությամբ: Սաղացողներից մեկը մտնում է շրջանակի կենտրոնը՝ բասկետ-բոլի գնդակը ձեռքին:


Սաղն սկսված է համարվում, յերբ կենտրոնի խաղացողը ձեռքի գնդակը դնում է շրջանի խաղացողներից մեկին ու մեկին:

Կենտրոնի խաղացողը գնդակը գցելուն պես շրջանից արագ դուրս է փախչում, իսկ գնդակ բռնողն անմիջապես ձեռքի գնդակը տանում-դնում է շրջանի կենտրոնը և սկսում է փախչողին հալածել:

Յեթե կենտրոնի խաղացողն առանց խփվելու կարողացավ մտնել շրջանը և ձեռքը կպցնել գնդակին, նա ազատված է համարվում և մտնում է խաղացողների մեջ, իսկ մյուսը մտնում է շրջանը, վորպես խաղ ըսկրսող. խփելու դեպքում կրկին խաղ սկսելու պարտականությունը մնում է իր վրա:

Սաղն այս ձևով շարունակվում է, մինչև յերեխաները կարիք զգան նոր խաղի անցնելու, կամ խաղը դրանով վերջացնելու:

Այս խաղը զարգացնում է ճարպիկություն և կշռագատելու ու վտանգից խուսափելու ունակությունները:



Հոկտեմբերիկը կարուսեղի վրա

#### ԽՈՒՍԱՓԵԼ ԳՆԴԱԿԻՑ

Խաղացողներ 20—40 հոգի. խաղադաշտ-հրապարակ

Սաղացողներն իրենց միջից մեկին ընտրում են վորպես խաղ սկսող. նա վերցնում է բասկետ-բոլի կամ Ֆուտբոլի գնդակ և կանգնում խաղադաշտի կենտրոնում:

Մյուս խաղացողները ցրվում են դաշտի վրա խաղ սկսողի շորս կողմը, իրարից 8—10 մետր հեռավորությամբ. խաղացողներն իրենց վտանքի մոտ փոսեր են փորում կամ մի քար դնում, վորպես տուն:

Պաղն սկսված և համարվում այն ժամանակ, յերբ խաղացողներն իրար հետ նախապես համաձայնության գալով՝ իրենց տեղերն արագ փոխում են մեկը մյուսի հետ:

Պաղն սկսողն ոգավելով հարմար առիթից՝ տեղերը փոխելու ժամանակ աշխատում և ձեռքի գնդակով խփել տեղերը փոխողներին փորձվե մեկին. հաջողվելու դեպքում խփողի հետ տեղերը փոխում են.—խփողը դառնում է խաղն սկսող:

Ճարպիկ խաղացողը համարվում է նա, ով իր տունն արագ է փոխում և ամբողջ խաղի ընթացքում չի խփվում:

Գնդակից խուսափելու համար պետք է տափել, ծուվել, վեր թռչել, մի խոսքով՝ կատարել այնպիսի շարժումներ, վոր գնդակը չկաշի իրեն:

Այս խաղը զարգացնում է ճարպիկություն և կողմնորոշվելու արագ ըմբռնողություն:



Մասսայական ժամանցի մի տեսարան

## ՍՏՎԵՐ ԲՈՆԵԼԸ

Խաղացողներ՝ 40—60 հոգի. դաշտ—հրապարակ:

Այս խաղը կարելի չէ խաղալ միայն արև ժամանակ: Պաղացողներից մեկին նշանակել խաղն սկսող: Կողմարը խաղն սկսելու ազդանշանը տալիս, բոլոր խաղացողները փախչում են դանազան ուղղությամբ, իսկ խաղ սկսողը հարածում է նրանց:

Պաղի նպատակն է՝ բռնել ստվերը: Յեթե խաղն սկսողը հայածելու ժամանակ կարողացավ հասնել վաղողներից մեկն ու մեկի ստվերին և այն կոխելով անցնել, բարձրաձայն կանչում է ստվերի տիրոջ անունը: Այն ժամանակ բոլոր խաղացողներն սկսում են զգուշանալ նոր խաղ սկսողից և այսպես շարունակվում է խաղը:

Այս խաղը խոշոր չափով նպաստում է յերեխաների թոքերի և վոտքերի մկանների զարգացմանը և, միա ժամանակ, յերեխաներին առատ թթվածին ներշնչելու հնարավորություն է տալիս: Բայց քանի վոր այս խաղը իր կազմությամբ ակտիվ վազքախաղ է, պետք է ժամանակը սահմանափակել (10—15 րոպե) և, բացի այդ, խաղը վերջանալուց հետո կազմակերպել հանգստացնող խաղ, կամ շարժումներ:

ԳՈՒՄԱՐՈՒՄ (թվաբանական խաղ)

Խաղացողներ՝ 10—40 հոգի:

Պաղացողները կազմում են կլոր շրջան՝ կանգնած կամ նստած դիրքով: Յեթե այս խաղը խաղացվում է վազքախաղներից հետո, պետք է տալ քայլ շրջանում՝ 2—3 րոպե տեղադրությամբ, մինչև յերեխաները քիչ հանգստանան:

Պաղացողներից մեկն սկսում է թիվ տալ իր աջ կողմի ընկերոջ, վերջինը արված թվի չափով թիվն ավելացնում և հաղորդում է մյուս ընկերոջ, և այսպես շարունակ, մինչև նախապես սահմանված թվին հասնելը, վորից հետո կրկին սկսում են խաղը նախկին ձե-

վով, նույն թվից: Որինակ՝ յեթե խաղացողները նախապես վորոշել են գումարում կատարել 2-ով մինչև 100-ի սահմանները, այն ժամանակ սկզբի խաղացողն ասում է «2», հաջորդը՝ «4-6-8-10» և այլն, մինչև 100:

Ով սխալվում, կակազում կամ ուշանում է համարվում է կտրված և չի մասնակցում խաղին, սակայն տեղից վեր կենալ և խաղից դուրս գալ չի թույլատրվում:

Կարելի չէ նման խաղեր կազմակերպել հանումով, կամ գումարում և հանումը կատարել նույն խաղում. խաղն սկսել նախ գումարումով, իսկ սահմանված թվին հասնելիս շարունակել հանման գործողութունով:

### ԱՔԱՂԱՂԱԿՈՒՎ

Խաղացողներ՝ 10—20 հոգի. դաշտ-հրապարակ.

Խաղացողները բաժանվում են յերկու խմբի և կազմում մի ընդհանուր կլոր շրջան:

Խաղի ղեկավարը յերկու կողմի խաղացողներից մեկին կամ յերկուսին, նույնիսկ ավելի, կանչում է շրջանի կենտրոն: Հակառակորդ խաղացողները զույգ-զույգ կանգնում են իրար դիմաց, ձեռքերը կրծքին խաչաձև:

Խաղն սկսելու հրահանգը տալուն պես հակառակորդ խաղացողներն անմիջապես վտարելից մեկը ծալում են և սկսում կրծքով իրար հրել: Ովքեր իրենց հավասարակշռութունը կորցրին և հարկադրված յեղան ծալած վտար դետին դնել, այն կողմի խումբն այնքան կետով ատրված է համարվում:

Խաղին ակտիվ և հերթականությամբ մասնակցելու յեն բոլոր խաղացողները: Խաղի վերջում վոր կողմը շատ շահումներ (կետեր) ունեցավ, նա հաղթող է համարվում:

Այս խաղը մեծ գվարճութուն է պատճառում յերեսխաներին. միաժամանակ զարգացնում է դիմադրողական և հավասարակշռության ունակութունները:

### ԱՆԿՅՈՒՆԻ ԳՆԴԱԿ

13—15 տարեկանների համար

Խաղացողներ՝ 16 հոգի. մարգագաշտ, դահլիճ, հրապարակ:

Խաղացողները բաժանվում են Ա և Բ յերկու թիմի, յուրաքանչյուր թիմը 8 հոգուց, վորոնցից մեկը՝ կապիտան:

Այս թվով խաղացողների համար խաղադաշտի յերկարութունը լինելու չէ 20 մետր, իսկ լայնութունը՝ 10 մետր: Խաղադաշտի կողքերի գծերը քաշելուց հետո դաշտն ուղիղ կենտրոնից (լայնությամբ) մի գծով բաժանվում է յերկու հավասար քառակուսի դաշտերի:

Յուրաքանչյուր դաշտի յերկու անկյունում հատակի վրա գծվում է մեկական քառակուսի, կամ կլոր շրջանակ՝ չորս վտար տրամագծով:

Ա և Բ թիմերը վիճակ գցելով ընտրում են իրենց դաշտերը և դասավորվում նրանց մեջ, ապա յուրաքանչյուր թիմն իր կողմից յերկու խաղացող՝ գատում-ուղարկում է հակառակորդի դաշտում նկարված շրջագծերի մեջ կանգնելու:

Դատավորը վերցնում է բասկետ-բոլի և ֆուտ-բոլի գնդակը և խաղի մեջ գցում ձիշտ այնպես, ինչպես բասկետ-բոլի խաղում:

Յերկու թիմի կապիտանները մտանում են խաղադաշտի կենտրոնում. ոճին և կանգնում իրար դիմաց՝ ձախ ձեռքը ծալած մեջքին, իսկ աջը վեր պարզած: Դատավորը սուլիչը փչում և գնդակը գցում է ողը՝ յերկու խաղացողի մեջ: Խաղացողներից մեկն ու մեկը թրուիչքով ողից վերցնում է գնդակը և անմիջապես գցում իր կողմի խաղացողներին կամ հակառակորդի դաշտի շրջագծերում կանգնած իր ընկերներին:

Խաղի նպատակն է լավ փոխանցումներով (պասսի-րովկայով) հարմար առիթ ստեղծել և գնդակը գցել հակառակորդի դաշտում գտնված իրենց ընկերներին:

Յուրաքանչյուր անգամ, յերբ գնդակն ընկնում է դաշտի անկյուններում շրջագծերի մեջ գտնված խաղա-

ցողների ձեռքը, այն կողմի թիմը շահում է մեկ կետ: 20 կետ շահող թիմը տանում է խաղը, և խաղը վերջացված է համարվում:



Մենք առողջանում ենք բնության ծոցում

### Սխալներ և ընդհանուր որեճկներն են համարվում

1. Յերբ յերկու կողմի խաղացողները խաղի ընթացքում դիտավորյալ, կամ թափով մտնում են հակառակորդի դաշտը, կամ արորում կենտրոնի գիծը: Այսպիսի դեպքերում դատավորը սուլում է և գնդակը տալիս հակառակ կողմի խաղացողներին, վորոնց դաշտը մտել են մյուս կողմի խաղացողները. նույն սուլանքը արվում է նաև այն դեպքում, յերբ անկյունների շրջագծերում գտնվողները արորում են շրջագիծը, կամ դուրս են գալիս շրջագծից:

Նման դեպքերում գցված գնդակն արգելվում է տալ անկյուններում կանգնած խաղացողներին:

2. Յերբ գնդակին հարվածում են վոտքով, գլխով կամ խափս են տալիս և ուշացնում գնդակի գցելը յերեք յերկվայրկյանից ավելի, գնդակ պահող կողմը սուլանվում է և գնդակը հանձնում հակառակորդ կողմին:

3. Իրար պաս գցված գնդակները, կամ հակառակորդի շրջագծերում գցված գնդակները յերբ դուրս են գլորվում կամ թռչում խաղադաշտի սահմաններից, համարվում են դուրս, և գնդակը խաղի մեջ գցելու իրավունքը տրվում է հակառակ թիմին: Այդ գնդակները չպետք է գցվեն շրջագծերում կանգնող խաղացողներին:

4. Այն դեպքում յերբ գնդակը վիճելի յե համարվում, կամ շրջագծերի մեջ կանգնողները բռնել են, կամ գնդակը դուրս է յեկել դաշտի յերկու ծայրերի վրայից, գնդակը կրկին խաղի մեջ է դրվում նախնական ձևով:

5. Շրջաններում կանգնողները գցված գնդակը բռնելիս իրար տալ չեն կարող, կամ յեթե տալիս են, կրկրնակի շահում չի համարվում. նման դեպքում բռնված գնդակները, դատավորի սուլիչի համաձայն կրկին վերադարձվում են կենտրոն և նորից դրվում խաղի:

6. Յուրաքանչյուր անգամ, յերբ դաշտի անկյուններում գտնված ընկերները գնդակ բռնեցին, դատավորը սուլում է, արձանագրել է տալիս մի կետ ավյալ թիմին և կրկին գնդակը խաղի տալիս:

Այս խաղը խիստ հետաքրքրական է և որենքներով նման է բասկետ-բոլին:

### ԱՍՏՂԱԶԵՎ ԳՆԴԱԿ

Խաղացողներ՝ 10—15 հոգի. լագեր, հրապարակ, մարգադահլին:

Ատոգաձեմ գնդակը խաղացվում է յերկու թիմով, յուրաքանչյուր թիմը՝ 5 կամ 9 հոգուց բաղկացած:

Յուրաքանչյուր թիմն իր կապիտանն ունի:

Սաղադաշտի չափսը հետեվյալն է. մի կլոր շրջագիծ՝ 8 վոտք արամագծով՝ նկարվում է հատակին և հանդիսանում է աստղի կենտրոնը: Կենտրոնի շրջագծից 6—8 վոտ հեռավորությամբ քաչվում է մի այլ շրջագիծ, վոր անվանվում է դրսի մեծ շրջագիծ:

Յեթե խաղացողները 5-ական հոգով են մասնակցում խաղին, այն դեպքում դրսի շրջագծից հավասար հեռավորությամբ քաչում են 20—25 վոտնաչափ յերկա-

բությամբ Ծ հորիզոնական գիծ, իսկ յեթե խաղացողներն Ծ-ական հոգով են խաղում, այն դեպքում՝ 8 հորիզոնական գիծ:

Յեթե Ա. թիմի խաղացողներին վիճակվել է դառնալ ներսի խաղացողներ, այն դեպքում նրանց առաջապահները դասավորվելու յեն հորիզոնական գծերի միջև: Այս խաղացողները խաղի ընթացքում իրավունք չունեն կոխելու թե՛ շրջագիծը, թե՛ հորիզոնական գծերը. նրանց խաղադաշտը հանդիսանում է յերկու հորիզոնական գծերի միջև ընկած տարածությունը:

Ա. թիմի կապիտանը տեղավորվում է աստղի կենտրոնի շրջագծում. նա նույնպես իրավունք չունի շրջագծերը տրորել:

Բ թիմի 8 խաղացողը, վորպես պաշտպաններ, տեղավորվում են աստղի կենտրոնական շրջագծի միջև ընկած տարածության մեջ: Շրջապատելով Ա. թիմի կապիտանին՝ սրանք ևս իրենց հերթին իրավունք չունեն շրջագծերը տրորելու, բացի իրենց հատկացրած դաշտից:

Բ թիմի կապիտանը կանգնում է 8 հորիզոնական գծերից վորևե մեկի վրա, վերցնում է բարկետ-բուլի կամ վարկեյ-բուլի գնդակը մեծ շրջագծից Ծ վտար հեռավորության վրա. իր կանգնած տեղից գնդակը գրցում է ողի մեջ: Յեթե գցված գնդակն ընկնում է շրջագծերի մեջ, համաձայն դատավորի տված սուլիչի, նա կրկին վերցնում է գնդակը և նորից գցում ողի մեջ՝ յերբ գնդակն ընկնում է գրսի հորիզոնական գծերի մեջ, այն դեպքում Ա. թիմի խաղացողները գնդակը վերցնում և իրար պաս տալով գցում են աստղի կենտրոնում կանգնած իրենց կապիտանին:

Խաղի նպատակն է, վոր Ա. թիմի խաղացողները գնդակը գցեն իրենց կապիտանին, կամ կենտրոնի փոքր շրջագծի մեջ, անկախ այն հանգամանքից, թե գցած գնդակն իրենց կապիտանը կբռնի, թե կենտրոնի շրջագծի մեջ կընկնի: Յուրաքանչյուր անգամ կապիտանը գնդակը բռնելիս յերկու խաղ է հաշվում, իսկ յերբ չի բռնում և գնդակն ուղղակի ընկնում է շրջանակի կենտրոնը, հաշվում է մի խաղ, հոգուտ Ա. թիմին: Այսպիսի

դեպքերում գնդակը կրկին վերադարձվում է Բ թիմի կապիտանին, վոր նախնական ձևով գնդակը խաղի յե գնում:



Առողջ փոխարինողներ

Բ թիմի պաշտպանները, վորոնք կանգնած են մեծ շրջագծի մեջ, աշխատում են Ա. թիմի կապիտանին գրցված բուլոր գնդակները հարվածել և դուրս գցել շրջագծի տարածություններից:

Բ թիմի խաղացողներին արգելվում է գնդակը յուր նեղ և իրար պաս տալ. նրանք պետք է գնդակը հարվածեն առանց բռնելու. սխալվելու դեպքում դատավորը սուլում է մի խաղ և նշանակում հոգուտ Ա. թիմի, ու գնդակը վերադարձվում է թիմի կապիտանին՝ խաղը կրկին սկսելու համար:

15 րոպեյից հետո առաջին կիսաշրջանը (հավթայմ) վերջացած է համարվում: Տրվում է 3 րոպե դատար, վորից հետո Բ թիմը մտնում է խաղի մեջ, իսկ Ա. թիմը դալիս է նրա տեղը, և խաղը շարունակվում է ևս 15 րոպե:

35 րոպեյից հետո դատավորը խաղը վերջացած է համարում:

Թիմերից վորը շահումների շատ թիվ ունեցավ, նա  
յեւ խաղը տանում է:

### ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հսկել, վոր թիմերի խաղացողները միևնույն  
տարիքային միավորում ունենան:

2. Դաշտը ճիշտ գծված լինի, իսկ տարածությունը՝  
հարթ և մաքուր:

3. Համարել սխալ կամ առեթ և տալ սուլիչ՝

ա) Յերբ մեծ շրջագծի մեջ կանգնողները գնդակը  
բռնում են, փոխանակ վայելյ-բոյի նման խփելու:

բ) Յերբ գնդակները դաշտի սահմանից դուրս են  
գալիս:

գ) Յերբ հորիզոնական գծերի մեջ կանգնողներն ու  
կենտրոնական շրջաններում կանգնողները գնդակը  
իրենց ձեռքում յերեք վայրկյանից ավելի յեն պահում:

դ) Յերբ յերկու թիմի խաղացողները վոտքով տրո-  
բում են դաշտի գծերը:

ե) Յերբ վոտքով խփում են գնդակին:

4. Հսկել, վոր յերկու թիմի շահումներն եւ ճիշտ  
պահվեն և խաղը սահմանված ժամանակամիջոցին վեր-  
ջացվի:

5. Խաղի շահումն արձանագրվում է այն ժամանակ,  
յերբ դատավորը ասում է՝ «յերկու շահում կամ մի շա-  
հում»:

Այս խաղը, վորպես սպորտ խաղ, չափազանց հե-  
տաքրքիր և գրավիչ է պատանիների համար և, բացի  
այդ, առաջին անգամն է խաղացվում մեզ մոտ: Այս  
խաղի մասսայականացումը պիտներական լազերներում  
և դպրոցներում սրտանց հանձնարարվում է Փիզկուլտ  
դասատուներին և պիտներ կոլվարներին:

### ՀԵԾՆՈՂ ԹՈՓ

Խաղացողներ՝ 15—30 հոգի. լազեր, հրապարակ,  
մարզադահլիճ:

Այս խաղը խաղում են միայն տղաները, այն եւ այն  
ժամանակ, յերբ տարիքով և Փիզիկական ուժով գրեթե  
իրար հավասար են:

Խաղացողները բաժնվում են յերկու հավասար  
մասերի. միճակ գցելով մի մասը դառնում է «ձի», իսկ  
մյուսը՝ «հեծնող»:

Հեծնողները նստում են ձիերի մեջքին և կազմում  
մի կլոր շրջան՝ միմիանցից այնքան հեռու, վորքան  
նպատակահարմար են դտնում:

Ձիերը պարտավոր են բազուկները հետևը տանել  
և ամուր բռնել հեծնողներին, վորպեսզի վերջիններս կա-  
րողանան ձեռքերն ազատ պահել գնդակ գցելու կամ  
բռնելու համար: Խաղը սկսված է համարվում յերբ հեծ-  
յալներից մեկը բասկետբոլի գնդակը գցում է իր աջ կամ  
վազում են ընկած գնդակի յետևից, սրանցից ով գըն-  
դակը գցում է հաջորդին, և այսպես գնդակը պտույտ է  
կատարում հեծնողների միջև: Խաղի ընթացքում, յերբ  
հեծնողներից մեկն ու մեկի ձեռքից գնդակը վայր է  
ընկնում, այն ժամանակ բոլոր հեծնողները ցած են  
թռչում ձիերից և փախչում բաց դաշտի մեջ, իսկ ձիերը  
վազում են ընկած գնդակի յետևից, սրանցից ով գըն-  
դակը, գետնից շուտ վերցրեց բարձրաձայն կանչում է՝  
«հո'պ»:

Փախչողները «հո'պ» բառը լսելիս անմիջապես  
կանգնելու յեն տեղում, առանց առաջ կամ յետ գնալու:  
«Հո'պ» կանչոյն իր տեղից գնդակը խփելու յե հեծնող-  
ներին: Հաջողվելու դեպքում բոյոր հեծնողները դառ-  
նում են ձի, իսկ ձիերը՝ հեծնողներ, և խաղը նախկին  
ձեվով շարունակվում է: Չհաջողվելու դեպքում ձիերը  
կրկին մնում են իրենց դերում, և խաղը նորից շարու-  
նակվում է:

### ՍԽԱԼ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ


ա) Յերբ ձիերը խանգարում են հեծնողներին թե՛  
գնդակի շուրջը պտույտ կատարելու ժամանակ և թե՛  
իջնելիս ու փախչելիս:

բ) Յերբ գնդակի պտույտի ժամանակ ձիերը տեղե-  
րը փոխում կամ շարժում են կատարում, վորով պատ-  
ճառ են դառնում գնդակը վայր ընկնելուն:

գ) Յերբ հեծնողները փախչելու ժամանակ «հո'պ»

լսելիս փոխանակ տեղում կանգնելու, նորից վազում են, խուսափելով գնդակից:

Այս խաղը չափազանց հետաքրքիր և ուրախ խաղ է տղաների համար, վրրը զարգացնում է նրանց մեջ դիմադրողականության, կողմնորոշման և ճարպկության ունակությունները:



Պիոներները շախմատ են խաղում

Հանձնարարվում է սպորտ խաղերից.

1. Վալեյ-բոլ
2. Բասկետ-բոլ
3. Տենիս
4. Ֆուտ-բոլ
5. Գորտակի
6. Հինդ-բոլ
7. Կապիտան-բոլ
8. Բեյս-բոլ
9. Պիոներ-բոլ

## ՖԻԶԿՈՒԼՏ ՄԱՍԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ—«Լիցքային վար-  
ժություններ», 1934 թ. Գինը 25 կոպ.
2. Բժ. Լ. ՍԼԼՍ.ՀՎԵՐԴՅԱՆ—«Պիոների և  
աշակերտի հուշատետրը» 1934 թ. Գինը 10 կոպ.
3. Հ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ— «Ֆիզկուլ-  
տուրա» 1933 թ. 1 ր.
4. Մ. ՄԻՐՉՈՅԱՆ.— «Նախադպրոցականների յեր-  
գեր և խաղեր» 1931 թ. 2 ո.
5. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՅԵՎ Հ. ՓԱՐՍԱ-  
ԴԱՆՅԱՆ—«Դպրոցական խաղեր» 1931 թ.  
Գինը 1 ր. 20 կոպ.

26. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ  
ԼԱԳԵՐՆԵՐՈՒՄ

Ռազմական աշխատանքների դրվածքը պիոներական լազերներում պետք է արտահայտվի ավելի պարզորոշ և ավելի սերտ կապված լինի հասարակական քաղաքական խնդիրների հետ, միշտ նպաստելով յերեխաների առողջապահական աշխատանքներին:

Անցյալներում մեր պիոներական լազերներում ուղի մական աշխատանքների ուղղությամբ հաճախ կոպիտ սխալներ են կատարվել:

Մենք նպատակ չունենք յերեխաներին ուղի մականացնել աշխատանք, ինչպես այդ հասկանում են մեր միշտ լազերների (Ղարաքիլիսայի, Սիսյանի) ղեկավարները և ուղի մական աշխատողները: Յերեխաների մեջ ուղի մական աշխատանքներ կատարելու և գործը կազմակերպելու խնդիրն ամենավին չի նշանակում գիշերային տագնապներ, տասնյակ կիլոմետրի վրա ուղի մական արշավներ կատարել և, վերջապես, չի նշանակում՝ հրաձգային գործը յերեխաներին հանձնել առանց մասնագետ ղեկավարի, ինչպես վերոհիշյալ լազերներում կատարվեց այդ:

Յերեխաներին ուղի մաքաղաքականապես ծանրաբեռնելու և մեծահասակների ուղի մական պրակտիկ աշխատանքների ձեռնըն ու մեթոդները նույնությամբ յերեխաների մեջ տեղափոխելու գործի դեմն է, վոր պիտի պայքարենք այս տարի և ձեռք բերենք լայն հարմարություններ՝ լազերները մասնագետ ուղի մական աշխատողներով ապահովելու համար:

Յերեխաների մեջ կատարվող ուղի մական աշխատանքների հիմնական բովանդակությունն է.

ա) Կապի անընդհատ գործունեյություն՝ հետախուզության, գեղազրության, առաջին ոգնության գործի հաջող կազմակերպումը:

բ) Յերեխաների Ֆիզպատրաստականության ապահովումը, դաստիարակելով առողջ, ուժեղ, ճարպիկ, համարձակ, ինքնագործունեյությամբ ոժտված յերեխաներ, վորոնք վոչ միայն ուղի մականապես դաստիարակված լինեն, այլև իրենց հերթին կարողանան այդ հատկությունները պատվաստել իրենց կողակտիվներին, ողակին և անկազմակերպ պատանեկության:

գ) Մողելային, պոլիտեխնիկ դաստիարակության գործի կազմակերպումը լայնորեն ծավալելը: Անկատկած, այս աշխատանքներին զուգընթաց, մեծ ուշադրություն պետք է դարձնի նաև ուղի մական այլ տեխնիկաների ուսումնասիրության գործին:

դ) Յերկրի ուղի մաքիմիական պաշտպանության և քիմիական գազերի տեսակների ու նրանցից պաշտպանվելու ձևերին ծանոթացնելը:

Այս ուղի մությամբ չպետք է բավականանալ միայն նրանով, վոր յերեխաները սովորեն հակազգ գործածել, կարողանան առաջին ոգնություն ցույց տալ գաղից թունավորվածին, դիտենան ՀՈՊ-ի (Հակաողային պաշտպանության) ջոկատների կազմակերպման կանոնները և այլն: Այս բոլորին զուգընթաց, գլխավոր աշխատանքն է լինելու քաղաքատիարակչական խնդրի լայն ուսուցումը, ինչպես նաև մանկական ակտիվ պատրաստելու գործը:

Մանկական ակտիվ պատրաստելու գործը այնպիսի հիմքերի վրա պետք է դրվի, վոր իրենք՝ պատանիները կարողանան ոժանդակել Պաջը-Ավիաքիմի կազմակերպություններին՝ լազերում և նրա մոտակա գյուղերում ՀՈՊ-ի ջոկատներ կազմակերպելու և մեծահասակների ուշադրությունն այդ գործի վրա սրելու:

Յեվ, վերջապես, ուղի մական աշխատանքների մորթ խնդիրը ուղի մական կարգապահության բնագավառում յերեխաներին տարրական ունակություններ և դիտելիքներ տալն է:

Վերոհիշյալ հիմնական խնդիրների կենսագործման համար անհրաժեշտ է հետեւյալը՝

1. Լազերներում և նրան մոտիկ գյուղերում յերեխաներին հասկանալի լեզվով բացատրական լաջն աշխատանք կատարել միջազգային դրության և գալիք պատերազմի մասին:
2. Մոտակա գյուղերում, կոլխոզ-սովխոզներում կազմակերպել Պաշը-Ավիաքիմի «Պատանի բարեկամներին» նորանոր խմբեր, անհրաժեշտ ուշադրություն դարձնելով և ոժանդակություն ցույց տալով յեղած խմբերի ուժեղացման և ղեկավարման գործին:
3. Ամառային լազերների և հրապարակների ամփոփ միջավայրը խոշոր չափով նպաստում է Պաշը-Ավիաքիմի, «Պատանի բարեկամների» ժամանակավոր ցանցի տարածման գործին: Առիթից ոգտվելով տեղերում ժամանակավոր բյուրոներ պետք է կազմակերպել Պաշը-Ավիաքիմի բջիջների սկզբունքով: Այդ բյուրոների միջոցով յերեխաներին պետք է համախմբել Պատանի բարեկամների շուրջը, տալով համապատասխան տոմսեր, առանց անդամավճար և մուտքի վճար գանձելու:
4. Լազերի և հրապարակի ռազմական աշխատանքների կազմակերպման գործը ղեկավարում են Պաշը-Ավիաքիմի տեղական կազմակերպությունները:
5. Անհատ պիոներների, կոլեկտիվի և պիոներ-լազերիների, Կարմիր բանակի և զինվորական լազերների կապին մեծ ուշադրություն պետք է դարձնել: Մեզ մոտ այժմ բազմաթիվ պիոներներ և պիոներական կոլեկտիվներ կան, վորոնք այս կամ այն կերպ կապ են պահպանում Կարմիր բանակի հետ: Սակայն այն, ինչ այս ուղղությամբ արվում է, բավարար համարել չի կարելի: Կապը Կարմիր բանակի հետ չպետք է սահմանափակվի միմիայն ձմեռային սեզոնով, ամառային ամիսներին, յերբ Կարմիր բանակի գործառնները լազեր են բարձրանում բանակի և պիոներների միջև կապն էլ ավելի պետք է ուժեղացվի: Կապը Կարմիր բանակի և պիոներ-

ների միջև չինելու յե գրավոր այն ղեպքում, յերբ պիոներական կոլեկտիվը կամ լազերը հեռու յե գրտնրվում Կարմիր բանակից և նրանց լազերից: Այսպիսի ղեպքում անհրաժեշտ է մի քանի որով մի խումբ պիոներ ուղարկել նրանց մոտ. նրանք կծանոթանան տվյալ լազերի նիստ ու կացին, կուսումնասիրեն բանակայինի կյանքը, ռեժիմը և վերագարձին այդ բոլորը կպատմեն իրենց կոլեկտիվի լազերի յերեխաներին:

Յերբ զինվորական և պիոներական լազերները իրար մոտ են գտնվում (Քարաքիլիսայի, Ստեփանավանի), անհրաժեշտ է կենդանի կապ և փոխադարձ ոժանդակություն ստեղծել պիոներների և բանակայինների միջև:

Պիոներական լազերը կամ չեֆարկյալ պիոներական կոլեկտիվը 10 որը մի անգամ պատրաստում է պատի թերթերի հատուկ համարներ և կախ է տալիս զինվորական լազերում: Պատրաստում և բանակայինների համար ցուցադրում է կարմիր վզկապավորների, գրական գեղարվեստական, Ֆիզկուլտ խաղերի և զվարճալիքների յերեկույթներ և ցերեկույթներ:

Զինվորական լազերի ոժադակությունը պիոներական լազերին լինելու յե.

1. Պիոներներին դաշտային հեռախոս անցկացնելու գործ սովորեցնելը:
2. Պիոներների հրաձգային խմբակներ կազմակերպելը և նրանց հետ սիստեմատիկ պարապելը:
3. Պիոներական լազերում ելեկտրական լուսավորություն անցկացնելը:
4. Լազերականների մեջ մերձացման յերեկոներ կազմակերպելը և բարեկամական, մտերիմ միջավայր ստեղծելը:

Վերոհիշյալ խնդիրները պիոներներին խոշոր չափով կնպաստեն սովորելու և ուսումնասիրելու բանակայինի կյանքն իր բազմակողմանի հետաքրքիր և ուսանելի կողմերով:

## 27. ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՈՂԱԿԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՐԱՊ-ՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

### I ՀԱԿՈՂԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Փոքրահասակ յերեխաները թղթից փոքրիկ թերթիկներ են կազմում ողերեվութաբանական դիտողություններին համար: Ահա ինչպես պետք է կատարել քամու ուսումնասիրությունը և ի՛նչ նշանակություն ունի այդ՝ քիմիական գազեր արձակելու ժամանակ: Այսպիսի ուսումնասիրություններ կատարելու համար, դպրոցական կամ լազերի արհեստանոցներում յերեխաների միջոցով նախապես պետք է պատրաստվեն ողերեվութաբանական պարզ գործիքներ (հողմաչափ): Այդ գործիքները պետք է դնել լազերի մի հարմար տեղում, վորտեղից յերեխաները կարողանան ուսումնասիրել գործիքի շարժումները, յեղանակի փոփոխման համեմատ:

Մեծահասակների համար պետք է կազմակերպվեն գործնական պարապմունքներ «հողմաչափի» ուսումնասիրության և գործարարման յեղանակի վերաբերյալ: Կարգալ հատուկ դրույցներ:

1. Պատերազմի վտանգի և ռազմական տեխնիկայի նվաճումները:
2. Թունավոր նյութերից պաշտպանվելու համար գոյություն ունեն միջոցներ (բացատրել հակազազի գործածության յեղանակը և թուլատրել յերեխաներին մնալ հակազազում վորոչ ժամանակ):
3. «Գազապատարանների ու ազգաբնակչության լայն մասսաների գազապաշտպանման միջոցների տիրապետումը» նյութերի շուրջ:

### II ԱՎԻՈՄՈՂԵԼԻՉՄ

Փոքրահասակների համար ավտոմոբիլային գործի վերաբերյալ դրվելիք հասկացողությունը պետք է սերտորեն կապել «թռչող խաղալիքներ» պատրաստելու և գործածելու հետ:

Գծվար թե մեզ մոտ գտնվեն այնպիսի յերեխաներ, վորոնք չգիտենան թղթից թռչող խաղալիքներ պատրաստել: Այս հանգամանքի վրա ռազմական դասատուները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն և այդ նպատակի համար ձեռք բերեն համապատասխան ին վենտար (մկրատ, գունավոր թուղթ, թել, ասեղ, ֆաներա, սոսինձ և այլն):



Ավտոմոբիլատր փորձարկում է իր մոդելը


Մեծահասակների համար, առանձնապես մի առ մի թվել թե ինչպիսի՛ աշխատանքներ պետք է կատարեն և ինչպիսի՛ մողերներ շինեն, դժվար է և աննպատակահարմար, քանի վոր այս բանի համար, նախ՝ համապատասխան դրականություն և մատերիալների տեսակներ չկան և, յերկրորդ՝ դրքով բացատրելով դժվար թե կարելի լինի պարապմունքներին շոչափելի ուղուտ տալ: Այս պակասը լրացնելու համար պիտուե՛րական լազերիները գործն այնպես պետք է կազմակերպեն, վոր լազերը յուրաքանչյուր հերթապահության, ապահովված լինի ավտոմոբիլային խմբակի ակտիվ պիտուե՛րներով և Պաշր-Ավիաքիմի ու այրոակումբի

կողմից լազերին կցված ավիոմոդելիզմի հրահանգչով:

Լազերային մասսայական ցուցադրական աշխատանքների մեջ հատուկ որերը և ժամեր պետք է հատկացվեն ավիոմոդելային մրցումների կազմակերպման գործին:

### III ՀՐԱՁԳՍՅԻՆ ՍՊՈՐՏ

Փոքրահասակների համար հրաձգային գործի կազմակերպման բովանդակությունը հիմնականում հանդիսանալու յեն Ֆիզիկուլտուրայի այնպիսի ձևեր, վորոնք յերեխայի մեջ դիպածգության, աչքի չափի և



Գերագուց հրաձիգը

կշռադատելու ունակություններ են զարգացնում: Այս նպատակի համար պետք է ոգտագործվեն գնդակի (տենիսի, փոքր ռետինե, խոկեյնի և փայտի փոքր ու կլոր գնդակներ) ողակի և փոքր փայտերի նետումները նպատակին, ինչպես որինակ՝ «սերսո», «տասնա-

խաղ», «արկան ձգել», «հարված՝ խնձորին», և այլն խաղեր: Այս հասակի յերեխաների համար հանձնարարելի յե նաև սեփական միջոցներով նետ ու աղեղ պատրաստելու և նրանով նշանառություն սովորելու գործը, սակայն այդ աշխատանքները պետք է կատարվեն դասատուի անմիջական ղեկավարությամբ և խորհրդով:

Մեծահասակների համար մանր տրամագծանի (գեգո) հրացանի և հատուկ պատրաստված նետ ու աղեղի միջոցով պետք է կազմակերպել նշանառության աշխատանքները: Բացի այդ, թեթեվացրած նոնակի և զանազան տեսակի գնդակներ նետելն, այս հասակի յերեխաների մեջ պետք է ավելի խորացնել և զարգացնել, մինչև անգամ այդ ուղղությամբ հատուկ պարպումունքի ժամեր սահմանելով: Հրաձգային, նետ ու աղեղի պարպումունքները կատարվելու յեն համաձայն Պաջը-Ավիաքիմի, «Պատանիների մեջ հրաձգային ըսպորտ զարգացնելու» կանոնադրության:

### IV ԿԱՊԸ

Փոքրահասակներին սովորեցնել Մորգե այրբեն դրոշակախոսությունը կարճ բառերով և խոսքերով, ինչպես որինակ՝ «յես գնացի», «նրանք յեկան», «վերադարձիր» և այլն:

Հետախուզական նշանների սովորեցում և գործնական խաղերի կազմակերպումն այդ նշաններով, խոչոր չափով հետաքրքրական և ուսանելի յե այս հասակի յերեխաների համար, ուստի և այս գործը լավ պետք է կազմակերպել:

Մեծահասակների համար կապի տեսակները հանդիսանալու յեն.

1. տեսողականը,
2. տեխնիկականը,
3. ձայնայինը,
4. մեխանիկականը,
5. սովորականը:

Տեսողական կապը. — Սովորեցնել Մորգե այրբեն-

նի, հաղորդման և ընդունման ձևերը դրոշակով: Ի՛նչ-  
պես արձանագրել հաղորդումը: Սովորել Մորզեի տա-  
ռերը և նրա հաղորդման ձևը: Ի՛նչպես դնել հետա-  
խուզական նշանները և ինչո՛ւ համար: Ի՛նչպես հաղոր-  
դել Մորզե այբուբենը գիշերը, լապտերներով:

Տեխնիկական կապ.—Ռադիո, հեռախոս, հեռա-  
գիր: Ծանոթանալ ռադիոհաղորդման և ռադիոընդու-  
նիչ ապարատին: Յուրաքանչյուր յերեխա պետք է սո-  
վորի թե ի՛նչպես է կատարվում ռադիական պայման-  
ներում դաշտային հեռախոսի հաղորդումը և ինչպիսի  
սարքավորում ունի այն:

Անհրաժեշտ է ուսումնասիրել և սովորել հեռախո-  
սային ապարատն ու նրա հաղորդման և ընդունման  
որենքները:

Չայնային կապ.— Մորզե այբուբենի վարժու-  
թյուններ՝ սուլիչով, զարկով և ձայնով: Չայնային  
կապի գործնական միջոցներից մեկն էլ, մանավանդ  
պիոներական լազերում, լեռնային շեփորի (սիգնալ)  
գործածությունն է: Այս հանգամանքը պետք է ոգտա-  
գործել վորպես ազդանշան ցերեկային տազնապների,  
քնելու, ճաշելու, խարույկի և արթնանալու ժամա-  
նակ:

Ծանոթություն.— Ա. Գիշերային տազնապների  
կազմակերպումը պիոներական լազերներում խստիվ  
արգելվում է վորպես հակաառողջապահական և հա-  
կամանկալարժակուն յերեվույթ:

Բ. Արգելվում է նաև տազնապներ կազմակեր-  
պել հեռու տարածություն վրա, ցերեկ ժամանակ:

Մեխանիկական կապ.— Մեխանիկական կապի հա-  
մար անհրաժեշտ է լազերում ունենալ համապատաս-  
խան միջոցներ (ավտոմորիլ, տրակտոր, հեծանիվ,  
մոտոցիկլետ): Մեխանիկական կապի տվյալ միջոցնե-  
րին ծանոթանալու և այն ուսումնասիրելու խնդիրը  
խիստ կարեվոր է և անհրաժեշտ:

Այս ուղղությամբ պետք է լազերային աշխատանք-  
ներում ներգրավել ավտոգորի կազմակերպությունը:

Սովորական կապ.— Աղավնի, շուն, ձի, մարդ:

Վերոհիշյալների ներգրավումը կապի մեջ պետք է հան-  
դիսանա լազերային յուրաքանչյուր պիոների, ողակի  
և կոլեկտիվի անմիջական աշխատանքներից մեկը:  
Մեզանում պիոներներ կան, վորոնք փոստատար ազավ-  
նիներ և ցեղական լավ շներ ունեն, իսկ գյուղա-  
կան պիոներները լավ ձի նստել և տեղական գամփո  
շներին լավ խնամել գիտեն: Այս ամենը լազերում  
լուրջ ուսումնասիրության առարկա պետք է դառնա,  
ու նրանց կազմակերպված խնամքն ու ոգտագործու-  
մը լավ հիմքերի վրա դրվի:

## V ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փոքրահասակների համար տեղագրության աշխա-  
տանքները հանդիսանում են՝ զանազան դիտողական  
խաղեր, վայրերի նկարագրություններ և պարզ միջա-  
վայրի պարզ գծագրություններ:

Մեծահասակների համար պետք է կազմակերպել  
բացատրական շայն ծանոթացում՝ «տեղագրության  
եյության ի՛նչ պայմաններում և ի՛նչ բանի համար  
գործածելու» խնդրի շուրջը:

Նրանց հասկացողություն պետք է տալ մասշտա-  
բից, աչքի տեսողությամբ հեռավորություն, անհարթ  
տարածություններ չափելուց և տվյալ միջավայրի  
(լազերի, գյուղի, գետի և այլն) զանազան մասերի  
գծագրությունից՝ թե տեսականորեն և թե գործնա-  
կանորեն:

Տեղագրության տեսակետից, լազերում արտանը-  
կարչության և լուսանկարչության աշխատանքների  
կազմակերպման վրա հատուկ ուշադրություն պետք է  
դարձվի:

## VI ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ, ՔՈՂԱՐԿՈՒՄ

Հետախուզության գործի վերաբերյալ, յերեխա-  
ներին լրիվ հասկացողություն տալու համար, պետք է  
բացատրել թե ի՛նչ է հետախուզությունը, ի՛նչպես են  
չարժվում հետախույզները, ի՛նչ է նրանց դերը, ի՛նչ-

պես պետք է քողարկվեն, ի՛նչպէս պետք է հետազոտեն հակառակորդին կամ նշված վայրը:

Գործնական պարապմունքների ընթացքում ռազմական դասատուն հսկելու յե, վոր վերը նշված խնդիրները յերեխաների կողմից կատարվեն: Քանի վոր այս հասակի յերեխաների մեջ այդ աշխատանքները հաճախ գրեթե խաղերի միջոցով են կազմակերպւում և նրանց համար չափազանց սիրելի դրադմունք են, ուստի լադերային պայմաններում այդ աշխատանքներն ավելի պետք է խորացվեն և լավ հիմքերի վրա դրվեն: Առանձնապէս քողարկման խնդիրը դասատուի լուրջ ուշադրության առարկան պետք է դառնա:

## 28. ՌԱԶՄԱԿԱՆ ԽԱՂԵՐ

### ԴՐՈՇԱԿԻ ՀԵՏԱԽՈՒՂՈՒԹՅՈՒՆ

Խաղացողներ՝ 10-80 հոգի. դաշտ-անտառ

Այս խաղին կարող են մասնակցել 2 կուլեկտիվ կամ ողակ: Սաղացողների թիվը կարող է միահավասար չլինել. յեթե խաղին մասնակցող կուլեկտիվներից մեկը 4 հոգով ավելի կամ պակաս է, խաղի արդյունքի վրա բացասական ազդեցություն գրեթե չի թողնում:

Սաղը ղեկավարում է դատավորը, նա խաղին մասնակցող կուլեկտիվներից չպետք է լինի:

Դատավորը կուլվարների հետ միասին խաղավայր են ընտրում և սահմանադժեր նշանակում:

Կուլվարներից մեկն իր կուլեկտիվով ներկայանում է դատավորին, վերցնում է նրանից փոքր դրոշակ կամ պիոներական վզկապ (դրոշակը կամ վզկապը չփոխելու համար հատուկ նշան պետք է ունենա) և իր կուլեկտիվի հետ գնում է այդ դրոշակը թաղցնելու: Յերբ տվյալ կուլեկտիվն այնքան է հեռացել դատավորից և հակառակորդ կուլեկտիվից, վոր նրանք իրենց այլևս չեն տեսնում, սկսում է առաջ շարժվել հետախուզական նշաններ դնելով անցած ճանապարհին:

Յերբ արդեն այնպիսի մի տեղ է հասել, վորտեղ կարելի յէ դրոշակը թաղցնել, դադարում են հետախուզական նշաններ դնելուց և վերջին հետախուզական նշանից 3 մետր հեռավորության վրա թաղցնում են դրոշակը: Այն կարելի յէ թաղցնել ծառի վրա, քարերի արանքին, թփերի մեջ և այլն:

Դրոշակը պահելուց հետո տվյալ կուլեկտիվը լրիվ կազմով անմիջապէս վերադառնում է դատավորի մոտ:

Այս դեպքում դատավորն ազդանշան է տալիս և սղմում յերկվայրկյանացույցը (սեկունդոմեր): Յերկրորդ կուլեկտիվն ազդանշանից հետո անմիջապէս գնում է թաղցրած դրոշակը գտնելու:

Սաղի նպատակն է՝ ամենակարճ ժամանակամիջոցում թաղցրած դրոշակը գտնել և բերել դատավորին:

Սաղը շահում է այն կուլեկտիվը, վորն ամենաքիչ ժամանակամիջոցում գտնում է թաղցրած դրոշակը և հանձնում դատավորին:



Նետ և աղեղի խմբակը պարապմունքի ժամին

1. Դրոշակը թաղցնելու ժամանակ դատավորը կոլեկտիվի հետ չի գնում. նա կոլեկտիվի ներկայութեամբ դրոշակի վրա նշան է դնում և ամբողջ ժամանակ մնում այնտեղ, վորտեղից խաղն սկսվում է, բացառութեամբ այն դեպքի, յերբ դրոշակը պահելու տեղի վերաբերյալ վիճարանություն է ծագում:

2. Դրոշակը թաղցնելու համար ժամանակ չի պահվում, ժամանակը հաշվի յե առնվում այն դեպքում, յերբ կոլեկտիվը գնացել է դրոշակը փնտրելու և վերադարձնելու դատավորին:

3. Հետախուզական վերջին նշանից հետո 3 մետրից ավելի հեռու թաղցրած դրոշակն որինական չի համարվում, իսկ յեթե այդ տարածութեան մեջ այնպիսի առարկաներ կան, վորոնք 3 մետրից ավելի բարձր են, այդ առարկաների վրա դրոշակը կարելի յե թաղցնել:

4. Դրոշակը դատավորին հանձնելիս, տվյալ կոլեկտիվը դրոշակի հետ միասին լրիվ կազմով պետք է ներկայանա դատավորին, հակառակ դեպքում խաղը վոչ վոքի չի համարվում:

5. Դրոշակի թաղցնելն ու փնտրելը կոլեկտիվները կատարում են հերթականութեամբ:

ՀԵՏՔԵՐՈՎ

Խաղին մասնակցում են յերկու ողակ՝ հավասար թվով խաղացողներով:

Խաղը ղեկավարում է կոչվարը կամ դատավորը:

Դատավորը յերկու ողակավարի վրա վիճակ է գցում և վորոշում խաղն սկսող կողմը:

Յերկու ողակավարը իրենց ողակով ներկայանում են դատավորին, դատավորը նրանց ներկայութեամբ վորոշում է «չեզոք գոտին», ստուգում է խաղացողների թիվը և խաղն սկսելու ազդանշան է տալիս:

Ազդանշանից հետո խաղն սկսող կողմի ողակավարն իր ողակի հետ միասին հեռանում է, ճանապարհ

հին հետախուզական նշաններ դնելով, կամ մանրած թուղթ, կամ թեփ թափելով: Յերբ թեփը վերջանում է, կամ մոտակա վայրում թաղնվելու հնարավորություն կա, ողակավարն իր ողակի հետ միասին թաղնվում է:

Վորոշված ժամանակամիջոցը (20-30 րոպե) լրանելուց հետո դատավորը հետապնդող ողակին առաջ շարժվելու ազդանշան է տալիս, և հետապնդող կողմը հետքերի ուղղութեամբ զգուշորեն առաջ է շարժվում դեպի թաղստոցը:

Խաղի նպատակն է՝ գտնել հակառակորդի թաղստոցը և նրա ողակավարին գերի վերցնելով՝ «չեզոք գոտի» բերել:

Հետապնդողները կարող են առանձին-առանձին խփել (ձեռք կպցնել) թաղկացողներին, յերբ նրանց նկատում են. թաղկացողներից վորքան շատ խփվեն, նրանց կողմի ողակավարին գերի վերցնելու գործն այնքան հեշտանում է: Խփվածները համարվում են մեռածներ և չեն մասնակցում խաղին մինչև կրկին վերջակվելը:

Թաղկացողներն ամենից առաջ իրենց քողարկելու խնդիրը պետք է լավ կատարեն. նրանք հետապնդողներին խփելու իրավունք չունեն: Յերբ թաղնվողները նկատում են, վոր հետապնդողներն իրենց տեղը պաշարել են, թաղստոցից դուրս են գալիս և հավաքվում ողակավարի շուրջը, պաշտպանելով նրան գերի վերցնելուց: Թաղնվողները քանի դեռ չեն հասել ողակավարի մոտ, կարող են խփվել հետապնդողներից, իսկ յերբ հասնում են, այլևս դատարում է խփվելու գործը: Յերբ յերկու ողակները իրար վրա յեն հարձակվում, խաղը շահում է այն կողմը, վորի խաղացողները կարողանում են հակառակորդի ողակավարին գերի տանել:

Խաղը շահած է համարվում նաև այն դեպքում, յերբ թաղնվողների կեսից ավելին իրենց ողակավարի հետ առանց խփվելու հասնում են «չեզոք գոտի» նույն ճանապարհով, վորտեղից յեկել է յին:

Դատավորն ամբողջ խաղի ընթացքում հետևում է խաղին և սուլիչով կարգադրություններ անում: Նրա վորոշումներն որենք են համարվում և խաղի ընթացքում վիճարանության առարկա չեն: Վեճերը լուծվում են խաղի վերջում՝ դատավորի և ողակավարների մասնակցութեամբ:

Յուրաքանչյուր խաղից հետո ողակների դերերը փոխվում են, անկախ խաղի շահումից:

### ԲԵՐԴ

Խաղացողներ՝ 10-20 հոգի. խաղադաշտ անտառ:

Խաղացողները բաժանվում են յերկու հավասար մասերի, ապա վորոշում են, թե վո՛ր խումբն է լինելու խաղ սկսողը, վո՛րը, բերդի պաշտպանը:

Դաշտի կենտրոնում, վորպես բերդ, մի քար է դրվում կամ մի փոս փորվում: Խաղն սկսելիս պաշտպան խումբը հավաքվում է բերդի շորս կողմը և մի քանի մետր հեռավր հետապնդում հարձակվող կողմի խաղացողներին:

Պաշտպանողների նպատակն է՝ հետապնդել և խփել հարձակվողներին. միևնույն ժամանակ, հարկ յեղած դեպքում նահանջում են դեպի բերդը՝ նեղացնելով պաշտպանման դիժը:

Հարձակվողների պարտականությունն է՝ ինչ դրժով ել լինի, դրավել բերդն այն պայմանով, վոր դրավողը չխփի պաշտպանվողների կողմից: Խփելու դեպքում խաղացողը դուրս է գալիս խաղից, մինչև խաղը նորից սկսվելը: Հարձակվողները շատ հաճախ դանազան միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի պաշտպանողներին հրապուրեն և ասպարեզ քաշեն: Յերբ պաշտպանողները բերդից արդեն բավական հեռացել են, մանավանդ յերբ մի պաշտպանից մյուսի միջև բավական յայն տարածություն կա, հարձակվողներից մեկն ու մեկը արագ վազելով կարում է այն դիժը, վորը գտնվում է պաշտպանողի և բերդի միջև: Խաղի մեջ կատասենւթյան պիսի դեպքեր, վոր մի հարձակվողը միանգամից կարող է Յ-4 անգամ իսկ ավելի

պաշտպանողներ կտրել, յերբ նա առանց խփվելու կտրել անցնել և պաշտպանողների և բերդի միջև ընկած տարածությունը:

Այն դեպքում, յերբ հարձակվողներից մեկն արագ թափով կտրում է պաշտպանողի և բերդի միջև ընկած տարածությունը և այդ վազքի ընթացքում խփվում է կտրվող խաղացողից կամ նրա կողմի խաղացողների մեկի կողմից, դատավորը նայելու յե կտրված գժի ուղղութեամբ, յեթե գիժը լրիվ չափով կտրված է, կտրողն ազատվում է խփվելուց, յեթե վո՛չ՝ համարվում է կտրված:

Պաշտպանվող կողմի խաղացողներն աշխատում են ձեռքով խփել հարձակվողներին. խփվածները համարվում են կտրված և այդ խաղին չեն մասնակցում մինչև խաղը նորից սկսվելը: Յեթե պաշտպանվողները բոլոր հարձակվողներին խփում են, այն դեպքում դերերը փոխվում են: Միայն այսպիսի դեպքերում շահում չի արձանագրվում:

Յերբ հարձակվողներից մեկն առանց խփվելու վտաքը դրեց բերդի վրա, սվյալ կողմը մի կեա շահում է և նորից մնում հարձակվողի դերում:

Հինգ կեա շահող կողմը խաղը տանում է:

Ծանոթություն.— Թե՛ Ֆիզկուլտուրայի և թե՛ ռազմական աշխատանքների բնագավառում առողջապահական և բժշկական խնդիրների վերաբերյալ յայն ծանոթություն արված է այս դրքի առողջապահական մասում: Ֆիզկուլտ և ռազմական դաստոռներն իրենց աշխատանքների ընթացքում, այդ խնդիրները պետք է կիրառեն և հարկ յեղած դեպքում դիմեն բժշկի խորհրդին:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱՐ

- 1.—Յա. Մմիրնով.— «ԽՍՀՄ պատանի պիո-  
ներների ռազմա-քաղաքական դաս-  
տիարակությունը» պետհրատ 1933 թ.  
գինը. . . . . 10 կ.
- 2.—Լ. Լեոնտյեվ.— «Հրաձգային խմբակն ու  
նրա կառուցվածքը» 1930 թ. գինը 12 կ.
- 3.—Ռոզանով.— «Ի՞նչ և ի՞նչպես պետք է անել  
մոդելիստների խմբակներում» . . . . . 10 կ.
- 4.—Ս. Բելով.— «Ի՞նչպես սովորել ճիշտ հրա-  
ցան կրակելը . . . . . 10 կ.
- 5.—Վ. Յեյտլին.— «Աղավնիները ռազմական  
ծառայության մեջ» . . . . . 10 կ.
- 6.—Վ. Յագիկով.— «Շունը ռազմական ծառա-  
յության մեջ» . . . . . 15 կ.
- 7.—Ի. Կուպրիյեվ.— «Փոստային աղավնապա-  
հության համառոտ ձեռնարկ՝ ըսկըս-  
նակ սիրողների համար» . . . . . 15 կ.
- 8.—Յա. Ֆիզման.— «Քիմիան Ժողովրդական  
տնտեսության և պաշտպանության  
մեջ» . . . . . 15 կ.
- 9.—Ի. Խամիլիս.— «Պաշը-Ավիաբիմի պատա-  
նի բարեկամների Հ. Ո.Պ.-ի ծրա-  
դիրը» 1933 թ.
10. «Պաշը-Ավիաբիմի պատանի բարե-  
կամների կապի խմբակների ծրագիրը»  
1933 թ.
- 11.—Կրիմով.— «Պաշը-Ավիաբիմի պատանի բա-  
րեկամների հրաձգային խմբակի ծը-  
րագիրը» 1933 թ.

Յ Ա Ն Կ.

I. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՍ

1. Լազերում յերեխաները պետք է հանգստանան և առողջանան . . . . .	5
2. Պատրաստ դուրս գալ լազեր . . . . .	6
3. Լազերը պետք է պատրաստ լինի պիտանքներին ընդունելու . . . . .	8
4. Լազերի շենքերի ընտրությունը . . . . .	10
5. Լազերի սանիտարա-տեխնիկական սարքավորումը . . . . .	13
6. Լազերի կանաչագարդումը . . . . .	15
7. Լազերի սանիտարական ուժի կամ սանմիկրոմը . . . . .	15
8. Մասսայական լազերի աշխատանքի ու հանգստի ուժի . . . . .	21
9. Լազերի հերթապահ կալեկտիվի որվա ուժի . . . . .	30
10. Ծնողների այցելությունը . . . . .	32
11. Կուլտ-սանիտարական աշխատանքները լազերում . . . . .	33
12. Աշխատանքի որինակելի բովանդակություն . . . . .	35
13. Սնունդը լազերում . . . . .	42
14. Լազերականի հագուստը . . . . .	47
15. Լազերի բժշկի ֆունկցիաները . . . . .	47
16. Լազեր-սանատորիա . . . . .	51

II. ՖԻԶԿՈՒԼՏ ՅԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԱՍ

17. Ֆիզիքական դաստիարակության դրվածքը պիտանքական լազերներում . . . . .	55
18. Առավոտյան լիցֆային վարժություններ կատարելը . . . . .	56
19. Ֆիզկուլտ դասերի կանոնավոր կազմակերպումը . . . . .	58
20. Շարժական և սպորտ խաղերի կազմակերպումն ու կատարումը . . . . .	58
21. Սպորտի զարգացումը . . . . .	60
22. Մասսայական միջոցառումների և եֆկուրսիաների ժամանակ ֆիզկուլտ ելեմենտների անցկացումը . . . . .	62
23. Պիտանքական հասակին համապատասխանող դպրոցական խմբերի նորմատիվ ցուցանիշները . . . . .	64
24. Ֆիզկուլտ դասերի որինակելի ծրագիր . . . . .	66
25. Շարժական և սպորտ խաղերի տեսակները . . . . .	78
26. Ռազմական աշխատանքները պիտանքական լազերներում . . . . .	92
27. Պիտանքական ողակի ռազմական պարապմունքների որինակելի ծրագիր . . . . .	96
28. Ռազմական խաղեր . . . . .	102



«Հասկայես նրան, այդ յերի-  
սասարդութեանն է վիճակված վեր-  
ջացնել, ավարտել կոմունիզմի  
գործը, հասկայես նրան է դեռ-  
յեկն վիճակված պայտար մղել  
կոմունիզմի համար, յեկ նա այդ  
պայտարին պէտք է դիմավորի ա-  
մուր, առողջ, պողպատե նլարդե-  
րով յեկ յերկաթե մկաններով»:  
ԼԵՆԻՆ

# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԼԱԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ

## Մ Ա Ն Մ Ի Ն Ի Մ Ո Ւ Մ

Հագեր վայրի սանմխինիմում	Խաղճրայա- րակի սանմխինիմում	Ննջարանի սանմխինիմում	Ճաշարանի սանմխինիմում	Խոհանոցի սանմխինիմում	Զուգարանի սանմխինիմում
1	1	1	1	1	1
2	2	2	2	2	2
3	3	3	3	3	3
4	4	4	4	4	4
5	5	5	5	5	5
6	6	6	6	6	6

«Անեցնել բանվորների այնպիսի մի  
առողջ ու կենսուրախ սերունդ, վորն  
ընդունակ լինի Խորհրդային Յերկրի  
հզորութունը պատշաճ բարձրության  
հասցնելու յեկ բեմամու հարձակում-  
ներից կրճեով պատշպանելու այն»:  
ՍՏԱԼԻՆ



### ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՌԵԺԻՄ

Թ Ի Վ, Ժ Ա Մ

Բ Ա Ղ Ն Ի Բ

Սպորտակեղևներ լվալ

Գլուխը լվալ

Անձողներ գուրս բերել

Հատակը լվալ


Սանիտ. ոք

### Մ Ե Ր

Նվաճումները

Բ ա ց Կ ր Ը

## ԼԱԳԵՐԻ ՈՐՎԱ ՌԵԺԻՄԸ



### ՍՈՑՄՐՑՄԱՆ ՏԱԽՏԱԿ

### Ա Յ Ս Ո Ր

Արևային վաննա

Լ " Գ

Ողային վաննա

Մ Ե Ն Յ Ո Ւ Ի


ՀԵՏՏԵՐՈՐՈՒԹՅՈՒՆ

Դիտարկի տախտակ  
Ա Գ Գ Կ ր Ը Կ ր Ը

ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե  
աշխատ. Արև. վան. Լ ո Գ  
Ա.Գ.Գ. կուլ. Ա.Գ.Գ. կուլ. Ա.Գ.Գ. կուլ.

Ի՞նչ պետք է կարգալ առողջապա-  
հու թխան գծով

Հարց ու պատասխանի տախտակ  
Հ ա Բ Գ Գ ստասխան



ՀԱՅԱՍՏԱՆԻ Ֆ.Կ.Գ.Խ. ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Թ Մ Բ Յ Բ	0	I	II	III	IV	V	VI	VII	XIII	IX	
Քաղաք	—	—	—	1/2 կիլոմետր 8 բոպեյում	1 կիլոմ. 16 բոպե (վայրում)	2 կիլոմ. 30 բոպե (վայրում)	Տղաներ՝ 3 կիլո.—42 բոպե աղջիկներ՝ 2 » —28 » (վայրում)	Տղաները՝ 3 կիլո. 36 բոպե աղջիկները՝ 3 » 42 բոպե (վայրում)	Տղաները՝ 5 կիլո. 55 բ. աղջիկները՝ 3 » 39 » (վայրում)	Տղաները՝ 5 կիլո. 3 ժ. աղջիկները՝ 5 » 1 »	
Վազք	—	Մի բոպեյում 180-190 քայլ արագությամբ հաշվով վազել 15 վայրկյան (տարածությունը նշանակություն չունի)	Վազել նույն չափով (տեմպով) 30 վայրկյան	Կարճ ցատկապարանով վազել 20 քայլ (վազողը ցատկապարանը անընդհատ պատում է և ամեն մի քայլափոխին վտարելի տակ կից անց է կացնում)	Վազել 40 մետր 10 վայրկյանում (ցածր ստարտից)	Նույնը 50 մետր տղաներ — 12 վարկ. աղջիկներ — 14 »	Նույնը 60 մետր տղաներ՝ 11 վ. աղջիկներ՝ 12 վ.	Նույնը՝ տղաները՝ 10 վ. աղջիկները՝ 11 վ.	100 մետր՝ տղաները՝ 15,5 վ. աղջիկները՝ 17,0 վ.	Նույնը՝ տղաները՝ 14,5 վ. աղջիկները՝ 16,0 վ.	
Հավասարակշռություն	Կարողանալ անցնել շվեդական նստարանի վրայով (յերեսի աստիճանի ամբողջ յերկարությունը)	Կարողանալ քայլել դետեկան նստարանի վրայով (սովորական, պարզ դերան)	Կարողանալ քայլել (բարձրանալ) թեք դրած շվեդական նստարանի վրայով (նստարանի վերևի ծայրը դետեկան 75 սմ. բարձր և անհավորվում թեքություն համար)	Անցնել բումբի վրայով բարձրությունը դետեկան 60 սմ. անցնելու տարածությունը՝ 3 մետր	Նույնը բարձրություն—70 սմ. տարածություն—3 մետր	Նույն բարձրություն և տարածություն 20 սմ. լայնություն և 20 սմ. բարձրություն ունեցող խողովակի վրայից (դրված է դերանի վրա)	Նույն բարձրություն, տղաներին՝ 100 սմ. աղջիկներին՝ 90 սմ. անցնել ծանրություն վերցրած. քաղաք բարձրություն համար 3 կիլո. աղջիկներին՝ 2 կիլո.	Նույնը բարձրություն. տղաներին՝ 120 սմ, ծանրություն 5 կ. աղջիկներին՝ 110 սմ., ծանր. 3 կ.	Չմուշկներ կարողանալ կանգնել սառուցի վրա և սահել առաջ	Կատարողործել բումբի վրայի վազողությունները	
Նետուճներ	Կարողանալ վալեյ-բոլի գնդակը 4 անգամ վեր դնել խփել և բռնել (ամեն անգամին բռնել)	Փոքր գնդակով խփել մեկ քառակուսի մետրանոց թիւրխին, հեռավորությունը 3 մետր. թիւրխը՝ աչքերի բարձրության մակարդակով և 6 նետուճից 4 դիպչել (ցանկացած ձևերով)	Նույնը՝ աջ ձեռքի համար 4 մ. ձախ » » 3 » (6-ակտն նետում)	1 քառ. մետրանոց թիւրխի 6 մետրից ցանկացած ձևերով 5 նետում. տղաները՝ 3 դիպչել, աղջիկները՝ 2 դիպչել	75 սմ. քառ. թիւրխի աջով և ձախով 5-ակտն նետում տարածություն—աչի համար 6 մ. ձախի համար 5 մետր՝ տղաները՝ 3 դիպչել ամեն ձևերին, աղջիկները՝ 2 դիպչել ամեն ձևերին	Նույն գնդակով 6 մետր լայնություն միջանցքով, լայնությունը 4-ակտն դիպչել. հեռավորությունը. տղաները՝ 20 մետր աղջիկներ՝ 15 »	Նույն հեռավորության 4 մետր միջանցքով. բացի դրանից՝ 50 սմ. քառ. թիւրխի 6-ակտն նետում, վերջից 4-ակտն դիպչել. հեռավորությունը. տղաները՝ աջով 7 մ, ձախով՝ 5 մ. 50 սմ., աղջիկները՝ աջով 6 մ, ձախով 5 մ.	Նույնը. տղաները՝ 85 սմ. աղջիկները՝ 70 սմ. Նույնը. տղաները՝ 2 մ. 5 սմ. աղջիկները՝ 1 մ. 70 սմ.	Նույնը. տղաները՝ 1 մ. աղջիկները՝ 80 սմ. Նույնը. տղաները՝ 2 մ. 80 սմ. աղջիկները՝ 2 մ. 25 սմ.	Նույնը 500 դրամ. տղաները՝ 35 մետր աղջիկները՝ 25 »	Նույնը 60 դր. տղաները՝ 35 մետր աղջիկները՝ 25 »
Ցատկումներ	—	Կարողանալ 25 սմ. բարձրությունից անաղմուկ վայր ցատկել	Չու. քաշելով բարձրություն 40 սմ. փափուկ իջնելով դետեկան	Չու. քաշելով բարձրություն 50 սմ. տեղից, յերկարությունը՝ 80 սմ.	Չու. քաշելով բարձրություն 60 սմ. տեղից, յերկարությունը՝ 100 սմ.	Չու. քաշելով բարձրություն 80 սմ. աղջիկներ՝ 65 սմ. զուգաշելով յերկարություն. տղաներ՝ 2 մ. աղջիկներ՝ 1 մ. 30 սմ.	Նույնը. տղաները՝ 85 սմ. աղջիկները՝ 70 սմ. Նույնը. տղաները՝ 2 մ. 5 սմ. աղջիկները՝ 1 մ. 70 սմ.	Նույնը. տղաները՝ 1 մ. աղջիկները՝ 80 սմ. Նույնը. տղաները՝ 2 մ. 80 սմ. աղջիկները՝ 2 մ. 25 սմ.	Նույնը. տղաները՝ 1 մ. 10 սմ. աղջիկները՝ 85 սմ. Նույնը. տղաները՝ 3 մ. 80 սմ. աղջիկները՝ 2 մ. 50 »	Նույնը. տղաները՝ 1 մ. 20 սմ. աղջիկները՝ 90 սմ. Նույնը. տղաները՝ 4 մ. աղջիկները՝ 3 » —	
Իսկուհներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	
Սպորտներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	
Առողջապահական մարմնամարզություն կոմպլեքս	—	Կարողանալ ընդունել ճիշտ դրություն, համաձայն շարժումների հրահանգի	Կարողանալ կատարել Ֆիդիկոլտորպե. (բացատրած, ցույց տված և սովորած)	Կատարել Ֆիզիկոլտորպե (3 վարժությունից, միայն ցույց տված և սովորած)	Կազմել բացատրել, ցույց տալ և անցկացնել իր խմբի հետ 3 վարժությունից բաղկացած Ֆ.Կ. բոպե	Ցույց տալ և անց կացնել առավոտյան լիցքային մարմնամարզություն. դիտենալ բնական ֆակտորներից սպորտի կանոնները	Կազմակերպել և անցկացնել իր խմբի հետ մի վարժությունից բաղկացած Ֆ.Կ. (լիցք. տեխնիկա և կիրառել անհատական ու զարգացված սպորտի սանիտարական և առողջապահական որոնքները)	Ֆ. Կ. դաստիարակության կարողանալ դրություն մի վրեն ֆիզիկական պարամպունը (լիցք. տեխնիկա և կիրառել անհատական ու զարգացված սպորտի սանիտարական և առողջապահական որոնքները)	Կարողանալ ոգտվել այս ծրագրից և հասկանալ վարժությունները	Կազմել մի 6-րդ խումբ և ավանդույթները	
Սողում և ջրանցներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	
Հակագազ	—	—	—	—	—	—	—	—	—	—	
Մազկում	—	Կարողանալ ցանկացած ձևով մազկումով անցնել 75 սմ. բարձ. դրած դերանի մի կողմից մյուսը	Նույնը՝ 85 սմ.	Նույնը 100 սմ.	Պարան, ցանկացած ձևով տղաները 1 1/2 մետր աղջիկները 1 մետր	Նույնը. տղաները՝ 2 մ. աղջիկները՝ 1 1/2 մ.	Նույնը. տղաները՝ 2 1/2 մ. աղջիկները՝ 1 1/2 մ.	Նույնը. տղաները՝ 3 մ. աղջիկները՝ 2 մ.	Նույնը. տղաները՝ 3 1/2 մ. աղջիկները՝ 2 1/2 մ.	Նույնը. տղաները՝ 4 մ. աղջիկները՝ 3 մ.	



«Ազգային գրադարան»



NL0273026

